

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝
Գագիկ Հարությունյան
Վահե Ստեփանյան
Վոլոդյա Հովհաննիսյան
Վալերի Պողոսյան
Առուշան Հակոբյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳՐԻ

1(75)
2015

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- * ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽԼԴԻՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ Ավետիք Հարությունյան5

• ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1161-1176)

- * 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1161 - 4 սեպտեմբերի 2014թ.)16
- * 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1162 - 4 սեպտեմբերի 2014թ.)20
- * ՔԱՂԱՔԱՅԻ ԳԱՅԱՆԵ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426²-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ ԵՎ 426⁴-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1163 - 16 սեպտեմբերի 2014թ.)24
- * 1951 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՍԳԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1164 - 16 սեպտեմբերի 2014թ.)32
- * 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՐՏԻՍՅՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1165 - 16 սեպտեմբերի 2014թ.)37
- * 1997 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍՏՆԱՆՏԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ «ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԻՐԵՆՅ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԵՏԱԳԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1166 - 16 հոկտեմբերի 2014թ.).....41

* ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1167 - 14 հոկտեմբերի 2014թ.).....45

* 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1168 - 14 հոկտեմբերի 2014թ.).....55

* 1968 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՓՐԿԵԼՈՒ, ՏԻԵԶԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1169 - 28 հոկտեմբերի 2014թ.).....59

* 1967 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԼՈՒՄՆԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏԱՁՈՏՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՄՈՒՄՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԿՋՐՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1170 - 28 հոկտեմբերի 2014թ.).....63

* 1972 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1171 - 28 հոկտեմբերի 2014թ.).....67

* 1979 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԼՈՒՄՆԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՐԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1172 - 28 հոկտեմբերի 2014թ.).....71

* 1975 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՅՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1173 - 28 հոկտեմբերի 2014թ.).....74

Ավետիք Հարությունյան

ԼՂՀ Նախագահի աշխատակազմի աշխատակից,
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական ու իրավական պետության կառուցման անբաժանելի տարրերից մեկը ենթադրվում է զարգացած սահմանադրական արդարադատության առկայությունը, իսկ վերջինս մասնագիտացված մարմնի կողմից իրականացվող հատուկ գործունեության տեսակ է, որի արդյունքում միս ու արյուն են դառնում սահմանադրական արժեքները և որպես վերջնարդյունք՝ սահմանադրական արդարադատության իրականացման շնորհիվ ստեղծվում են սահմանադրականության հաստատման նախադրյալներ:

Սահմանադրական արդարադատությունը ԼՂՀ-ի համար տակավին նոր երևույթ է և ունի ընդամենը հինգ տարվա պատմություն: Տվյալ ժամանակահատվածը մի կողմից շատ կարճ է ոլորտում արմատական հաջողություններ արձանագրելու համար, իսկ մյուս կողմից էլ այս ընթացքում հնարավոր էր համակարգային ձևով ու հետևողականորեն մոտենալ այն հիմնախնդիրներին, որոնք խոչընդոտում են ոլորտի զարգացմանը և որոնց մի մասին փորձ կարվի անդրադառնալ սույն հոդվածի շրջանակներում:

Որպեսզի ավելի առավել ամբողջական ներկայացվի գործող սահմանադրական արդարադատության համակարգը, վերլուծենք այդ ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը, վեր հանենք դրական ու բացասական կողմերը և առաջարկենք համակարգի կատարելագործման ուղիներ Նախ. անհրաժեշտ ենք համարում հակիրճ անդրադառնալ սահմանադրական արդարադատության ինստիտուտի ձևավորման ու կայացման նախադրյալներին:

Այսպես, ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատություն իրակա-

նացնում է ԼՂՀ Գերագույն դատարանը, որի գործունեությունը կանոնակարգված է ԼՂՀ Սահմանադրության 6-րդ գլխով, ԼՂՀ դատական օրենսգրքով, «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքով, ինչպես նաև ներքին իրավական ակտերով:

ԼՂՀ Սահմանադրության 140 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2009թ. հունիսի 1-ից, իսկ 113 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գերագույն դատարանը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից: ԼՂՀ Սահմանադրության ընդունումից (10.12.2006թ.) հետո մոտ երկուսուկես տարի ժամանակ էր տրվել իրականացնելու նախապատրաստական աշխատանքներ սահմանադրական արդարադատության ոլորտը կարգավորող օրենքի ընդունման և այլ անհրաժեշտ պայմանների ապահովման համար: Քննարկվող ոլորտը կարգավորող «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքն ընդունվել է 2009թ. մայիսի 27-ին, որով էլ ավարտվել է սահմանադրական արդարադատության մեկնարկի համար պահանջվող նախադրյալների ապահովման գործընթացը:

Եթե փորձենք փուլերի բաժանել ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության արմատավորմանն ուղղված հիմքերը, ապա կստանանք հետևյալ պատկերը.

- ԼՂՀ Սահմանադրության ընդունմամբ սահմանադրական արդարադատության ինստիտուտի ներդրում (2006թ.),
- տվյալ ոլորտը կանոնակարգող իրավական ակտի՝ «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի ընդունում (2009թ.),
- առաջին որոշման ընդունմամբ սահմանադրական արդարադատության գործընթացի մեկնարկ (2009թ.),
- սահմանադրական արդարադատության լճացում կամ ճգնաժամ,
- սահմանադրական արդարադատության ոլորտում առկա հիմնախնդիրների ուսումնասիրում և դրանց լուծման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացում:

Ձևավորման օրվանից մինչ օրս սահմանադրական արդարադատության առջև ծառայած են մի շարք հիմնախնդիրներ, որոնք արգելակում են վերջինիս բնականոն զարգացումը: Դրանք կարելի է պայմանականորեն դասակարգել 2 խմբի՝

- կառուցակարգային,
- գործառութային կամ բովանդակային:

Սահմանադրական օրենսդիրը, Սահմանադրությամբ ԼՂՀ-ում առաջին անգամ ներդնելով սահմանադրական արդարադատության ինստի-

տուտը, դրա գործառնությունները վերապահել է մինչ այդ գործող ԼՂՀ բարձրագույն դատական մարմնին՝ Գերագույն դատարանին¹: ԼՂՀ Սահմանադրության 6-րդ գլխի վերլուծությունը միանշանակորեն վկայում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը երկակի գործառնությո է իրականացնում. մի կողմից սահմանադրական արդարադատություն, իսկ մյուս կողմից վճռաբեկության կարգով վերանայում է ստորադաս ատյանների դատական ակտերը: Մեր խորին համոզմամբ, այս առումով Սահմանադրության մեջ Գերագույն դատարանի առաքելությունը ձևակերպված է աղավաղված ձևով, որից էլ հետևում է գործունեության երկակիությունը: Վերջինս հիմնականում պայմանավորված է դատական սահմանադրական վերահսկողության մոդելի ընտրության հարցով, որը գործառնությունների առումով նման է եվրոպական մոդելին, իսկ կառուցվածքի առումով առավել շատ ընդհանրություններ ունի ամերիկյան մոդելի հետ, քանի որ սահմանադրական արդարադատության իրականացումն ու վճռաբեկ բողոքների քննությունն իրականացվում է ԼՂՀ գերագույն դատարանի կողմից, այլ ոչ թե դրա պալատների կողմից առանձին-առանձին: Ուսումնասիրելով սահմանադրական վերահսկողության ամերիկյան ու եվրոպական մոդելները և դրանց հետ համադրելով գործող համակարգը, կարելի է ասել, որ ԼՂՀ-ում որդեգրվել է սահմանադրական վերահսկողության խառը (հիբրիդային) ձևը, որի տիպական օրինակներ են Հունաստանը, Բրազիլիան և այլն²:

Մասնագիտացված կամ կենտրոնացված դատական սահմանադրական վերահսկողության համակարգը ենթադրում է այն իրականացնող

¹ Այս կապակցությամբ տեղին է արձանագրել հետևյալը. ԼՂՀ Սահմանադրության 113 հոդվածի 3-րդ մասում և ԼՂՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված է, որ «Գերագույն դատարանն ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը», իսկ ահա «Սահմանադրական արդարադատության մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում էլ ամրագրված է, որ «Սահմանադրական արդարադատություն իրականացնող բարձրագույն մարմինը Գերագույն դատարանն է, որն ապահովում է ԼՂՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը» (ընդգծումը մերն է - Ա.Հ.): Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս ԼՂՀ Գերագույն դատարանին վերապահված կամ ԼՂՀ Սահմանադրության բովանդակությունից բխող «Սահմանադրության գերակայությունն ապահովելու» իրավասությունը հիշյալ օրենքում ավելացվել է ևս մեկը՝ անմիջական գործողությունը, որը չի համապատասխանում Սահմանադրության իրավակարգավորմանը և փոխառված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքից:

² Клишас А.А. Конституционный контроль и конституционное правосудие зарубежных стран: Автореф. дис. ... д-ра юрид. наук. Спец. 12.00.02. – М.: Моск. ун-т. МВД РФ, 2007. – 50 էջ:

յուրահատուկ կազմակերպական կառուցվածք, որոնցից մեկն է հանդիսանում Գերագույն դատարանների սահմանադրական պալատները (Հունաստան, Էստոնիա, ԲուրկինաՖասո «Գվինեա» ԿոստաՌիկա)³: Հետխորհրդային տարածաշրջանի պետություններից ներկայումս սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմիններ գործում են բոլոր երկրներում, բացառությամբ Թուրքմենստանի: Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված չորս երկրներին, ապա դրանցից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության և Հարավային Օսեթիայի Հանրապետության Սահմանադրություններում տեղ են գտել քննարկվող մարմնի գործունեությունը կարգավորող դրույթներ, իսկ Աբխազիայի Հանրապետությունում նման ինստիտուտ հիմնելու նպատակով Սահմանադրության մեջ արդեն կատարվել են համապատասխան լրացումներ, որոնց արդյունքում առանձին կգործի սահմանադրական դատարան⁴:

ԼՂՀ Սահմանադրության մեջ Գերագույն դատարանին վերապահված իրավասության անհատակության հետ սերտորեն կապված է նաև այն հարցը, թե ԼՂՀ-ում ո՞ր մարմնին պետք է վերապահվի սահմանադրական արդարադատություն իրականացնելու լիազորությունը. դա պետք է մասնագիտացված մարմնի կողմից իրականացվի՞, թե՛ ոչ: Եթե առաջին հայացքից հարցը պարզունակ, իսկ պատասխանն ակնհայտ է թվում, ապա իրականում հենց այս հիմնահարցի հետ ենք որոշ չափով կապում ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության ներկայիս «լճացման գործընթացը»:

Դատական սահմանադրական վերահսկողության խառը ձևը կարող է արդյունավետ գործել, եթե դրա առանձին տարրերը ճիշտ են ընտրված:

³ Հարությունյան Գ. Սահմանադրական վերահսկողություն: Ուս. ձեռնարկ բուհերի համար. լրամշ. հրատ. / խմբ.՝ Վ.Հովհաննիսյան. Եր., Իրավունք, 2008. էջ 81:

⁴ 2014թ. ապրիլի 30-ին Աբխազիայի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Անկվաբը ստորագրել է 2014թ. ապրիլի 14-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Աբխազիայի Հանրապետության Սահմանադրության լրացումների մասին» սահմանադրական օրենքը, որով մտցվում է սահմանադրական դատարանի ինստիտուտը և որի վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում սահմանադրական դատարանի առաջին կազմի ձևավորումից հետո (Այս մասին տե՛ս <http://www.abkhaziagov.org/president/press/news/2014-05-06-1>): Հատկանշական է, որ մինչև վերջին փոփոխությունները Սահմանադրության 73 հոդվածով սահմանադրական դատարավության մասով Գերագույն դատարանին վերապահված լիազորությունները չեն կիրառվել, ինչի հետ կապված խնդիրներից մեկը համապատասխան օրենքի բացակայությունն էր (Այս մասին տե՛ս Бутба С.Р. Создание в Республике Абхазия Конституционного суда и его роль в формировании национальной правовой системы. Актуальные проблемы российского права. 2010, №3. էջ 404-413):

ԼՂՀ-ի պարագայում դա թերի է, որն ավելի պարզ կերևա ներկայացվող համեմատությունից: Այսպես, հետխորհրդային տարածաշրջանի երկրներից միայն Ղրղզստանի Հանրապետությունում է գործում խառը մոդելը, որի հաջողությունը, մեր կարծիքով, պայմանավորված է Սահմանադրության մեջ ճիշտ ձևով ամրագրվելու և իրականում գործելու հանգամանքով: Դա, մասնավորապես, բացատրվում է հետևյալով. Ղրղզստանի Հանրապետության Սահմանադրության 93 հոդվածի 3-րդ մասում նշված է, որ «Գերագույն դատարանի կազմում գործում է Սահմանադրական պալատը», իսկ 97 հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Գերագույն դատարանի Սահմանադրական պալատը սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմին է»: Այստեղից հիմնական հետևությունն այն է, որ ոչ թե Գերագույն դատարանն է իրականացնում սահմանադրական արդարադատությունը, ինչպես ԼՂՀ-ում է, այլ դրա սահմանադրական պալատը, որին նման պայմաններում սահմանադրական վերահսկողությամբ օժտելը լիովին տեղավորվում տրամաբանության մեջ:

Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, իսկ 93 հոդվածով հստակ ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»:

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ հիմնական եզրահանգումն այն է, որ ԼՂՀ-ում սահմանադրական վերահսկողության մոդելի որոշ տարրեր ոչ ճիշտ են ընտրված, որի համար հիմք է հանդիսանում սահմանադրական արդարադատության ներկայիս վիճակն ու անհեռանկար ապագան: Կարծում ենք, որ սահմանադրական օրենսդիրը պետք է գնար ԼՂՀ-ում առանձին կազմով գործող մասնագիտացված դատական սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմին ունենալ ճանապարհով, ինչն ավելի արդարացված կլիներ, եթե հաշվի առնենք երկրի առանձնահատկությունները⁵:

5 Այս առումով ուսանելի է Ավստրիայի Սահմանադրական դատարանի փորձը, ըստ որի՝ 14 հոգանոց կազմին (Նախագահ, նախագահի տեղակալ և 12 անդամներ) միանում են նաև 6 պահեստային անդամները: Ավստրիայի Սահմանադրության 147 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «դատարանի նախագահը, նախագահի տեղակալը,

Սահմանադրական արդարադատության ոլորտում առկա հիմնախնդիրների տևական ուսումնասիրությունը վկայում է, որ այս ոլորտի թիվ 1 հիմնախնդիրը կապված է դիմումատուների իրավագիտակցության ոչ բավարար մակարդակի հետ: Այս կարծիքի հավաստիության մեջ կարող ենք համոզվել ուսումնասիրելով հատկապես ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները: Դրանց մեջ կարելի է հանդիպել այնպիսիք, որոնք իրենց մեջ իրավական պահանջներ⁶ չեն պարունակում կամ ներկայացվում են օրենսդրության պահանջների չպահպանմամբ⁷: Նմանաբնույթ մի քանի դիմումների քննարկման ժամանակ ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատն արձանագրել է, որ «բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականության հարց, բայց ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես Գերագույն դատարանի սահմանադրական պալատի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ուսումնասիրելով ԼՂՀ դատական պրակտիկան, ակնհայտ է դառնում, որ փաստաբաններն առավել շատ հակված են ներկայացնելու իրենց վստահորդների շահերը քաղաքացիական և քրեական գործերում, քան սահմանադրական: Դրա մասին է վկայում այն, որ անհատական 6 դիմումներից միայն մեկի դեպքում է այն ներկայացվել փաստաբանի միջոցով, որը նույնպես մերժվել է: Այս վերլուծության ամբողջ տրա-

մյուս 6 անդամները և 3 պահեստային անդամները նշանակվում են Դաշնային նախագահի կողմից Դաշնային կառավարության առաջարկությամբ. դատարանի այդ անդամները պետք է նշանակվեն դատավորների, կառավարման աստիճանավորների, համալսարաններում իրավական գիտաճյուղերի պրոֆեսորների թվից»: ԼՂՀ-ում այս մոդելի որոշ տարրերի կիրառման դեպքում մեծ հետաքրքրություն կառաջանար հատկապես սահմանադրական իրավունքի հանդեպ և այդ ուղղությամբ իրականացվելիք գիտական աշխատանքները միանշանակորեն իրենց նպաստը կրերեին սահմանադրական արդարադատության զարգացմանը՝ իրենց կազմում ընդգրկելով լավագույն մասնագետներին:

⁶ Դիմումներից մեկում դիմումատուն սահմանադրական պալատին խնդրում է «կանխել, վերացնել իր նկատմամբ հանիքավի թույլ տրված անարդարությունը, վերացնել իր ապրուստի միջոց հողն ու այգին», որը, բնականաբար, զուրկ է իրավական հիմքից ու բովանդակությունից:

⁷ Դիմումներից մեկի քննության ընդունումը մերժվել է՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

մաքանության մեջ տեղավորվում է նաև այն իրողությունը, որ ԼՂՀ-ում չկա սահմանադրական ատյան դիմելու գործերում մասնագիտացված որևէ փաստաբան, որը հավանաբար պայմանավորված է առաջարկի ու պահանջարկի աններդաշնակության սկզբունքով:

Ժողովրդավարական ու իրավական ուղի ընտրած պետության գերխնդիրներից մեկն իրավագիտակից հասարակություն ունենալն է, որտեղ մարդիկ հմտորեն կարող են օգտվել իրենց իրավունքներից ու ազատություններից և միաժամանակ կատարել իրենց վրա դրված պարտականությունները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար այս հարցը ևս օրակարգային է, որի լուծումը կախված է ինչպես այդ ուղղությամբ պետական մարմինների գործունեությունից, այնպես էլ քաղաքացիների ակտիվ կենսադիրքից: Սահմանադրական արդարադատության իրականացման ոլորտում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակի արդյունքում քաղաքացիների մի մասը անտեղյակ է նման մարմնի գործունեության մասին, մյուս մասի ներկայացրած անհատական դիմումները ձևակերպված են ոչ պատշաճ գրագիտությամբ կամ օրենսդրության խախտմամբ, իսկ մեկ այլ խումբ քաղաքացիներ որդեգրել են պասիվ կեցվածքով ապրելառճը և նույնիսկ անհրաժեշտության դեպքում չեն ցանկանում ներգրավվել նման գործընթացներին: Նման մոտեցումը քաղաքացիներին հեռու է պահում Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց տրված լիազորություններից օգտվելու հնարավորությունից՝ դրանով իսկ հեռու մնալով քաղաքացիական հասարակություն ու ԼՂՀ Սահմանադրությամբ որպես նպատակ դրված ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետություն կառուցելու գաղափարից:

ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության չկայացվածությունը կապում ենք ոչ միայն վերը թվարկված խնդիրների, այլև ԼՂՀ Սահմանադրության 114 հոդվածի 1-ին մասում ամրագրված թվով 9 լիազորությունների շրջանակի ոչ ճիշտ ընտրության հետ: Հարցը նրանում է, որ ԼՂՀ Սահմանադրությամբ դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտների շրջանակը բավականին լայն է և այս առումով սահմանադրական օրենսդիրը մեկտեղել է զարգացող և զարգացած շատ երկրների փորձը և ամրագրել օբյեկտների առավել ամբողջական շարք:

Մակայն ԼՂՀ Սահմանադրությունը, լինելով նոր երևույթ և հիմք հանդիսանալով ձևավորել նոր տիպի սահմանադրական մշակույթ, երկրում սահմանադրականության հաստատման նպատակով դատական սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին պետք է վերապահեր այնպիսի լիազորություններ, որոնց կարիքը պետությունն ու

քաղաքացիներն ավելի շատ են զգում: Առաջին հայացքից ժողովրդավարական պետություններին ներհատուկ, իսկ ԼՂՀ-ի պարագայում ոչ կիրառական լիազորությունները⁸ ոչ այնքան պահանջված են մեր հասարակությանը, որքան, ասենք, ԼՂՀ Սահմանադրության մեկնաբանությունը, որի ամրագրվածությունը կիթաներ երկրում սահմանադրական իրավագիտակցության⁹ ու իրավական համակարգի ընկալունակության աստիճանի բարձրացմանը:

Այս տեսանկյունից հիշատակման է արժանի պրոֆեսոր Գ.Հարությունյանի այն տեսակետը, ըստ որի՝ «աշխարհում գործող բոլոր սահմանադրական դատարաններից առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն են իրականացնում այն ինստիտուտները, որոնք լայն իրավասություններ ունեն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ճանապարհով երաշխավորելու սահմանադրականության կայունությունը»¹⁰: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂՀ-ում դատական սահմանադրական վերահսկողությունն իր մեջ պարունակում է ամերիկյան և առավել շատ եվրոպական մոդելի տարրեր, իսկ վերջինիս առանձնահատկություններից մեկը Սահմանադրության մեկնաբանումն

⁸ Դրանցից կարելի է թվարկել հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծումը, Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները անհաղթահարելի կամ վերացած ճանաչելը, կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնելը և այլն: Իհարկե, մենք ընդունում ենք, որ նման լիազորությունները ներհատուկ են ժողովրդավարական ու իրավական պետություններին, բայց հաշվի առնելով ԼՂՀ-ում ընտրական ու քաղաքական գործընթացների կազմակերպումը, որոնք անցնում են առանց որևէ ցնցումների և արժանանում միջազգային դիտորդների բարձր գնահատականներին, պետք է նախապատվությունը տրվեր այն լիազորություններին, որոնք բացի գեղեցիկ ձևակերպված լինելուց, ԼՂՀ-ում կունենան նաև կիրառական նշանակություն:

⁹ Սահմանադրական իրավագիտակցության հիմքում ընկած է երկրի Սահմանադրությունը: Ի.Կրավեցի բնորոշմամբ՝ «սահմանադրական իրավագիտակցությունը իրավագիտակցության հատուկ տեսակ է, որում արտացոլվում են առանձին անձի, սոցիալական խմբի, ամբողջությամբ հասարակության պատկերացումներն ու զգացմունքները Սահմանադրության, իրավական կարգավորման մեջ նրա դերի, մարդու իրավունքների, կառավարման արդար և ժողովրդավարական եղանակի մասին» (Այս մասին տե՛ս Кравец И. Формирование российского конституционализм (проблемы теории и практики). М., 2002. էջ 328):

¹⁰ Հարությունյան Գ. Սահմանադրական նորմերի մեկնաբանման հայեցակարգային մոտեցումները Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում [Էլեկտրոնային տարբերակ]. – Մուտքի ռեժիմ – http://concourt.am/armenian/structure/president/articles/algiers2008_am.pdf - 09.11.2014.

է, սահմանադրական օրենսդիրը ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատին պետք է վերապահեր նման լիազորությամբ ևս և առավել քան համոզված ենք, որ նման հարցերով դիմումների քանակը համեմատաբար ավելի շատ կլինեք¹¹:

Հետաքրքրական է, որ ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությամբ և օրենսդրությամբ բառացիորեն օժտված չէ Սահմանադրությունը մեկնաբանելու լիազորությամբ, սակայն մասնագետների կարծիքների¹² և դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներում հաճախ մեկնաբանում է Սահմանադրության և այլ իրավական ակտերի դրույթները: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 125 հոդվածի 5-րդ մասում ամրագրված է, որ «Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը Ռուսաստանի Դաշնության Նախագահի, Դաշնության խորհրդի, Պետական դումայի, Ռուսաստանի Դաշնության կառավարության, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենսդիր իշխանության մարմինների հարցմամբ տալիս է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեկնաբանություն»¹³: Բնականաբար տվյալ դեպքում հարցադրումը վերաբերում է Սահմանադրության նորմերի վերացական մեկնաբանմանը:

Որպես ամփոփում կարելի է նշել, որ ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության սահմանադրական և օրենսդրական կիսալուծում-

¹¹ Նման համոզման համար հիմք է հանդիսանում ԼՂՀ-ում ձևավորված ու գործող այն միտումը, ըստ որի՝ «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 88 հոդվածի 2-րդ մասով նախատեսված սուբյեկտները (հատկապես ԼՂՀ արդարադատության, ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ԼՂՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունները, ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը, ԼՂՀ քաղաքացիական ծառայությունը և այլն) հաճախ ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա պարզաբանումներ են տալիս իրավական ակտի դրույթների վերաբերյալ, ինչը դիմողների իրավագիտակցության բարձրացման ևս մեկ լրացուցիչ խթան է: Պաշտոնական պարզաբանումները տե՛ս ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի և ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի համարներում:

¹² Հարությունյան Գ.«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 93-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի: «Իրավունք», 2010, էջ 914-925; Հարությունյան Գ. Սահմանադրական վերահսկողություն: Ուս. ձեռնարկ բուհերի համար. լրամշ. հրատ. / խմբ.՝ Վ.Հովհաննիսյան. Եր., Իրավունք, 2008. էջ 171; Մանասյան Ա. Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 117-144:

¹³ Конституция Российской Федерации, М., Проспект, 2010, էջ 28:

ները հեռանկարում պետք է վերափոխվեն այն գաղափարի կամ միտումի, որը ներհատուկ է տարածաշրջանային, զարգացած ու զարգացող և նույնիսկ հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված պետություններին: Այսինքն՝ հիմնավոր քայլեր կատարվեն առանձին կազմով գործող սահմանադրական ատյան կամ դատարան ստեղծելու ուղղությամբ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է, ինչպես բանաձևում է Գ. Հարությունյանը՝ «հասարակության սահմանադրականացման, մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի ապահովման, երկրում սահմանադրական ախտաբանություն անցկացնելու, վերափոխման մի շարք հիմնախնդիրներ լուծելու, նոր հազարամյակի սահմանադրական մշակույթ ձևավորելու հրամայականով»¹⁴: Այս տեսանկյունից ստեղծվելիք առանձին կազմով գործող սահմանադրական ատյանը կամ դատարանը կարող է նպաստել

- ինքնուրույն գործող մարմնի կողմից արհեստավարժ սահմանադրական արդարադատության իրականացմանը,
- սահմանադրական արժեքների բացահայտմանը, մեկնաբանմանը, իմաստավորմանը և հասարակության յուրաքանչյուր անդամի կենսակերպի մաս դարձնելուն,
- այլ երկրների սահմանադրական դատարանների հետ համագործակցության շնորհիվ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության ստեղծման օրինականության, ինչպես նաև պետականաշինության և հատկապես արդարադատության ոլորտներում ձեռքբերված նվաճումները միջազգային տարբեր գիտական միջոցառումներում ներկայացնելուն և ինչ-որ չափով ԼՂՀ միջազգային ճանաչմանը,
- սահմանադրական արդարադատության և սահմանադրական իրավունքի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար գիտական հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը,
- նոր տիպի սահմանադրական մշակույթի ձևավորմանն ու սահմանադրական իրավագիտակցության բարձրացմանը:

Այս ճանապարհով ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատություն իրականացվելու դեպքում անպայմանորեն պետք է հաշվի առնվեն նաև

¹⁴ Арутюнян Г.Г. Конституционализм: уроки, вызовы, гарантии: сб. избр. публ. и выступлений на междунар. форумах, посвящ. дан. проблематике. – Киев.: Логос, 2011, էջ 159:

տվյալ ատյանի դատավորի համար սահմանվող այլ երկրների առաջավոր փորձը: Խնդիրը կայանում է նրանում, որ ԼՂՀ դատական օրենսգրքի 100-րդ հոդվածում տեղ գտած Գերագույն դատարանի դատավորին ներկայացվող պահանջները¹⁵ չեն կարող համապատասխանել այն չափանիշներին, որոնք առկա են, օրինակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում: Համեմատության համար նշենք, որ «Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածը¹⁶ նույնպես սահմանում է նմանատիպ պահանջներ: Նման պահանջներ սահմանվելու դեպքում հնարավոր կլինի ԼՂՀ-ում բարձր որակավորում ունեցող ու արհեստավարժ մասնագետների միջոցով իրականացնել նոր որակի սահմանադրական արդարադատություն:

¹⁵ Այդ պահանջներն են՝ 1) Գերագույն դատարանի դատավոր կարող է լինել 35 տարին լրացած, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող, այլ պետության քաղաքացիություն չունեցող, բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխանող այն քաղաքացին, որը իրավունքի ասպարեզում ունի առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարի աշխատում է վերաբնիչ դատարանի դատավորի պաշտոնում և չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ խիստ նկատողության ձևով, կամ վերջին 12 տարվա ընթացքում առնվազն ութ տարի աշխատել է որպես դատավոր: 2) Գերագույն դատարանի դատավոր նշանակելիս հաշվի են առնվում նաև Գերագույն դատարանի դատավորի թեկնածուի բարոյական հատկանիշները:

¹⁶ Հիշյալ հոդվածի համաձայն՝ «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի դատավոր կարող է նշանակվել նշանակման օրն առնվազն 40 տարին լրացած, անբասիր հեղինակությամբ Ռուսաստանի Դաշնության այն քաղաքացին, ով ունի բարձրագույն իրավաբանական կրթություն և իրավաբանական մասնագիտությամբ առնվազն 15 տարվա աշխատանքային ստաժ և օժտված է իրավունքի ոլորտում ճանաչված բարձր որակավորմամբ» Федеральный конституционный закон от 21.07.1994 N 1-ФКЗ "О Конституционном Суде Российской Федерации" (с изм. и доп.) // Собрание законодательства РФ, 25.07.1994, N 13.:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ ստորագրված «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(75)2015

յանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 26-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով վարկային համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի մայիսի 23-ին:

2. Վարկային համաձայնագրով սահմանված կարգով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է տասնհինգ միլիոն (15.000.000) ԱՄՆ դոլարին համարժեք գումար Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով: Փակման ամսաթիվն է 2019 թվականի սեպտեմբերի 30-ը:

Ծրագրի նպատակներն են՝ բարելավել Վարկառուի տարրական դպրոց ընդունվող երեխաների պատրաստվածությունը դպրոցին, բարելավել ֆիզիկական պայմանները եւ կրթական ռեսուրսների մատչելիությունը Վարկառուի ավագ դպրոցներում, աջակցել կրթության բարելավված որակին եւ համապատասխանությանը Վարկառուի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

- հանրակրթության որակի բարձրացում.
- բարձրագույն ուսումնական հաստատությունների Նորարարությունների մրցակցային հիմնադրամի լիարժեք գործունեության ծավալում.
- Ծրագրի կառավարում, մշտադիտարկում եւ գնահատում:

Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Վարկային համաձայնագրի ամսաթվին հաջորդող հարյուրքսաներորդ (120) օրն է:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- ա) վճարել կանխավճար վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25 տոկոս) չափով.
- բ) կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին՝ սկսած 2024 թվականի մարտի 15-ից մինչեւ

2038 թվականի մարտի 15-ը մարել վարկի հիմնական գումարը 3.33 տոկոսի չափով, իսկ 2038 թվականի սեպտեմբերի 15-ին՝ 3.43 տոկոսի չափով.

- զ) Վարկային համաձայնագրով սահմանված կարգով Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում պահպանել Կրթական ծրագրերի կենտրոնը՝ Ծրագրի պատշաճ եւ արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով.
- ը) Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքներին համապատասխան մշակել եւ Բանկին ներկայացնել Ծրագրի իրականացմանն առաջարկվող ձեռնարկ.
- ե) ապահովել Ծրագրի իրականացումը՝ հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն.
- զ) իրականացնել Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում ու գնահատում, պատրաստել Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Վարկային համաձայնագրով սահմանված կարգով եւ ժամկետներում.
- է) ապահովել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ Վարկային համաձայնագրով սահմանված կարգով:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները, մասնավորապես, վերաբերելի են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված լիազորություններին:

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը եւս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման եւ Ծրագրի իրականացման ու կառավարման առումով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական

դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ ստորագրված՝ «Կրթության բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 սեպտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1161



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրված՝ «Կրթության բարելավման

ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 26.08.2014թ.:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Կրթության բարելավման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2014թ. մայիսի 23-ին:

Համաձայնագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 9,800,000 Հատուկ փոխառության իրավունքներին (SDR) համարժեք գումարի չափով վարկ՝ Կրթության բարելավման ծրագրի նպատակներն իրականացնելու համար, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տարրական դպրոց ընդունվող երեխաների պատրաստվածությունը դպրոցին բարելավելու, ՀՀ ավագ դպրոցներում ֆիզիկական պայմանները եւ կրթական ռեսուրսների մատչելիությունը բարելավելու եւ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության բարելավված որակին եւ համապատասխանությանն աջակցելու համար:

Համաձայնագիրն ունի երեք Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Ծրագրի կատարումը», Առդիր 3. «Մարման ժամանակացույցը» եւ Հավելված, ինչպես նաև թվով 2 Լրացուցիչ նամակ:

Կրթության բարելավման ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից՝ Մաս Ա. «Հանրակրթության որակի բարձրացում», Մաս Բ. «Բարձրագույն ուսումնական հաստատությունների Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) լիարժեք գործունեության ծավալում», Մաս Գ. «Ծրագրի կառավարումը, մոնիթորինգը եւ գնահատումը»:

2. Համաձայնագրով Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 9,800,000 Հատուկ փոխառության իրավունքներին համարժեք գումարի չափով վարկ, որը կազմում է 15 մլն ԱՄՆ դոլար: Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից արտոնյալ ժամկետը՝ 5 տարի, տոկոսադրույքը կազմում է 1.25%, ծառայության վճարը՝ 0.75%, պարտավճարը՝ առավելագույնը 0.5%: Վարկի սպասարկման գծով վճարումները կատարվում են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին,

մայր գումարի մարման եղանակը նախատեսված է հավասարաչափ կիսամյակային վճարումներով՝ կապակցված վարկի ողջ գումարի հետ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին վճարել պարտավճար Ֆինանսավորման չմասհանված մնացորդի դիմաց առավելագույնը տարեկան մեկ տոկոսի կեսին (1%-ի 1/2) հավասար չափով,
- կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին վճարել Վարկի մասհանված մնացորդի դիմաց սպասարկման վճար՝ տարեկան մեկ տոկոսի երեք քառորդին (1%-ի 3/4) հավասար չափով, Վարկի մասհանված մնացորդի դիմաց՝ տարեկան մեկ եւ մեկ քառորդ (1.25%) տոկոսի չափով,
- կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին՝ սկսած 2019 թվականի մարտի 15-ից մինչեւ 2028 թվականի սեպտեմբերի 15-ը մարել Վարկի հիմնական գումարը 1.65%-ի չափով, իսկ 2029 թվականի մարտի 15-ից մինչեւ 2038 թվականի սեպտեմբերի 15-ը՝ 3.35%-ի չափով,
- Ծրագրի պատշաճ եւ արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով՝ Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում, պահպանել Կրթական ծրագրերի կենտրոնը որպես ԿԳՆ կազմում Ծրագրի իրականացման գրասենյակ (ՕԻԳ)՝ Ընկերակցության պահանջները բավարարող լիազորություններով, կադրային համալրմամբ եւ այլ ռեսուրսներով,
- ապահովել Ծրագրի իրականացումը՝ Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն,
- պահպանել կամ ապահովել ֆինանսավորման կառավարման համակարգի պահպանումը՝ Ընդհանուր պայմանների 4.09 բաժնի պահանջների համաձայն եւ այլն:

4. «Կրթության բարելավման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ եւ 48-րդ հոդվածներին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64

էւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության էւ Միջազգային զարգացման ընկերակցության միջէւ ստորագրված «Կրթության բարելավման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է էւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 սեպտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1162



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426²-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ ԵՎ 426⁴-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմող՝ քաղաքացի Գ. Աշուրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-բանական վարչության խորհրդատու Ս. Թեւանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գայանե

Աշուղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետի եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Աշուղյանի՝ 2014 թվականի ապրիլի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածում կատարվել են մի շարք լրացումներ եւ փոփոխություններ (28.11.07 ՀՕ-270-Ն, 26.12.08 ՀՕ-237-Ն, 20.05.10 ՀՕ-96-Ն), որոնցից վերջինը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-96-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի մայիսի 20-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 3-ից: Իսկ դիմողի կողմից վիճարկվող մյուս՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426⁴-րդ հոդվածում կատարվել են մի շարք լրացումներ եւ փոփոխություններ (28.11.07 ՀՕ-270-Ն, 26.12.08 ՀՕ-237-Ն, 20.05.10 ՀՕ-96-Ն, 26.10.11 ՀՕ-270-Ն, 21.06.14 ՀՕ-87-Ն), որոնցից վերջինը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-87-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի հունիսի 21-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի հուլիսի 17-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 2-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետը սահմանում է.

«Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝

...

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները»:

Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Գործերի վերանայման հիմքերն ու ժամկետները նոր հանգամանքների հետեւանքով» վերտառությամբ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Աշուղյանն ընդդեմ Հայաստանի» (գործի համարը՝ 33268/03) գործով 17.07.2008թ. վճիռն օրինական ուժի մեջ է մտել 01.12.2008թ. եւ 13.10.2010թ. հրապարակվել է ՀՀ պաշտոնական տեղեկագրի թիվ 50(784) համարում: Գայանե Աշուղյանը 11.01.2011թ. Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 07.04.2003թ. եւ 09.04.2003թ. «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումները նոր հանգամանքի հիմքով վերանայելու պահանջով դատարան դիմելու պահանջի մասին դիմում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին: Ի պատասխան նշված դիմումի՝ ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է 21.02.2011թ. թիվ 15-16-11 գրությունը: Դիմողի ներկայացուցիչները 07.03.2011թ. բողոք են ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով դատարանին, ի թիվս այլնի, պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազին դիմել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2003թ. եւ 09.04.2003թ. «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումների վերանայման վարույթ հարուցելու պահանջով: Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 07.04.2011թ. որոշմամբ բողոքը մերժել է, գտնելով, որ. «... Գ. Աշուղյանի իրավունքներն ու ազատությունները ՀՀ գլխավոր դատախազի եւ դատախազության կողմից չեն խախտվել» եւ «... դիմողը ... լիարժեք հնարավորություն ու ժամանակ ունենալով պաշտպանելու իր իրավունքները: Սակայն ,..., ՄԻԵԴ-ի վճիռը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում վերջինս դատարան չի դիմել, չի օգտվել իր իրավունքներից, իսկ բողոքարկման բաց թողած ժամկետը հարգելի համարելու հարցը սույն քննարկման արդյունքում լուծվել չի կարող: Նման պահանջ չի ներկայացվել»: Դատարանը նշել է նաեւ, որ. «ՀՀ քրեական դատա-

վարության օրենսգրքի 491 գլուխը ... նոր հանգամանքներով ՀՀ գլխավոր դատախազի վրա դատական ակտը բողոքարկելու պարտականություն չի դրել: ... իսկ այլ պաշտոնատար անձ, այդ թվում գլխավոր դատախազը նրա փոխարեն, նրա իրավունքների պաշտպանության լիազորությամբ օժտված չէ եւ նման պարտականություն օրենսդիրը նրա վրա չի դրել» եւ որպես նշվածի եզրահանգում՝ դատարանը գտել է. « ... նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելը ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների հայեցողական իրավունքն է՝ ոչ թե պարտականությունը»:

Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները 22.04.2011թ. ներկայացրել են վերաքննիչ բողոք, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 28.04.2011թ. ԵԿԴ/0025/11/11 որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառով: Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի՝ 24.05.2011թ. ԵԿԴ/0025/11/11 որոշմամբ վերադարձվել է: Դիմողի ներկայացուցիչները Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված որոշման դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 08.07.2011թ. ԵԿԴ/0033/15/11 որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը: Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի 22.08.2011թ. ԵԿԴ/0033/15/11 որոշմամբ վերադարձվել է:

Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրականությունը՝ Գայանե Աշուրյանը դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան, որի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2012թ. հոկտեմբերի 16-ին կայացրել է ՄԴՈ-1052 որոշումը: 14.01.2013թ. դիմողի ներկայացուցիչները, մատնանշելով ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշումը՝ որպես նոր հանգամանք, ներկայացրել են վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 18.04.2013թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է, որոշվել է վերանայել նույն դատարանի 24.05.2011թ. եւ 22.08.2011թ. որոշումները, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 28.04.2011թ., ինչպես նաեւ 08.07.2011թ. որոշումները եւ գործն ուղարկել նոր քննության:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 16.07.2013թ. գործ թիվ ԵԿԴ/0025/11/12 ԵԿԴ/0033/15/11 որոշմամբ մերժել է 22.04.2011թ. վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2011թ. որոշումը՝ վերահաստատելով այն դիրքորոշումը, որ « ... նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու

բողոք ներկայացնելը ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների հայեցողական իրավունքն է՝ ոչ թե պարտականությունը»:

Գայանե Աշուղյանի անունից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 16.07.2013թ. թիվ ԵԿԴ/0025/11/12 ԵԿԴ/0033/15/11 որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը 03.10.2013թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

3. Դիմողը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ եւ 103-րդ հոդվածները, գտնում է, որ անհատական դիմումով վիճարկվող դրույթները ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը ճանաչելու դեպքում անձանց՝ իրենց խախտված իրավունքները վերականգնելու՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված իրավունքն ապահովելու նպատակով «...դատավարական օրենքներով պետք է երաշխավորվեն դատական ակտերի վերանայման ընթացակարգեր, այդ ընթացակարգերը պետք է իրական եւ կոնկրետ մարդկանց համար շոշափելի եւ օգտակար արդյունքներ տան», այլապես տեսական եւ ոչ իրական կլինեն անձի՝ ՀՀ սահմանադրական դատարան կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու՝ ՀՀ Սահմանադրության 101-րդ եւ 18-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

Դիմողը կարծում է, որ «... անձին պետք է դատավարական օրենքով տրամադրել կրկին դատարան դիմելու իրավունք՝ առանց ժամկետային սահմանափակման կամ դատախազին օժտել նման դիմումով դատարան դիմելու ոչ թե հայեցողական, այլ պոզիտիվ պարտականությամբ: Հակառակը պնդելը կնշանակի, որ պետությունը, տեղյակ լինելով քաղաքացու իրավունքներին ոչ իրավաչափ միջամտած լինելու, քրեական հետապնդում իրականացրած եւ դատապարտած լինելու եւ այդ հիմքով դատարանի իրավունքի մասին, բանեցնելով իր հայեցողությունը՝ ցուցաբերում է անգործություն»:

Վերլուծելով վիճարկվող նորմը՝ դիմողը եկել է այն եզրահանգման, որ դատախազի համար իրավախախտումից տուժողի իրավունքները վերականգնելու հայեցողական լիազորություն սահմանելը հանգեցնում է անձի՝ ՀՀ սահմանադրական դատարան կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու իրավունքի խախտման եւ այդ իրավունքը ապահովելու՝ պետության պոզիտիվ պարտականությունը սահմանող սահմանադրական դրույթների խախտման:

Վերոնշյալի վերլուծության արդյունքում դիմողը համոզմունք է հայտնում, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետը եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում են ՀՀ

Սահմանադրության 3, 18, 19, 20, 21, 22, 101 եւ 103-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ օրենսդրությամբ ներպետական դատական ատյաններում գործի վերանայման միջոցներ ձեռնարկելու համար որոշակի ժամկետի սահմանումը լիովին արդարացված է: Սա, ըստ պատասխանողի, նպատակ է հետապնդում անձի մոտ ձեւավորելու իր իրավունքների պաշտպանության նկատմամբ հետեւողական եւ պատասխանատու վերաբերմունք: Բացի դրանից, պատասխանող կողմը կարծում է, որ իրավունքների դատական պաշտպանության վերաբերյալ սահմանադրական սկզբունքի ապահովումը չի ենթադրում ընդհանրապես դատավարական ժամկետների բացառում եւ ժամանակի ու տարածության մեջ իրավունքների պաշտպանության բացարձակ հնարավորության ապահովում:

Անդրադառնալով ՀՀ գլխավոր դատախազի եւ նրա տեղակալների համար նոր կամ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով գործի վերանայման համար դատարան դիմելու հայեցողական լիազորություն նախատեսելու հանգամանքին՝ պատասխանողը գտնում է, որ նման կարգավորումն «արդարացված է այնքանով, որքանով նման կառուցակարգի առկայությունը խախտված իրավունքների վերականգնման ոչ թե հիմնական միջոցն է, այլ հավելյալ երաշխիք այն դեպքերի համար, երբ անձը ինքնուրույն չի իրականացնում խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված գործողություններ»:

Ամփոփելով իր դիրքորոշումները վիճարկվող դրույթների վերաբերյալ՝ պատասխանող կողմը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետը եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

5. Սույն գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի՝ քաղաքացի Գ. Աշուրյանի կողմից սույն գործով սահմանադրական դատարան ներկայացված՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 07.04.2011թ., ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 16.07.2013թ. եւ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 03.10.2013թ. որոշումներում վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետի եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները նրա նկատմամբ չեն կիրառվել, չնայած դրանցում անդրադարձ է կատարվել հիշյալ չկիրառված կարգավորումների իրավական բովանդակությանը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել

են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած կոնկրետ սահմանադրական վերահսկողության տրամաբանությունը համահունչ՝ սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում օրենքի դրույթի՝ դիմողի նկատմամբ կիրառված լինելու պայմանը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը սահմանադրական դատարանը բացահայտել է իր 2008 թվականի ապրիլի 4-ի ՄԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես արտահայտելով հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...եւ չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «... «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատելով ՄԴՈ-751,

ՄԴՈ-758, ՄԴՈ-767, ՄԴՈ-833, ՄԴՈ-935, ՄԴՈ-984, ՄԴՈ-1049, ՄԴՈ-1089 եւ ՄԴՈ-1114 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները նոր հանգամանքներով պայմանավորված դատական ակտը վերանայելու ինստիտուտի վերաբերյալ, միաժամանակ անհրաժեշտ է համարում փաստել, որ դիմողը կարող էր եւ ներկայումս նույնպես կարող է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնել դատարան՝ ներկայացնելով բաց թողնված եռամսյա ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32, 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426²-րդ հոդվածի 4-րդ ենթակետի եւ 426⁴-րդ հոդվածի 3-րդ մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1163



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1951 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱԱԳԱՅԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա. Գեղամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1951 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված՝ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածողովի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանա-

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի հունիսի 18-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կանոնադրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածոդվի կանոնադրությունն (այսուհետ՝ Կանոնադրություն) ընդունվել է Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածոդվի (այսուհետ՝ Հաագայի խորհրդածոդվ) յոթերորդ նստաշրջանում՝ 1951 թվականի հոկտեմբերի 31-ին եւ ուժի մեջ է մտել 1955 թվականի հուլիսի 15-ին:

Կանոնադրության փոփոխություններն ընդունվել են Հաագայի խորհրդածոդվի քսաներորդ նստաշրջանում՝ 2005 թվականի հունիսի 30-ին եւ ուժի մեջ են մտել 2007 թվականի հունվարի 1-ին:

2. Ըստ Կանոնադրության 1-ին հոդվածի՝ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածոդվի նպատակն է աշխատել միջազգային մասնավոր իրավունքի նորմերի շարունակական միասնականացման ուղղությամբ:

3. Կանոնադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածոդվի անդամներն այն պետություններն են, որոնք արդեն մասնակցել են Խորհրդածոդվի մեկ կամ մի քանի նիստերի, եւ որոնք ընդունել են սույն Կանոնադրությունը: Նոր անդամ պետության ընդունման հարցը որոշվում է անդամ պետությունների կառավարությունների կողմից, նրանցից մեկի կամ մի քանիսի առաջարկով, ձայների մեծամասնությամբ, առաջարկը ներկայացնելուց հետո 6 ամսվա ընթացքում: Ընդունումն ուժի մեջ է մտնում անդամ պետության կողմից Կանոնադրությունն ընդունելուց հետո:

Կանոնադրության 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ Հաագայի խորհրդածոդվի անդամ պետությունները ձայների մեծամասնությամբ որպես Խորհրդածոդվի անդամ կարող են ընդունել Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ցանկացած կազմակերպության, որը գործում է իր անդամ պետությունների կողմից իրեն փոխանցված իրավասությունների շրջանակներում:

4. Կանոնադրության 4-րդ եւ 6-րդ հոդվածներին համապատասխան՝

Հաագայի խորհրդաժողովի ղեկավարումն իրականացնում է բոլոր անդամներից կազմված Ընդհանուր հարցերի եւ քաղաքականության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհուրդն այդ ղեկավարումն ապահովում է Մշտական բյուրոյի միջոցով:

Ընդհանուր հարցերի եւ քաղաքականության խորհրդի ղեկավարման ներքո Մշտական բյուրոն պատասխանատու է Հաագայի խորհրդաժողովի նիստերի եւ Խորհրդի ու ցանկացած Հատուկ հանձնաժողովի հանդիպումների նախապատրաստման եւ կազմակերպման, նիստերի եւ վերոնշյալ հանդիպումների քարտուղարության իրականացման եւ քարտուղարության աշխատանքների հետ կապված բոլոր հարցերի կարգավորման համար:

5. Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- նշանակել ազգային մարմին Հաագայի խորհրդաժողովի անդամների եւ Մշտական բյուրոյի միջեւ հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով (հոդվ. 7),
- մասնակցել Հաագայում գտնվող իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով Խորհրդաժողովի բյուջեի ծախսերի բաշխմանը (հոդվ. 10),
- վճարել Հաագայի խորհրդաժողովի բյուջեի ծախսերի իր մասնաբաժինը (հոդվ. 9),
- վճարել Հաագայի խորհրդաժողովի կողմից որոշված՝ Հայաստանի Հանրապետության հետ բանակցված, իր անդամակցությունից բխող լրացուցիչ վարչական ծախսերը (հոդվ. 9):

Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակում, մասնավորապես, Հաագայի խորհրդաժողովի, ինչպես նաեւ Ընդհանուր հարցերի եւ քաղաքականության խորհրդի եւ հատուկ հանձնաժողովների նիստերին մասնակցող պատվիրակությունների գործուղման ծախսերի (հոդվ. հոդվ. 9 եւ 11) վճարման մասով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերության համաձայն՝ գործուղումների, միջազգային կազմակերպությունների պատվիրակությունների ընդունելության, բնակարանների եւ այլ գույքի վարձակալության ծախսերը չեն համարվում որպես ֆինանսական պարտավորություններ:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդաժողովը՝ հանդիսանալով որպես մշտական գործող միջկառավարական կազմակերպություն, կարելուք դեր է ապահովում միջազգային հանրային իրավունքի կողմի-

Ֆիկացման ու միասնական կիրառման գործում եւ նպաստում միջազգային մասնավոր իրավունքի ընդհանուր նորմերի զարգացմանն ու իրականացմանը, մասնավոր իրավունքի տարբեր համակարգերի միջեւ հարաբերությունների համակարգմանը:

Հայաստանի Հանրապետությունը՝ դեռեւս չանդամակցելով Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածոդովի այս կազմակերպությանը եւ միաժամանակ օգտվելով վերջինիս կողմից ընդունված կոնվենցիաներին ինքնուրույն միանալու իրավասությունից, վերջին տարիների ընթացքում միացել է այս կազմակերպության մի շարք կոնվենցիաների, այդ թվում՝ Քաղաքացիական դատավարության մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 29-ից), Կտակային հանձնարարությունների ձեւին վերաբերող իրավունքների հակասությունների (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից), Երեխաների պաշտպանության եւ օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից), Երեխայի միջազգային առեւանգման քաղաքացիական մոտեցումների մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից), Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 14-ից) եւ այլն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Միջազգային մասնավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածոդովի կանոնադրությանը միանալը, հետեւաբար, այդ կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությունը հնարավորություն կապահովի մասնակցել այդ կազմակերպության եւ նրա մարմինների գործունեությանը, միջազգային մասնավոր իրավունքի բնագավառում կազմակերպության մյուս անդամ պետությունների հետ համագործակցությանը, ինչպես նաեւ միջազգային մասնավոր իրավունքի այլ ակտերին ներպետական օրենսդրության համապատասխանեցմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1951 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված՝ Միջազգային մաս-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նավոր իրավունքի մասին Հաագայի խորհրդածողովի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1164



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԵԿԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածներին,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի մարտի 10-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սերբիայի Հանրապետության կառավարության

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(75)2015
37

րության միջև եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի հունիսի 25-ին սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սերբիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2014 թվականի մարտի 10-ին՝ Երեւանում: Կոնվենցիայի նպատակը՝ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է եւ դրանով պայմանավորված՝ միջազգային առևտրի ու ներդրումների վրա եկամտային եւ գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցության նվազեցումը, ինչպես նաեւ կանխատեսելի եւ կայուն հարկային դաշտի ստեղծումը:

2. Կոնվենցիայով սահմանվում են պայմանավորվող պետությունների ռեզիդենտ հանդիսացող անձանց՝ հարկման ենթակա գույքը եւ եկամուտների տեսակները, որոնց կապակցությամբ էլ պայմանավորվող պետությունները ձեռք են բերում համապատասխան իրավունքներ եւ պարտականություններ: Կոնվենցիայի համաձայն՝ պայմանավորվող կողմը պարտավորություն է ստանձնում ձեռնպահ մնալ պայմանավորվող կողմերից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց ստացած այն եկամուտը հարկելուց, որի հարկման իրավունքը Կոնվենցիայով վերապահված է մյուս պայմանավորվող կողմին, եւ՝ ընդհակառակը:

Կոնվենցիան կիրառվում է Հայաստանի Հանրապետությունում սահմանված շահութահարկի, եկամտահարկի եւ գույքահարկի նկատմամբ, իսկ Սերբիայի Հանրապետությունում՝ կորպորատիվ շահութահարկի, ֆիզիկական անձանց եկամտահարկի եւ գույքահարկի նկատմամբ:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Կոնվենցիան կիրառել նաեւ այն հարկերի նկատմամբ, որոնք կսահ-

մանվեն Կոնվենցիան ստորագրելուց հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն, եւ որոնք նմանատիպ կլինեն սույն Կոնվենցիայով նախատեսված հարկերին.

- Սերբիայի Հանրապետության ռեզիդենտների կողմից Հայաստանում իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները հարկել միայն այն դեպքում, երբ համապատասխան գործունեությունն իրականացվել է Հայաստանում գտնվող մշտական հաստատության (ավելի, քան 12 ամիս գործունեություն ծավալող) միջոցով եւ համապատասխան շահույթը վերագրվել է համապատասխան հաստատությանը.

- ձեռնպահ մնալ միջազգային փոխադրումներում Սերբիայի Հանրապետության ռեզիդենտների կողմից նավերի, օդանավերի եւ ավտոճանապարհային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը հարկելուց.

- Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի Հանրապետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները, տոկոսները կամ ռոյալթիները հարկել ոչ ավելի, քան շահաբաժինների, տոկոսների կամ ռոյալթիների համախառն գումարի 8 տոկոսի չափով.

- ձեռնպահ մնալ Կոնվենցիայով նախատեսված պայմանների առկայության դեպքում Սերբիայի Հանրապետության ռեզիդենտների կողմից Հայաստանում իրականացվող մասնագիտական ծառայություններից, այլ անկախ բնույթի գործունեությունից ստացված վարձատրությունը, Սերբիայի Հանրապետության ռեզիդենտի կողմից Հայաստանում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը, ինչպես նաեւ Հայաստանում բացառապես ուսման, վերապատրաստման, դասավանդման կամ հետազոտություն կատարելու նպատակով գտնվող անձանց կողմից ստացված վճարումները հարկելուց.

- բացառել կրկնակի հարկումը եւ իր ռեզիդենտի եկամտահարկից կամ գույքահարկից հանել Սերբիայի Հանրապետությունում վճարված հավասար գումար.

- բացառել խտրականության դրսեւորումը Սերբիայի Հանրապետության ռեզիդենտների նկատմամբ, մասնավորապես՝ այլ կամ ավելի ծանր որեւէ հարկի կամ որեւէ այլ պարտավորության սահմանումը.

- Կոնվենցիայի դրույթների իրականացման նպատակով տեղեկատվություն փոխանակել կիրառվող ցանկացած տեսակի հարկերի վերաբերյալ:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը կրում է ֆինանսական պարտավորություններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է չհարկել Սերբիայի Հանրապետության ռեզիդենտների կողմից Հայաստանի

Հանրապետությունում ստացված առանձին տեսակի եկամուտները կամ հարկել նվազեցված դրույքաչափով:

5. Միջազգային իրավունքի նորմերի պահանջներին համապատասխան՝ Կոնվենցիայի գործողությունը չի տարածվում դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների անդամների վրա:

6. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8 եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են զարգացնելու կողմերի միջեւ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները, նաեւ ստեղծելու իրավական բարենպաստ պայմաններ կողմերի համապատասխան սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի մարտի 10-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Սերբիայի Հանրապետության կառավարության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1165



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

1997 թվականի Դեկտեմբերի 19-ին ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍԱՏՆԱՆՏՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ «ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ԻՐԵՆՑ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԵՏԱԳԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետությո-

յան օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց §1997 թվականի դեկտեմբերի 19-ին Բրյուսելում ստորագրված՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի մասնակից պետությունների եւ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցող այլ պետությունների միջեւ իրենց զինված ուժերի կարգավիճակի մասին համաձայնագրի հետագա լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014թ. հուլիսի 8-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Արձանագրությունն ստորագրվել է 1997թ. դեկտեմբերի 19-ին՝ Բրյուսելում եւ հանդիսանում է ՀՀ կողմից 2004 թվականի մարտի 31-ին ԱԺ Ն-086-3 որոշմամբ վավերացված (ՄԴՈ-471) 1995 թվականի հունիսի 19-ին Բրյուսելում ստորագրված՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի մասնակից պետությունների եւ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցող այլ պետությունների միջեւ իրենց զինված ուժերի կարգավիճակի մասին համաձայնագրի հետագա լրացուցիչ արձանագրություն:

Արձանագրության նպատակն է նպաստել «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի պետությունների զինված ուժերի անհատական գործընկերությանը՝ հաշվի առնելով «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցող պետությունների տարածքում ՆԱՏՕ-ի ռազմական շտաբների եւ շտաբների անձնակազմի կարգավիճակը սահմանելու եւ կարգավորելու անհրաժեշտությունը:

Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները՝

- առանց սահմանափակելու այն պետությունների իրավունքները, որոնք ՆԱՏՕ-ի անդամ են կամ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակից, սակայն Արձանագրության Կողմեր չեն, որպես Արձանագրության Կողմ կիրառել այն դրույթները, որոնք նույնատեսակ են Փարիզյան արձանագրությունում ամրագրված դրույթների հետ բացառությամբ այն դրույթների, որոնք փոփոխված են Արձանա-

գրությունում՝ փաստաթղթի Կողմի տարածքում ՆԱՏՕ-ի ռազմական շտաբների եւ նրանց ռազմական ու քաղաքացիական անձնակազմի կողմից իրականացվող գործունեության առնչությամբ (հոդված II),

- ի լրումն այն տարածքի, որի նկատմամբ կիրառվում է Փարիզյան արձանագրությունը, ընդունել Արձանագրության կիրառումը բոլոր Կողմ պետությունների տարածքի նկատմամբ, ինչպես նշված է ԳԽԽ ԶՈՒԿՀ-ի II հոդվածի 1-ին պարբերությունում (հոդված III, կետ 1),

- Արձանագրության կիրարկման նպատակներով՝ գործընկեր պետություններին վերաբերող հարցերում, Փարիզյան արձանագրության դրույթները, որոնք միջոցներ են նախատեսում Հյուսիսատլանտյան խորհրդին հղվող տարաձայնությունների մասով, մեկնաբանել որպես պահանջ շահագրգիռ Կողմերին՝ բանակցելու միմյանց հետ առանց որեւէ արտաքին իրավագործության օգնության դիմելու (հոդված IV):

Քննության առնված Արձանագրության I հոդվածի առաջին կետի «ա», «բ», «գ» ենթակետերի եւ 4-րդ կետի, ինչպես նաեւ II, III եւ IV հոդվածների համաձայն՝ Կողմերը պարտավոր են այդ փաստաթղթով նախատեսված որոշակի իրավահարաբերությունների կարգավորման համար որպես հիմք ընդունել նաեւ «Հյուսիսատլանտյան պայմանագրի համաձայն հիմնադրված Միջազգային ռազմական շտաբների կարգավիճակի վերաբերյալ արձանագրությունը»՝ կատարված Փարիզում 1952 թվականի օգոստոսի 28-ին:

Հայաստանի Հանրապետությունը նշված «Փարիզյան արձանագրությանը» չի միացել:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետությունը միանում է այնպիսի միջազգային պայմանագրի, որը պարունակում է պարտադիր կատարման ենթակա պարտավորություններ՝ նախատեսված այլ միջազգային պայմանագրերով, որոնց ՀՀ-ն չի միացել, ՀՀ ազգային իրավակիրառողները ղեկավարվում են «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով: Համաձայն այդ հոդվածի՝ եթե օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրում հղումներ կան այդ պայմանագրի կատարման ընթացքում հաշվի առնելու կամ կիրառելու նաեւ այնպիսի միջազգային պայմանագիր, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ չէ, ապա Հայաստանի Հանրապետության կողմից այդ պայմանագիրը ենթակա է կատարման միայն այն ծավալով, որը համատեղվում է այն պայմանագրով ստանձնած պարտավորությունների հետ, որում հղում է արվում այդ մյուս պայմանագրին եւ այդ ծավալի միայն այն մասով, որը Հայաստանի Հանրապետության օրենքներին հակասող կամ նոր օրենք ընդունելու պահանջներ նախատեսող դրույթներ չի պարու-

նակում:

Ըստ «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ կետի՝ բոլոր դեպքերում հղումով նշված միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար անմիջական պարտավորություններ չի կարող առաջացնել, քանի դեռ այդ պայմանագրով եւ տվյալ օրենքով սահմանված կարգով այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ չի մտել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1997 թվականի դեկտեմբերի 19-ին Բրյուսելում ստորագրված՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի մասնակից պետությունների եւ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցող այլ պետությունների միջեւ իրենց զինված ուժերի կարգավիճակի մասին համաձայնագրի հետագա լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1166



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՄԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ. Անդրեասյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համա-

պատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2014 թվականի մայիսի 13-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ «Զվճարված կենսաթոշակի գումարը վճարելը» վերտառությամբ 36-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ մասի 2-րդ պարբերությունը սահմանում է.

«Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում»:

Վիճարկվող դրույթը գործող խմբագրությամբ ամրագրվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-100-Ն օրենքով:

2. Վիճարկելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության դրույթի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ հիշյալ դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ եւ 37-րդ հոդվածներին, ինչպես նաեւ 42-րդ հոդվածի 3-րդ մասին:

Դիմողը գտնում է, որ չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, ի տարբերություն վիճարկվող դրույթի, նախատեսում է այլ կանոնակարգումներ: Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգումներից կարելի է եզրակացնել, որ թեեւ ժառանգության ընդունման համար վեցամսյա ժամկետ է նախատեսվում, այնուամենայնիվ, նաեւ սահմանվում է, որ ժառանգությ-

յունն առանց դատարան դիմելու կարող է ընդունվել նաև այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը, ինչպես նաև ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու նպատակով դատարան դիմելու հնարավորություն: Իսկ վիճարկվող դրույթը, իր կանոնակարգմամբ, սահմանափակում է անձի՝ կենսաթոշակատուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարն ստանալու իրավունքը եւ համապատասխանաբար նաև հակասություն առաջացնում ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգումների, այլև ՀՀ Սահմանադրության դրույթների հետ:

Դիմողը փաստում է, որ թեև նախկին՝ 2002 թվականի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով սահմանվում էր վեցամսյա ժամկետ, սակայն դա չէր վերաբերում չվճարված գումարների ժառանգմանը, ինչից ակնհայտ էր, որ ժառանգման դեպքում արդեն իրավահարաբերությունը կարգավորվում էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքով՝ ժառանգության իրավահարաբերություններին վերաբերող ընդհանուր կարգավորումներով: Իսկ 2010 թվականի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթի նոր կանոնակարգումը հանգեցնում է անձի իրավական վիճակի վատթարացման եւ դրանով իսկ հակասության նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հետ:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումը խոչընդոտում է անձի սեփականության իրավունքի արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև չի բխում իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից եւ առաջացնում է թե՛ սահմանադրականության, թե՛ ՀՀ միջազգային պարտավորություններին հակասության խնդիր:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 31-րդ եւ 37-րդ հոդվածների, 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթը նշված գումարների ժառանգման համար սահմանում է պայման, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված չէ, այն է՝ համապատասխան գումարն ստանալու համար կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը գրավոր դիմելը, ինչը դուրս է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայից:

Պատասխանող կողմը գտնում է, որ բարձրացված հիմնախնդիրը

հակասություն է առաջացնում ոչ թե ՀՀ Սահմանադրության հետ, այլ առկա է հակասություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի եւ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի միջեւ: Բացի դրանից, ըստ պատասխանողի՝ այդ հիմնախնդիրն առաջացնում է ոչ միատեսակ իրավակիրառ պրակտիկա, որը պետք է շտկվի վիճարկվող դրույթի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի միջեւ առկա հակասությունը վերացնելով, որին ուղղված օրենսդրական փոփոխության նախագիծն արդեն իսկ դրվել է շրջանառության մեջ:

Ըստ պատասխանողի՝ այնքանով, որքանով վիճարկվող դրույթն ըստ էության հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումներին՝ օրենքի եւ օրենսգրքի հարաբերակցության առումով, եւ ոչ թե ՀՀ Սահմանադրությանը, ապա դրա հետադարձ ուժի վերաբերյալ դատողությունները պետք է դիտարկել հենց այդ համատեքստում:

4. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում արձանագրելով, որ վիճարկվող իրավակարգավորումը վերաբերում է կենսաթոշակառուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման հետ կապված իրավահարաբերություններին, հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձեւ է՝ նաեւ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի», սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել՝ հատկապես հաշվի առնելով.

ա) սեփականության իրավունքի, դրա իրականացման, սահմանափակման եւ պաշտպանության սահմանադրական դրույթները, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները,

բ) իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանության, լեգիտիմ ակնկալիքների ապահովման կոնկրետ երաշխիքների առկայությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության, մասնավորապես, 31 եւ 43-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին-3-րդ մասերի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում ամրագրված է, որ «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»: Մասնավորապես, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք», իսկ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր սեփականությունից»:

Սեփականության իրավունքի, դրա իրականացման, սահմանափակման եւ պաշտպանության հիմնախնդիրներին ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում: Մասնավորապես, 2006 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-630, 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741, 2010 թվականի հուլիսի 13-ի ՍԴՈ-903, 2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաեւ սույն գործով:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը, մինչեւ ՀՀ 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-100-Ն օրենքով գործող խմբագրությունը, սահմանում էր.

«Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Այդ ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման»: Հիշյալ՝ նախկին իրավակարգավորումից բխում

էր, որ ժառանգման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Ի դեպ, հարկ է նշել, որ համանման կանոնակարգում նախատեսում էր նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519-Ն օրենքի 64-րդ հոդվածի 7-րդ մասը:

Ի փոփոխումն վերոհիշյալ նախկին կանոնակարգման, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2012 թվականի մարտի 19-ի ՀՕ-100-Ն օրենքով 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ «Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարգավորում է կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի վճարման, այդ գումարի ժառանգման իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 2010 թվականի սեպտեմբերի 18-ի ՄԴՈ-917 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պետությունը ճանաչում է նաև ժառանգման իրավունքը, որը ներառում է ոչ միայն ժառանգություն տալու, այլ նաև ժառանգություն ստանալու իրավունքները»:

Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը նաև նրա մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավագործությունների հաջորդայնությունը: Միեւնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն պաշտպանված հնարավորություն»:

Ինչ վերաբերում է սույն գործով վիճարկվող իրավադրույթով կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման իրավունքի իրականացման իրավակարգավորմանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը 19.03.2012թ. ՀՕ-100-Ն օրենքով սահմանում է նոր իրավապայման, որով ժառանգման իրավունքի իրականացումը պայմանավորվում է կենսաթոշակառուի

մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելով: Իսկ ցանկացած, հատկապես՝ նոր, իրավապայման պետք է ունենա առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ, որը չպետք է իրացվի ի հաշիվ սահմանադրաիրավական որեւէ նորմի ու սկզբունքի անտեսման: Տվյալ իրավակարգավորման պարագայում նոր տասներկու ամսվա ժամկետային սահմանափակման, իրավապայմանը բացառում է այդ ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարն ստանալը: Օրենսդիրը նոր իրավապայման սահմանելով չի ամրագրում տասներկու ամսվա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորություն, այդ թվում՝ դատական կարգով: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավակարգավորման բացակայությունը խոչընդոտում է սեփականության սահմանադրական իրավունքի լիարժեք իրականացմանը, մասնավորապես, այդ իրավունքի ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված պաշտպանությանը՝ ժառանգության ընդունման ժամկետի հետ կապված հարաբերություններում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով սեփականության իրավունքի, դրա սահմանափակման, իրականացման եւ պաշտպանության վերաբերյալ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաեւ հաշվի առնելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի գրավոր բացատրության ուսումնասիրության արդյունքները, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումը սահմանված տասներկու ամսվա ժամկետային սահմանափակումը չի պայմանավորվում հանրային արժեքների պահպանման պահանջով եւ արդյունքում նպատակաուղղված չէ սեփականատիրոջ եւ այլոց իրավունքների ու հանրային շահերի միջեւ ողջամիտ հավասարակշռության ապահովմանը: Նման սահմանափակման հիմնավորում կարող է լինել ժառանգության զանգվածի ճակատագրի հստակեցումը, որի իրավական կարգավորումը, սակայն, նախատեսվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկվող իրավակարգավորման եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ժառանգման հետ կապված իրավակարգավորումների հարաբերակցության հարցին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ժառանգությունը կարգավորվում է սույն օրենսգրքով, իսկ

դրանով նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ օրենքներով»: Վերլուծությունները ցույց են տալիս, որ չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով որեւէ կանոնակարգում նախատեսելու դրույթ չի պարունակում, այնուամենայնիվ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես սույն գործով վիճարկվող իրավադրույթը նախատեսում է իրավակարգավորումներ, որոնք համահունչ չեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումներին: Աշխատավարձի, թոշակների, նպաստների եւ վնասի հատուցման վճարների չմուծված գումարների ժառանգությանը նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1249-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մահացածին չվճարված գումարները սույն հոդվածի 1-ին կետի հիմքով ստանալու իրավունք ունեցող անձանց բացակայության կամ նրանց կողմից այդ գումարները սահմանված ժամկետում վճարելու պահանջ չներկայացնելու դեպքում համապատասխան գումարները ներառվում են ժառանգության զանգվածի մեջ եւ ժառանգվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով»: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հատուկ ընթացակարգը չպահպանելու դեպքում կիրառվում են ժառանգման ընդհանուր կանոնները: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի եւ 1227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Մակայն այդ ժամկետը բացարձակ չէ, եւ ժառանգը կարող է ընդունել ժառանգությունն առանց որեւէ ժամկետային սահմանափակման որոշակի վավերապայմանների բավարարման պարագայում: Այսպես, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը»: Օրենսդիրը որեւէ ժամկետային սահմանափակում չի նախատեսում այս իրավունքի իրականացման համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ճանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները, եթե պարզվի, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր եւ պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին ու պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան»:

Այստեղ նույնպես օրենսդիրը որևէ ժամկետային սահմանափակում չի դնում ժառանգությունն ընդունելու ժամկետը լրանալու եւ այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելու միջեւ ընկած ժամանակահատվածի համար: Այսինքն՝ անկախ նրանից, թե ժառանգությունն ընդունելու ժամկետը լրանալուց հետո որքան ժամանակ է անցել, միեւնույն է, այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո վեց ամսվա ընթացքում դատարան դիմելու դեպքում ժամկետը բաց թողնելու պատճառները կարող են հարգելի համարվել, իսկ ժառանգությունը՝ ժառանգի կողմից ընդունվել:

Ժառանգության ընդունման հաջորդ եղանակը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասով, ըստ որի՝ «Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը

1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու եւ այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները»:

Վերոհիշյալ իրավադրույթը ժառանգության ընդունումը չի պայմանավորում նոտարին որևէ դիմում ներկայացնելով: Անձը կարող է որևէ մարմնի չդիմել, պարզապես պետք է սկսի փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը: Այս իրավադրույթի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ փաստացի տիրապետման ուժով համարվում է, որ ժառանգն ընդունել է նաեւ կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավադրույթն անտեսում է ոչ միայն ժառանգության ընդունման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված եղանակները, հնարավորություն չտալով ժառանգին փաստացի տիրապետման ուժով ստանալ նաեւ կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը, այլ նաեւ նախատեսում է սեփականության իրավունքի իրականացման ժամկետային սահմանափակում, որը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ժամկետներին:

Սույն գործով քննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարի ժառանգման իրավահարաբերություններում իրավակիրառ վարչական

մարմինները, ըստ էության, առաջնորդվում են վիճարկվող իրավադրույթով:

Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը, համաձայն որի՝ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ռլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին», ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ «Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին», գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը կարող է կիրառվել այնքանով, որքանով այն չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումներին: Իրավաչափ իրավակիր ապահովելու նպատակով սահմանադրական դատարանը կարեւորում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում ժառանգության հետ կապված հարաբերությունների՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ ներդաշնակ իրավակարգավորումների ապահովման անհրաժեշտությունը, ինչն օրենսդիր մարմնի իրավասության տիրույթում է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության՝ «Եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ տասներկու ամսվա ընթացքում» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 31-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1167



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 թվականի Հոկտեմբերի 11-ին Վիեննայի ՄԱԿ-ի ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

14 հոկտեմբերի 2014թ.

Քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Ավետիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հունիսի 11-ին Վիեննայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետությո՞

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(75)2015
55

յան կառավարության եւ Ավստրիայի Հանրապետության դաշնային կառավարության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի սեպտեմբերի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ավստրիայի Հանրապետության դաշնային կառավարության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագիրն (այսուհետ՝ «Համաձայնագիր») ստորագրվել է 2014թ. հունիսի 11-ին՝ Վիեննայում:

Համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության եւ Ավստրիայի Հանրապետության կողմից նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից շահագործվող երթուղիների մասին հավելվածը:

2. Համաձայնագրի նպատակն է երկու երկրների միջեւ կանոնավոր օդային հաղորդակցությունների կարգավորումը եւ երկու պետությունների ավիաընկերությունների համար ազատ մրցակցային դաշտի ապահովումը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

1) ապահովել, որպեսզի ըստ Համաձայնագրի ավիաընկերության (ավիաընկերությունների) նշանակման մասին ծանուցում ստացած ավիացիոն իշխանությունները, պահպանելով Համաձայնագրի դրույթները, անհապաղ անհրաժեշտ շահագործման թույլտվություն տրամադրեն Ավստրիայի Հանրապետության նշանակած ավիաընկերությանը (ավիաընկերություններին),

2) Ավստրիայի Հանրապետության նշանակած ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից միջազգային հաղորդակցություններում շահագործվող օդանավերը, ինչպես նաեւ դրանց օգտագործման սարքավորումները, վառելիքի պաշարները ու քսայուղերը, եւ այդ օդանավում գտնվող պաշարները ՀՀ տարածք ժամանելիս ազատել բոլոր մաքսա-

տուրքերից, ստուգման վճարներից եւ այլ տուրքերից կամ հարկերից՝ պայմանով, որ այդ սարքավորումները եւ պաշարները մնում են օդանավի մեջ այնքան ժամանակ, մինչեւ որ դրանք կվերաարտահանվեն,

3) չհարկել օդանավ շահագործող այն ընկերություններին, որոնց՝ որոշումներ կայացնելու լիազորություններով օժտված ղեկավարությունը գտնվում է Ավստրիայի

Հանրապետությունում, 4) Ավստրիայի Հանրապետության կողմից հարցման դեպքում ցուցաբերել անհրաժեշտ օգնություն քաղաքացիական օդանավի անօրինական զավթման եւ այլ անօրինական գործողությունները կանխելու համար՝ ուղղված նման օդանավերի, դրանց ուղեւորների եւ անձնակազմի, օդանավակայանների ու օդագնացության միջոցների թռիչքային անվտանգությանը եւ քաղաքացիական ավիացիայի անվտանգությանն ուղղված որեւէ այլ սպառնալիքի դեմ,

5) վավեր ճանաչել Ավստրիայի Հանրապետության օրենքների եւ կանոնակարգերի, ներառյալ Ավստրիայի Հանրապետության պարագայում Եվրոպական միության օրենքների եւ կանոնակարգերի համաձայն համաձայնեցված հաղորդակցություններ կատարելու նպատակով տրված կամ վավերացված թռիչքային պիտանիության, թռիչքներ կատարելու համար որակավորման սերտիֆիկատները եւ լիցենզիաները, պայմանով, որ նման սերտիֆիկատները կամ լիցենզիաները տրվել կամ վավեր են ճանաչվել «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Չիկագոյի կոնվենցիայի ներքո սահմանված նվազագույն չափանիշներին հավասար կամ ավելի բարձր,

6) թույլատրել, որպեսզի կանոնավոր օդային հաղորդակցությունների սակագները սահմանվեն յուրաքանչյուր ավիաընկերության կողմից՝ ելնելով շուկայում առետրային նկատառումներից, 7) հայկական եւ ավստրիական կողմերի նշանակած ավիաընկերություններին տրամադրել արդար եւ հավասար հնարավորություններ՝ Համաձայնագրով կարգավորվող միջազգային օդային փոխադրումներ իրականացնելիս մրցակցելու համար, թույլատրել, որպեսզի յուրաքանչյուր նշանակված ավիաընկերություն որոշի իր կողմից առաջարկվող միջազգային օդային փոխադրման հաճախականությունը եւ տարողությունը՝ շուկայում կոմերցիոն նկատառումների հիման վրա, ինչպես նաեւ միակողմանիորեն չսահմանափակել ավստրիական կողմի նշանակած ավիաընկերությունների փոխադրումների ծավալը, հաճախականությունը կամ ծառայության կանոնավորությունը, կամ օդանավի տիպը կամ տիպերը՝ բացառությամբ, եթե դա պահանջվի «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Չիկագոյի կոնվենցիայով նախատեսված միասնական պայմաններին համապատասխան, 8) բարյացակամորեն ուսումնասիրել ավստրիական կողմի ցանկացած հարցում՝ ուղղված որոշակի սպառնալիքին

արձագանքելու անվտանգության հիմնավորված հատուկ միջոցառումներին, երաշխավորել, որպեսզի ՀՀ ավիացիոն իշխանություններն ավստրիական կողմի ավիացիոն իշխանություններին՝ վերջիններիս խնդրանքով, տրամադրեն այնպիսի վիճակագրական տվյալներ, որոնք կարող են հիմնավորված կերպով պահանջվել տեղեկատվական նպատակների համար՝ ՀՀ օրենքների եւ կանոնակարգերի համաձայն,

9) Համաձայնագրի առնչությամբ առաջացած վեճերը լուծել բանակցությունների միջոցով, իսկ ընդհանուր համաձայնության չգալու դեպքում վեճի լուծումը հանձնել արբիտրներից բաղկացած տրիբունալի լուծմանը:

4. Սույն Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ե Ց**.

1. 2014 թվականի հունիսի 11-ին Վիեննայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ավստրիայի Հանրապետության դաշնային կառավարության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1168



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1968 թվականի ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԻՆ ՓՐԿԵԼՈՒ, ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԻ
ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿՎԱԾ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1968 թվականի ապրիլի 22-ին ստորագրված Տիեզերագնացներին փրկելու, տիեզերագնացների վերադարձի եւ տիեզերական տարածություն արձակված օբ-

յեկտների վերադարձի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 24 սեպտեմբերի 2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

Տիեզերագնացներին փրկելու, տիեզերագնացների վերադարձի եւ տիեզերական տարածություն արձակված օբյեկտների վերադարձի մասին համաձայնագիրն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից՝ 1967 թվականի դեկտեմբերի 19-ին եւ ստորագրման համար բացվել է Լոնդոն, Մոսկվա եւ Վաշինգտոն քաղաքներում՝ 1968 թվականի ապրիլի 22-ին:

Համաձայնագրի նպատակն է խթանել միջազգային համագործակցությունը տիեզերական տարածության խաղաղ հետազոտման ու օգտագործման ոլորտում, ցուցաբերել ցանկացած հնարավոր աջակցություն տիեզերագնացներին՝ պատահարի, աղետի կամ արտակարգ վայրէջքի դեպքում, ու ապահովել տիեզերագնացների շուտափույթ եւ ապահով վերադարձը, ինչպես նաեւ տիեզերական տարածություն արձակված օբյեկտների վերադարձը:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- տեղեկություն ստանալու կամ պարզելու դեպքում, որ տիեզերանավի անձնակազմը վթարի է ենթարկվել կամ բախվել է աղետային իրավիճակի կամ արտակարգ կամ չնախատեսված վայրէջք է կատարել իր իրավագործության ներքո գտնվող տարածքում կամ միջազգային ջրերում կամ որեւէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայրում, անհապաղ՝ ա) տեղեկացնել տիեզերք արձակող մարմնին կամ, եթե չի կարող պարզել, թե ով է տիեզերք արձակող մարմինը, եւ անհապաղ կապ հաստատել նրա հետ, իր տնօրինման տակ գտնվող կապի բոլոր համապատասխան միջոցներով հրապարակային հայտարարություն անել. բ) տեղեկացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին,

- այն դեպքում, երբ պատահարի, աղետի, արտակարգ կամ չնախա-

տեսված վայրէջքի հետեւանքով տիեզերանավի անձնակազմը վայրէջք է կատարում ՀՀ իրավագործության ներքո գտնվող տարածքում, անհապաղ ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը նրանց փրկելու համար՝ այդ մասին տեղեկացնելով տիեզերք արձակող մարմնին, ինչպես նաեւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին,

- տեղեկություն ստանալու կամ պարզելու դեպքում, որ տիեզերանավի անձնակազմը վայրէջք է կատարել միջազգային ջրերում կամ որեւէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայրում, անհրաժեշտության եւ համապատասխան հնարավորության դեպքում աջակցություն ցուցաբերել այդ անձնակազմի համար որոնողական եւ փրկարարական աշխատանքներում՝ նրանց անհապաղ փրկելու ապահովելու համար՝ ձեռնարկած քայլերի եւ դրանց արդյունքների մասին տեղեկացնելով տիեզերք արձակող մարմնին, ինչպես նաեւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին,

- անվտանգ եւ անհապաղ տիեզերք արձակող մարմնի ներկայացուցիչներին վերադարձնել տիեզերանավի անձնակազմի անդամներին՝ եթե վթարի, աղետի, արտակարգ կամ չնախատեսված վայրէջքի հետեւանքով տիեզերանավի անձնակազմը վայրէջք է կատարում ՀՀ իրավագործության ներքո գտնվող տարածքում կամ ՀՀ կողմից հայտնաբերվում է միջազգային ջրերում կամ որեւէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայրում,

- տեղեկություն ստանալու կամ պարզելու դեպքում, որ որեւէ տիեզերական օբյեկտ կամ դրա բաղկացուցիչ մաս վերադարձել է Երկիր՝ ՀՀ իրավագործության ներքո գտնվող տարածք կամ միջազգային ջրեր կամ որեւէ պետության իրավագործության ներքո չգտնվող ցանկացած այլ վայր, այդ մասին տեղեկացնել տիեզերք արձակող մարմնին եւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին,

- տիեզերք արձակող մարմնի պահանջով եւ համապատասխան խնդրանքի առկայության դեպքում այդ մարմնի աջակցությամբ ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կհամարի նպատակահարմար օբյեկտը կամ դրա բաղկացուցիչ մասը վերադարձնելու համար այն դեպքում, երբ օբյեկտը կամ դրա բաղկացուցիչ մասը հայտնաբերվում է ՀՀ իրավագործության ներքո գտնվող տարածքում:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առնվող Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները, որոնք ուղղված են տիեզերական տարածության խաղաղ հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների համագործակցության կազմակերպմանը, համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի պահանջներին: Ըստ այդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության արտա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան, որոնց կարեւոր բաղադրատարրերից է նաեւ պետությունների համագործակցության սկզբունքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1968 թվականի ապրիլի 22-ին ստորագրված՝ Տիեզերագնացներին փրկելու, տիեզերագնացների վերադարձի եւ տիեզերական տարածություն արձակված օբյեկտների վերադարձի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1169



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1967 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ
ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԼՈՒՄՆԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՆԱՅԻՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ /գրավոր ընթացակարգի շրջանակներում/՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1967 թվականի հունվարի 27-ին ստորագրված՝ Տիեզերական տարածության, այդ թվում

Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 24.09.2014թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին պայմանագիրն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 19-ին եւ ստորագրման համար բացվել է Լոնդոն, Մոսկվա եւ Վաշինգտոն քաղաքներում՝ 1967 թվականի հունվարի 27-ին: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1967 թվականի հոկտեմբերի 10-ին:

Պայմանագրի նպատակն է նպաստել խաղաղ նպատակներով տիեզերական տարածության հետազոտման ու օգտագործման հետ կապված գիտական, ինչպես նաև իրավական հարցերում լայն միջազգային համագործակցությանը:

2. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- չյուրացնել տիեզերական տարածությունը, այդ թվում՝ Լուսինը եւ այլ երկնային մարմիններ ո՛չ ինքնիշխանություն հռչակելու, ո՛չ դրանք օգտագործելու կամ զավթելու, ո՛չ էլ որեւէ այլ միջոցով,
- իրականացնել տիեզերական տարածությունը, ներառյալ Լուսինը եւ այլ երկնային մարմինները, հետազոտելու եւ օգտագործելու գործունեություն համաձայն միջազգային իրավունքի, ներառյալ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու եւ միջազգային համագործակցությունն ու փոխըմբռնումը խթանելու նպատակով,
- չտեղակայել Երկրի ուղեծրում միջուկային զենք կամ զանգվածային ոչնչացման որեւէ այլ տեսակի զենք պարունակող որեւէ օբյեկտ, երկնային մարմինների վրա չտեղադրել կամ տիեզերական տարածությունում որեւէ այլ կերպ չտեղավորել այդպիսի զենք: Օգտագործել

Լուսինը եւ մյուս երկնային մարմինները բացառապես խաղաղ նպատակներով,

- տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում առաջնորդվել համագործակցության ու փոխօգնության սկզբունքով եւ տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի եւ երկնային մարմինների վրա ամբողջ գործունեությունը ծավալել պատշաճ կերպով՝ հաշվի առնելով Պայմանագրի Կողմ բոլոր մյուս պետությունների համապատասխան շահերը: Զբաղվել տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների ուսումնասիրությանը եւ իրականացնել դրանց հետազոտությունը՝ խուսափելով դրանց վնասակար աղտոտումից, ինչպես նաեւ արտերկրային ծագում ունեցող նյութ ներմուծելու հետեւանքով Երկրի շրջակա միջավայրում բացասական փոփոխություններից, եւ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկել: Եթե Հայաստանի Հանրապետությունը պատճառ ունի կարծելու, որ տիեզերական տարածությունում, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների վրա Հայաստանի Հանրապետության կամ ՀՀ քաղաքացիների կողմից ծրագրված գործունեությունը կամ փորձը հնարավոր վնասակար խոչընդոտներ կստեղծի այլ Կողմ պետությունների՝ տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների խաղաղ հետազոտման ու օգտագործման հետ կապված գործունեության համար, ապա, մինչեւ այդպիսի գործունեությանը կամ փորձին ընթացք տալը, նախաձեռնել համապատասխան միջազգային խորհրդակցություններ եւ այլն:

3. 1967 թվականի հունվարի 27-ին ստորագրված՝ Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին պայմանագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 1967 թվականի հունվարի 27-ին ստորագրված՝ Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման

ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հոկտեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1170



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

1972 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «1972 թվականի մարտի 29-ին ստորագրված՝ Տիեզերական օբյեկտների կողմից հասցված վնասի համար միջազգային պատասխանատվության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 24.09.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 1972 թվականի մարտի 29-ին ստորագրված՝ Տիեզերական օբյեկտների կողմից հասցված վնասի համար միջազգային պատասխանատվության մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1971թ. նոյեմբերի 29-ին եւ ստորագրվել է 1972 թվականի մարտի 29-ին՝ տիեզերական օբյեկտների կողմից վնաս հասցնելու համար պատասխանատվության վերաբերյալ արդյունավետ միջազգային կանոններ եւ ընթացակարգեր մշակելու եւ, մասնավորապես, Կոնվենցիայի պայմանների համաձայն՝ նման վնասից տուժածներին անհապաղ ամբողջական եւ արդարացի փոխհատուցման վճարումն ապահովելու, ինչպես նաեւ տիեզերական տարածության հետազոտման եւ խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում միջազգային համագործակցության ամրապնդման նպատակով:

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- որպես տիեզերք արձակող պետություն հանդես գալու պարագայում՝ բացարձակ պատասխանատվություն կրել երկրագնդի մակերեսային կամ թռիչքի վիճակում գտնվող օդանավերին ՀՀ տիեզերական օբյեկտի կողմից պատճառված վնասի դիմաց փոխհատուցում վճարելու համար (հոդված II),
- այլ պետության(ների) հետ համատեղ տիեզերական օբյեկտ արձակելու պարագայում՝ կրել համապարտ եւ բաժնային պատասխանատվություն ցանկացած վնաս հասցնելու համար (հոդված V, կետ 1),
- եթե պահանջ ներկայացնող պետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը, որի կողմից փոխհատուցումը Կոնվենցիայի շրջանակներում ենթակա է վճարման, համաձայնություն են ձեռք բերում փոխհատուցման այլ ձևի շուրջ, ապա փոխհատուցումը վճարել պահանջ ներկայացնող պետության արժույթով կամ այդ պետության պահանջով ՀՀ դրամով (հոդված XIII),
- հավասարապես կրել Պահանջների լուծման հարցերով հանձնաժողովի հետ կապված ծախսերը, եթե այլ բան որոշված չէ Հանձնա-

Ժողովի կողմից (հոդված XX),

- եթե տիեզերական օբյեկտի պատճառած վնասը մեծ վտանգ է ներկայացնում մարդու կյանքի համար կամ լրջորեն միջամտում է բնակչության կենսապայմաններին կամ կենսական կենտրոնների գործունեությանը, ապա որպես Կողմ եւ, մասնավորապես, տիեզերք արձակող պետությունն ղիտարկել վնաս կրած պետությանը պատշաճ եւ անհապաղ աջակցություն ցուցաբերելու հնարավորությունը՝ նման պահանջով վերջինիս ղիմելու դեպքում (հոդված XXI),
- որպես Կոնվենցիայի XXII հոդվածի 1-ին կետի իմաստով ցանկացած միջազգային միջկառավարական կազմակերպության անդամ պետություն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու համար այդպիսի կազմակերպության կողմից Կոնվենցիայի XXII հոդվածի 1-ին կետի համաձայն հայտարարության կատարումը (հոդված XXII, կետ 2),
- եթե Կոնվենցիայի XXII հոդվածի 1-ին կետի իմաստով միջազգային միջկառավարական կազմակերպությունը Կոնվենցիայի դրույթների ուժով պատասխանատվություն է կրում հասցված վնասի համար, ապա որպես այդ կազմակերպության անդամ հանդես գալու պարագայում՝ կրել համապարտ եւ բաժնային պատասխանատվություն՝ Կոնվենցիայի XXII հոդվածի 3-րդ կետում սահմանված պայմաններով (հոդված XXII, կետ 3):

3. Կոնվենցիայում հղում է կատարվում 1967 թվականի հունվարի 27-ի՝ «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագրին, որը ՄԴՈ-1170 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող, ինչպես նաեւ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը, որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992թ. մարտի 2-ից:

4. Հաշվի առնելով, որ այդ ոլորտում Հայաստանի Հանրապետությունը նախատեսում է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ արբանյակի բացթողում, շահագործում եւ այլն, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիան կնպաստի Հայաստանի Հանրապետությունում արբանյակային կապի ներդրմանը եւ զարգացմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63,

64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1972 թվականի մարտի 29-ին ստորագրված՝ Տիեզերական օբյեկտների կողմից հասցված վնասի համար միջազգային պատասխանատվության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1171



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1979 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԼՈՒՄՆԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՐԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1979 թվականի դեկտեմբերի 18-ին Նյու Յորքում ստորագրված՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների վրա պետությունների գործունեության կարգավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2014 թվականի սեպտեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Լուսնի եւ այլ երկնային մարմինների վրա պետությունների գործունեության կարգավորման մասին համաձայնագիրն (այսուհետ նաեւ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 1979 թվականի դեկտեմբերի 18-ին՝ Նյու Յորքում:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1984 թվականի հուլիսի 11-ին:

Համաձայնագրի նպատակներից է կանխել Լուսնի վերածումը միջազգային հակամարտության գոտու:

Համաձայնագրի՝ Լուսնին առնչվող դրույթները կիրառվում են նաեւ արեգակնային համակարգի այլ երկնային մարմինների նկատմամբ, բացի երկրագնդից, բացառությամբ այն դեպքերի, երբ այս երկնային մարմիններից ցանկացածի վերաբերյալ ուժի մեջ են մտնում հատուկ իրավական ակտեր:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) օգտագործել Լուսինը բացառապես խաղաղ նպատակներով.

բ) ընդունել, որ արգելվում է Լուսնի վրա ուժի ցանկացած գործադրում, ուժի գործադրման ցանկացած սպառնալիք, թշնամական գործողություն կամ թշնամական գործողությունների սպառնալիք.

գ) Լուսնի ուղեծրում կամ դեպի Լուսին կամ Լուսնի շուրջ թռիչքի այլ հետազոտերի վրա չտեղակայել միջուկային զենք կամ ցանկացած այլ տեսակի զանգվածային ռչնչացման զենք, չտեղակայել կամ չօգտագործել այդպիսի զենք Լուսնի վրա կամ նրա ընդերքում.

դ) հնարավորության եւ իրագործելիության առավելագույն սահմաններում տեղեկացնել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ինչպես նաեւ հանրային ու միջազգային գիտական համայնքին Լուսնի հետազոտմանը եւ օգտագործմանը վերաբերող իր գործունեության մասին.

ե) ձեռնարկել բոլոր գործուն միջոցները՝ պաշտպանելու համար Լուսնի վրա գտնվող անձանց կյանքը եւ առողջությունը.

զ) ստեղծել միջազգային ռեժիմ, այդ թվում՝ համապատասխան ընթա-

ցակարգեր, Լուսնի բնական ռեսուրսների շահագործումը կարգավորելու համար.

ե) կրել միջազգային պատասխանատվություն՝ Լուսնի վրա պետական մակարդակով գործունեություն իրականացնելու համար՝ անկախ այն հանգամանքից՝ այդ գործունեությունն իրականացնում են պետական մարմինները, թե ոչ պետական կազմակերպությունները, ինչպես նաև՝ երաշխավորելու համար, որ պետական մակարդակով իրականացվող գործունեությունը համապատասխանում է Համաձայնագրի դրույթներին:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին եւ նպատակաւորված են հավասարության սկզբունքի հիման վրա խթանելու Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների միջեւ հետագա համագործակցության զարգացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 3.**

1. 1979 թվականի դեկտեմբերի 18-ին Նյու Յորքում ստորագրված՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների վրա պետությունների գործունեության կարգավորման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1172



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1975 թվականի Հունվարի 14-ին ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅՖԻԱՅՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1975 թվականի հունվարի 14-ին Նյու Յորքում ստորագրված Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների գրանցման մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սահմանա-

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Ե Յ**.

1. Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների գրանցման մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից՝ 1974 թվականի նոյեմբերի 12-ին եւ ստորագրման համար բացվել է Նյու Յորքում՝ 1975 թվականի հունվարի 14-ին: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1976 թվականի սեպտեմբերի 15-ին:

2. Կոնվենցիայով նախատեսվում է, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը պարտադիր հիմունքներով ստեղծի եւ վարի տիեզերական տարածություն արձակված օբյեկտների կենտրոնական գրանցամատյան, տիեզերական տարածություն արձակված օբյեկտների պարտադիր գրանցման համակարգ, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետություններին պետք է տրամադրվի լրացուցիչ միջոցներ եւ ընթացակարգեր՝ տիեզերական օբյեկտները նույնականացնելու համար:

3. Ըստ Կոնվենցիայի II հոդվածի՝ տիեզերական օբյեկտը տիեզերք արձակող պետությունը պետք է այն գրանցի իր կողմից վարվող համապատասխան գրանցամատյանում: Յուրաքանչյուր տիեզերք արձակող պետություն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին տեղեկացնում է այդ գրանցամատյանի ստեղծման մասին: Յուրաքանչյուր գրանցամատյանի բովանդակությունը եւ այն վարելու պայմանները սահմանվում են տվյալ գրանցման պետության կողմից (կետ 1-ին եւ 3-րդ):

Եթե տիեզերական օբյեկտն արձակել են երկու եւ ավելի տիեզերք արձակող պետություններ, ապա նրանք համատեղ են որոշում, թե իրենցից ով է գրանցելու օբյեկտը, սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն, հաշվի առնելով «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի եւ այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագրի VIII հոդվածի դրույթները եւ չխախտելով տիեզերք արձակող պետությունների միջեւ կնքված կամ կնքվելիք՝ այդ տիեզերական օբյեկտների եւ դրանց անձնակազմի նկատմամբ իրավագործության կամ վերահսկողության մասին համապատասխան համաձայնագրերը (կետ

2-րդ):

4. Կոնվենցիայի III հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը վարում է գրանցամատյան, որի բոլոր տվյալները պետք է լինեն ամբողջությամբ հասանելի, եւ որտեղ գրանցվում են IV հոդվածով նախատեսված՝ պետությունների կողմից տրամադրված հետեւյալ տեղեկությունները. ա) տիեզերք արձակող պետության անվանումը, բ) տիեզերական օբյեկտի՝ համապատասխան բնութագրող նշանը կամ դրա գրանցման համարը, գ) տիեզերք արձակելու ամսաթիվը եւ տարածքը կամ վայրը, դ) ուղեծրի հիմնական պարամետրերը՝ պտույտների պարբերությունը, թեքումը, հեռակետն ու մերձակետը, ե) տիեզերական օբյեկտի ընդհանուր գործառույթը:

5. Կոնվենցիայի V հոդվածով նախատեսվում է, որ տիեզերական օբյեկտի՝ համապատասխան բնութագրող նշանով կամ դրա գրանցման համարով (կամ էլ երկուսը միասին) առանձնացված լինելու պարագայում գրանցման պետությունը ծանուցում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին այդ մասին, որն էլ այդ ծանուցման մասին գրանցում է կատարում գրանցամատյանում:

6. Ըստ Կոնվենցիայի VI հոդվածի՝ եթե Կոնվենցիայի դրույթների կիրառումը Կողմ հանդիսացող որեւէ պետություն հնարավորություն չի տվել նույնականացնելու այն տիեզերական օբյեկտը, որն իրեն կամ իր որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վնաս է պատճառել, կամ որն ունի վտանգավոր կամ վնասակար բնույթ, ապա Կողմ հանդիսացող մյուս պետությունները պետք է իրագործելիության սահմաններում արձագանքեն այդ պետության կամ այդ պետության անունից Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի միջոցով ներկայացված՝ օբյեկտը նույնականացնելու համար արդարացի եւ ողջամիտ պայմաններով աջակցության խնդրանքին:

7. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- որպես տիեզերք արձակող պետություն հանդես գալու պարագայում ստեղծել եւ վարել գրանցամատյան՝ գրանցամատյանի ստեղծման մասին տեղեկացնելով Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, իսկ տիեզերական օբյեկտը Երկրի ուղեծիր կամ դրա սահմաններից դուրս արձակելիս գրանցել տիեզերական օբյեկտը՝ մուտքագրում կատարելով համապատասխան գրանցամատյանում (հոդված 2, կետ 1),

- որպես գրանցման պետություն՝ կիրառելիության սահմաններում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին տրամադրել ՀՀ գրանցամատյանում գրանցված յուրաքանչյուր տիեզերական օբյեկտի մասին Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղե-

կությունները (հոդված 4, կետ 1),

- որպես գրանցման պետություն՝ իրագործելիության եւ կիրառելիության սահմաններում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ծանուցել տիեզերական այն օբյեկտների մասին, որոնց վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը նախկինում տեղեկություն է տրամադրել, եւ որոնք եղել են Երկրի ուղեծրում, բայց այլեւս այնտեղ չեն (հոդված 4, կետ 3),

- այն դեպքում, երբ Երկրի ուղեծիր կամ դրա սահմաններից դուրս արձակված տիեզերական օբյեկտն առանձնացված է բնութագրող նշանով կամ գրանցման համարով, որին հղում է կատարվում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի (բ) պարբերության մեջ, կամ էլ՝ երկուսը միասին, ապա որպես գրանցման պետություն՝ ծանուցել գլխավոր քարտուղարին այդ փաստի մասին՝ 4-րդ հոդվածի համաձայն տիեզերական օբյեկտների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելու ժամանակ (հոդված 5),

- եթե Կոնվենցիայի դրույթների կիրառումը հնարավորություն չի տվել Կոնվենցիայի Կողմ հանդիսացող որեւէ պետության նույնականացնելու այն տիեզերական օբյեկտը, որն իրեն կամ իր որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վնաս է պատճառել, կամ որն ունի վտանգավոր կամ վնասակար բնույթ, ապա, մասնավորապես, տիեզերքի դիտանցման եւ հետազոման հնարավորություններ ունենալու պարագայում, իրագործելիության սահմաններում արձագանքել Կողմ այդ պետության կամ այդ պետության անունից գլխավոր քարտուղարի միջոցով ներկայացված օբյեկտը նույնականացնելու համար արդարացի եւ ողջամիտ պայմաններով աջակցության խնդրանքին, իսկ որպես նման խնդրանք ներկայացնող Կողմ հանդես գալու պարագայում իրագործելիության սահմաններում տեղեկություններ ներկայացնել խնդրանքով դիմելու համար հիմք հանդիսացող դեպքերի ժամանակի, բնույթի եւ հանգամանքների մասին (հոդված 6),

- Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ տիեզերական գործունեություն իրականացնող միջազգային միջկառավարական կազմակերպության անդամ հանդիսանալու պարագայում ձեռնարկել անհրաժեշտ քայլեր այդ կազմակերպության հայտարարություն կատարելն ապահովելու համար (հոդված 7, կետ 2):

8. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, կոչված են ապահովելու արբանյակային կայի ներդրման եւ զարգացման նպատակով համապատասխան միջոցառումների իրականացմանը, ստեղծելու փոխշահավետ հարաբերություններ Կոնվենցիայի Կողմ պետությունների հետ տիեզերական տարածության հետազոտմանը եւ խաղաղ օգտագործմանը նպաստելու

հարցում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1975 թվականի հունվարի 14-ին Նյու Յորքում ստորագրված՝ Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների գրանցման մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1173



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 315-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

4 նոյեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ, փաստաբան Ա. Զաքարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արման Այվազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ

հողվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Այվազյանի՝ 05.06.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2003 թվականի ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔՕ) 315-րդ հոդվածի՝ վիճարկվող 1-ին մասը սահմանում է. «Պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ՔԴՕ)՝ «Դատական քննության սահմանները» վերտառությամբ 309-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ եւ միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

2. Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը,

և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում»:

ՀՀ ՔրԴՕ-ի 309-րդ հոդվածը՝ վերոնշյալ խմբագրությամբ, ամրագրվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-270-Ն ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 27-ին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 2012 թվականի սեպտեմբերի 19-ին Արման Այվազյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը): Առաջին ատյանի դատարանում ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասով Ա.Այվազյանին առաջադրված մեղադրանքը չի հաստատվել, և նա առաջադրված մեղադրանքով արդարացվել է: Դրա փոխարեն դատարանն իր՝ 2013 թվականի հունիսի 27-ի դատավճռով գտել է, որ Ա. Այվազյանի արարքը ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածի 1-ին մասից պետք է վերադարձվել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով, և նրան մեղավոր է ճանաչել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական անփութություն):

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 2013 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ գտել է, որ առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի պատճառաբանությունները հիմնավոր չեն, և առաջին ատյանի դատարանի դատավճիռը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2013 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 16-ի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանին խնդրում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների առնչությամբ իր փաստարկները դիմողը հիմնավորում է նրանով, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունը երաշխավորում է անձի ազատությունը «հակասահմանադրական կամ չափից դուրս պետական հարկադրանքից»: Անօրինական հարկադրանքից ազատ լինելը ներառում է նաև անձի իրավունքը՝ անարդարացի կերպով չներքաշվելու քրեական դատավարության մեջ և չհետապնդվելու առանց մեղքի:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասության նկատմամբ պետության միջամտությունը, այն է՝ ընդհանուր ազատության իրավունքի սահմանափակումը, թույլատրելի է միայն օրենքով, ընդ որում՝ միայն այնպիսի օրենքով, որը ցանկացած տեսանկյունից համապատասխանում է Սահմանադրությանը (սահմանափակման սահմանափակման սկզբունք): Օրենսդիրը սահմանափակել է ընդհանուր ազատության իրավունքը ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Ըստ այս սկզբունքի՝ քաղաքացին պետք է կարողանա հասկանալ, թե իր վարքագիծն ինչ իրավական հետեւանքներ կարող է առաջացնել: Քաղաքացու գործողություններին պետության արձագանքը պետք է կանխատեսելի լինի, այլապես քաղաքացին կդառնա պետության կամայականության գոհ: Իրավական որոշակիության սկզբունքի առանձնահատուկ ձեւակերպում է առկա ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 4-րդ մասում, որը պահանջում է արարքի պատժելիությունը սահմանել օրենքով (*nullum crimen/ nulla poena sine lege*): Ըստ հիշյալ սկզբունքի՝ քրեաիրավական նորմի փաստակազմը պետք է այնքան կոնկրետ ու հստակ ձեւակերպված լինի, որ յուրաքանչյուրի համար առանց որեւէ կասկածի պարզ լինի, թե որ արարքն է թույլատրված եւ որ արարքն է արգելված:

Դիմողը գտնում է նաեւ, որ, ի տարբերություն գույքային վնասի, ոչ գույքային վնասի դեպքում օրենսդիրը չի սահմանել էական վնասը ոչ էականից տարբերակելու որեւէ չափանիշ: Ավելին՝ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեղադրական դատավճիռ կայացնելու համար դատարանները բավարար են համարում միայն ոչ գույքային վնասի առկայությունը՝ անկախ դրա էական կամ ոչ էական լինելու հանգամանքից:

ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների առնչությամբ դիմողը կարծիք է հայտնում, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է արդար, այն է՝ Սահմանադրության նվազագույն պահանջները բավարարող դատավարություն, եւ պահանջում է, որ գործը քննվի հավասարության պայմաններում եւ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, գործը պետք է քննի անկախ եւ անկողմնակալ (չեզոք) դատարանը՝ հրապարակալ:

ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների առնչությամբ իր փաստարկները դիմողը հիմնավորում է նրանով, որ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի լույսի ներքո (արժանապատվության իրավունք) ամբաստանյալը չպետք է լինի դատավարության օբյեկտ, այլ, հակառակը, իբրեւ դատավարության մասնակից՝ նա իր նյութական իրավունքների պահպանման համար պետք է բավարար ազդեցություն ունենա դատա-

վարության ընթացքի վրա: Արդար դատաքնության իրավունքը խախտվում է, երբ ամբաստանյալը հնարավորություն չի ունենում իր դիրքորոշումը հայտնելու դատավճռի հիմքում ընկած փաստերի ու ապացույցների վերաբերյալ, կամ երբ դատարանն ակնհայտորեն հաշվի չի առել նրա դիրքորոշումը: Օրենսդիրը, ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասով թույլատրելով դատարանին իր նախաձեռնությամբ, ինքնուրույն վերաորակել ամբաստանյալին մեղսագրվող արարքը, խախտել է դատարանի չեզոքության սկզբունքն ամբաստանյալի՝ հավասարության պայմաններում եւ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ դատավարության իրավունքը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասը եւ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 19, 22 եւ 42-րդ հոդվածների պահանջներին:

ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ վկայակոչելով սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, որոնցում ամբագրված են իրավական որոշակիության սկզբունքի եւ դրա բովանդակության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պատասխանողն անհիմն է համարում ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 4-րդ մասին ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի չհամապատասխանելու վերաբերյալ դիմողի պնդումը:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան՝ հանցակազմի հատկանիշները, շարադրված է բավարար հստակ, որպեսզի քաղաքացին կարողանա հասկանալ, որ իր վարքագիծը հանգեցնում է քրեական պատասխանատվության, եւ օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհնար է ավելի լայն բացահայտել հանցակազմի հատկանիշները:

ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասում գույքային վնասը սահմանված չլինելու վերաբերյալ դիմողի դատողությունների առնչությամբ պատասխանողը՝ ներկայացնելով մի շարք եվրոպական երկրների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածները, արձանագրում է, որ այդ եվրոպական երկրների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներում ոչ գույքային վնասը նույնպես սահմանված չէ: Դրա հիմքում դրված է այն հանգամանքը, որ, ինչպես կարծում է պատասխանողը, օրենսդրորեն անհնար է սահմանել ոչ գույքային վնասի հասկացությունը, եւ վերջինս որոշելիս պետք է, ի թիվս այլնի, հիմք ընդունվեն դատական պրակտիկայում առկա չափորոշիչները՝ հիմք ընդունելով քաղաքացիներին, հասարակությանը եւ պետությանը հասցված բարոյական վնասի ծանրությունը, տուժած անձանց թվաքանակը, ոտնահար-

ված իրավունքների ու ազատությունների կարեւորությունը, դրանց ունահարման աստիճանը:

ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ վերլուծելով ամբաստանյալի վիճակի վատթարացման եւ ամբաստանյալի պաշտպանության իրավունքի ունահարման անթույլատրելիության սկզբունքների բովանդակությունը եւ ներկայացնելով այն դեպքերը, որոնց պարագայում միայն կարող է վատթարանալ ամբաստանյալի վիճակը կամ ունահարվել ամբաստանյալի պաշտպանության իրավունքը՝ պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից բխում է, որ դատարանը դատավճիռ կայացնելիս կարող է փոխել մեղադրյալին ներկայացված եւ դատական քննության ընթացքում դատախազի կողմից պաշտպանվող մեղադրանքը, եթե նոր մեղադրանքն ավելի խիստ չէ, քան սկզբնական մեղադրանքը, եւ դրա հիմքում չեն լրացվել նոր փաստական հանգամանքներ՝ ի տարբերություն նախորդ մեղադրանքի, կամ չեն փոփոխվել վերջինիս հիմքում դրված փաստական հանգամանքները:

Հղում կատարելով ԵԱՔԴ 0171/01/09 քրեական գործով կայացված դատավճռին, որով ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքը դատարանը փոխել է ՀՀ ՔՕ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, պատասխանողը գտնում է, որ եթե դատարանը նման լիազորությամբ օժտված չլիներ, ապա նա ստիպված կլիներ կայացնել արդարացման դատավճիռ, ինչը պատասխանողը համարում է անթույլատրելի: Դրա հիման վրա պատասխանողը գտնում է, որ գործող քրեադատավարական օրենքով սահմանված՝ դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու կանոնները լիովին բավարար են դատարանին «մեղադրական թեքումից» ձերբազատելու եւ մեղադրյալի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար:

5. Ինչպես նշվեց, դիմողը ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ բարձրացնում է դրանում ամրագրված «էական վնաս» եզրույթի սահմանադրականության հարցը՝ իրավական որոշակիության սկզբունքին հակասելու հիմնավորմամբ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ էական վնասը հանդիսանում է ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի, այն է՝ պաշտոնեական անփութության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ: Այնուամենայնիվ, միայն վնասի առկայությունը դեռեւս բավարար չէ խոսել ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի հանցակազմի առկայության մասին: Այս առումով պարտադիր է, որպեսզի վնասը լինի էական:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ

վնասի էական լինելու հատկանիշը նույն կերպ չի դրսևորվում տարբեր իրավիճակներում: Այն ենթակա է գնահատման, որը պետք է իրականացնի իրավակիրատուը՝ ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից: Ընդ որում, գույքային վնասի դեպքում օրենսդիրն արդեն իսկ ուրվագծել է էական գույքային վնասի սահմանները: Մասնավորապես, համաձայն ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի՝ գույքային վնասի դեպքում էական վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը գերազանցող գումարի կամ դրա արժեքի չափով հասցված գույքային վնասը, այսինքն՝ գույքային վնասի դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է նվազագույն այն գումարը կամ արժեքը, որն ընկած է վնասը որպես էական գնահատելու հիմքում:

Այլ է խնդիրը ոչ գույքային վնասի դեպքում, երբ վնասի էական լինելու հանգամանքի գնահատումը դժվարանում է այն առումով, որ օրենսդրորեն ուրվագծված չեն էական ոչ գույքային վնասի սահմանները: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքները, որ էական վնասը հանդիսանում է ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի, այն է՝ պաշտոնեական անփութության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, եւ որ օրենսդրի գնահատմամբ՝ պաշտոնեական անփութության դեպքում ոչ միայն գույքային, այլ նաեւ ոչ գույքային վնաս կարող է պատճառվել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին կամ հասարակության կամ պետության՝ վերջինիս կողմից պաշտպանության ենթակա շահերին, կարելու է հասցված ոչ գույքային վնասի էական լինելու հանգամանքի գնահատման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը, քանի որ դրանից է կախված ամբաստանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Այս կապակցությամբ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը, անհրաժեշտ համարելով վկայակոչել իր՝ 05.04.2011թ. թիվ ՄԴՈ-947 որոշման 8-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ դրանք կիրառելի են նաեւ սույն գործով ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականության հարցի առնչությամբ: Մասնավորապես, սահմանադրական դատարանն իր 05.04.2011թ. թիվ ՄԴՈ-947 որոշման 8-րդ կետում ամրագրել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ ՄԴՈ-747 եւ ՄԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ

միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պրակտիկան է կոչված որոշակիացնելու այն չափորոշիչները, որոնցով գնահատվում է վնասի էական կամ ոչ էական լինելը: Դրա վերաբերյալ առկա են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները (մասնավորապես՝ 2013թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշումը): Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում ՀՀ ՔՕ 315-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներում իրավական անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկները:

6. Անդրադառնալով ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասում ամրագրված դրույթին՝ սահմանադրական դատարանը նշում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի թե՛ առաջին եւ թե՛ երկրորդ նախադասություններով սահմանվում է մեղադրանքը փոփոխելու հնարավորություն՝ մեղադրանքը փոփոխելու կարգի սահմանում՝ Ա վերապահելով օրենսդրին:

Ինչ վերաբերում է ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին եւ երկրորդ նախադասությունների տարբերությանը, ապա նշված տարբերությունն այն է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը, նախ, վերաբերում է մեղադրանքի փոփոխության հնարավորությանը՝ խստացման առումով, երկրորդ՝ ուղղակիորեն սահմանում է խստացման առումով մեղադրանքը փոփոխելու կարգը եւ դեպքերն օրենսգրքով սահմանելու հնարավորություն: Այս առումով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մեղադրանքը փոփոխելու կարգը, սահմանները, դեպքերը սահմանված են ՀՀ ՔրԴՕ մեկ այլ՝ 309.1-րդ հոդվածում:

Միաժամանակ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ ամրագրված՝ եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, եւ չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը դրույթը, իր հերթին, հանդիսանում է մեղադրանքի փոփոխության կարգի բաղադրատարր: Ընդ որում, ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ ամրագրված՝ եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, եւ չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը՝ ենթադրում է երկու պայմանների միաժամանակյա առկայություն. առաջին՝ մեղադրանքի փոփոխությամբ չպետք է վատթարանա ամբաստանյալի վիճակը, որը հնարավոր կլինի գնահատել միայն կոնկրետ գործի շրջանակներում, եւ երկրորդ՝ մեղադրանքի փոփոխությամբ չի խախտվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:

Նշված պայմաններինց որեւէ մեկի բացակայության դեպքում մեղադրանքի փոփոխության ընդհանուր կարգը չի կարող կիրառվել:

Վերոգրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության մեջ ամրագրված՝ եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, եւ չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը՝ անհրաժեշտ օրենսդրական երաշխիք է հանդիսանում մեղադրանքի փոփոխության պարագայում ամբաստանյալի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ հիմք ընդունելով սահմանադրական դատարանի՝ 2010թ. ապրիլի 2-ի ՄԴՈ-872 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում ՀՀ ՔրԴՕ 309-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 նոյեմբերի 2014 թվականի
ՄԴՈ-1174



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի
ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՄԻԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 նոյեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրա-

գրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 27 հոկտեմբերի 2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողների գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը եւ պարզաբանումները, հետազոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը /այսուհետ՝ «Պայմանագիր»/ կնքվել է 2014 թվականի հոկտեմբերի 10-ին՝ Մինսկ քաղաքում, մի կողմից՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության եւ, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջեւ: Պայմանագրին ունի 5 հավելված:

Քննության առարկա Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը միանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, ինչպես նաեւ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձեւավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի՝ Պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված ցանկին համապատասխան, Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից դառնալով Եվրասիական տնտեսական միության անդամ:

Պայմանագրի 1-ին հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի եւ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հավելվածում նշված միջազգային այլ պայմանագրերի առանձին նորմերի կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու հետ կապված հարցերի վերաբերյալ Պայմանագրի 3-րդ հավելվածով նախատեսված պայմաններին ու անցումային դրույթներին համապատասխան: Հաշվի են առնվում նաեւ Պայմանագրի 4-րդ հավելվածով սահմանված ցանկով նախատեսված ապրանքների նկատմամբ Եվրասիական տնտե-

սակաճ միության /ԵԱՏՄ/ միասնական մաքսային սակագների կիրառման վերաբերյալ պայմանավորվածությունները:

Պայմանագրի 2-րդ հավելվածում նշվում են այն փոփոխությունները, որոնք կատարվում են ԵԱՏՄ մասին պայմանագրում եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձեւավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերում ԵԱՏՄ-ին Հայաստանի Հանրապետության միանալու կապակցությամբ:

Պայմանագրի 3-րդ հավելվածով նախատեսվում են Հայաստանի Հանրապետության կողմից ԵԱՏՄ մասին պայմանագրի եւ քննության առարկա Պայմանագրով նախատեսված այլ միջազգային պայմանագրերի առանձին նորմերի կիրառման պայմանները եւ անցումային դրույթները:

Պայմանագրի 4-րդ հավելվածով սահմանվում է այն ապրանքների ցանկը, որոնց հանդեպ Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվելու են ԵԱՏՄ մաքսային սակագների դրույթաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքի դրույթաչափեր:

Քանի որ Հայաստանի Հանրապետությունն ընդհանուր սահման չունի ԵԱՏՄ անդամ պետությունների հետ եւ ապրանքների ու տրանսպորտային միջոցների տեղաշարժն իրականացնելու է երրորդ պետությունների տարածքով, այդ կապակցությամբ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների փոխադրման առանձնահատկությունները սահմանված են Պայմանագրի 5-րդ հավելվածով:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնում Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից իր տարածքում կիրառել Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի /Եվրասիական տնտեսական ընկերակցության միջպետական խորհրդի /Մաքսային միության բարձրագույն մարմնի// որոշումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի /մաքսային միության հանձնաժողովի/ որոշումները՝ հաշվի առնելով Պայմանագրի 3-րդ հավելվածով սահմանված դրույթները:

Պայմանագրի դրույթների մեկնաբանման եւ/կամ կիրառման հետ կապված վեճերը լուծվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 112-րդ հոդվածին համապատասխան:

2. Քննության առարկա Պայմանագրի 1-ին հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը միանում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձեւավորման շրջանակներում կնքված հետեւյալ միջազգային իրավական փաստաթղթերին.

- «Ապրանքների ծագման երկրի որոշման միասնական կանոնների

- մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին,
- «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին («Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2012 թվականի ապրիլի 23-ի արձանագրության խմբագրությամբ),
 - «Մաքսային միության սակագնային արտոնությունների միասնական համակարգի մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի արձանագրությամբ,
 - «Զարգացող կամ առավել թույլ զարգացած երկրներից ապրանքների ծագումը որոշելու կանոնների մասին» 2008 թվականի դեկտեմբերի 12-ի համաձայնագրին,
 - «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրին («Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի ապրիլի 16-ի արձանագրության խմբագրությամբ),
 - «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև փոխադարձ վարչական օգնության մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին,
 - «Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին,
 - ««Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելուն առնչվող որոշ հարցերի, այդպիսի ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի գանձման առանձնահատկությունների եւ գանձված գումարների փոխանցումների կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին (««Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի համաձայն փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելուն առնչվող որոշ հարցերի, այդպիսի ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի գանձման առանձնահատկությունների եւ գանձված գումարների փոխանցումների կարգի մասին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 19-ի արձանագրության խմբագրությամբ),

- «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին նախնական տեղեկությունները փոխանակելու եւ ներկայացնելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին,
- «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների եւ այլ պետական մարմինների միջեւ տեղեկատվության փոխանակմանը ներկայացվող պահանջների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին,
- «Մաքսատուրքերի վճարման ժամկետների փոփոխման հիմքերի, պայմանների եւ կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին,
- «Մաքսային միության մաքսային տարածքով երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային տարանցման առանձնահատկությունների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին,
- «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին («Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման եւ դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրության խմբագրությամբ),
- «Ազատ պահեստների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին,
- «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության որոշակի ձևեր չկիրառելու մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին,
- «Ուղեւորների փոխադրում իրականացնող միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցները, ինչպես նաեւ բեռներ եւ (կամ) ուղեբեռ փոխադրող կցորդները, կիսակցորդները, կոնտեյներները եւ երկաթուղային շարժակազմը Մաքսային միության մաքսային տարածքում ներքին փոխադրումներում օգտագործելու առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին,
- «Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների մաքսային գործառնությունների առանձնահատկությունների մասին»

- 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին,
- «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի շուրջ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրին,
 - «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից կանխիկ դրամական միջոցների եւ (կամ) դրամական գործիքների տեղափոխման կարգի մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրին,
 - «Մաքսային միության եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության խախտման համար քրեական եւ վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրին,
 - «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ քրեական գործերով եւ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով փոխգործակցության եւ իրավական օգնության մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի համաձայնագրին,
 - «Երրորդ երկրներից անօրինական աշխատանքային միգրացիային հակազդելու համար համագործակցության մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրին,
 - «Բազմակողմ առեւտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին» 2011 թվականի մայիսի 19-ի պայմանագրին,
 - «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի մասին» 2011 թվականի հունիսի 22-ի պայմանագրին,
 - «Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների ներկայացուցչությունների գործունեությանն առնչվող հարցերով մաքսային գործերում համագործակցության եւ փոխօգնության մասին» 2011 թվականի հունիսի 22-ի համաձայնագրին,
 - «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների վերլուծական եւ վերահսկողական գործառնություններն իրականացնելու նպատակով տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի համաձայնագրին,
 - «Մաքսային միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների եւ (կամ) դրամական գործիքների տեղափոխման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ հակազդման միջոցների ապահովման մասին» 2011 թվականի դեկ-

տեմբերի 19-ի պայմանագրին,

- «Մաքսային միության անդամ պետությունների Մաքսային միության անդամ չհանդիսացող՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հետ փոխադարձ առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման մասին» 2012 թվականի դեկտեմբերի 17-ի համաձայնագրին,
- «Մաքսային միության մաքսային տարածքով թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի եւ դրանց պրեկուրսորների տեղափոխման կարգի մասին» 2013 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնագրին:

3. Քննության առարկա Պայմանագրով, «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով, ինչպես նաև քննության առարկա Պայմանագրի 1-ին հավելվածով սահմանված ցանկին համապատասխան Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձեւավորման շրջանակներում կնքված ու Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող վերոնշյալ միջազգային պայմանագրերով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող սահմանադրաիրավական բնույթի պարտավորությունները, մասնավորապես, հանգում են հետեւյալներին.

- մինչև քննության առարկա Պայմանագիրն ուժի մեջ մտնելը Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության միջև կնքված՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի գործունեությանն առնչվող հարցերով՝ Պայմանագրի 1-ին հավելվածում չնշված միջազգային պայմանագիր ստորագրվելու կամ ուժի մեջ մտնելու դեպքում առանձին արձանագրությամբ միանալ այդ միջազգային պայմանագրին վերջինիս ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ, սակայն ոչ շուտ, քան Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվը /Պայմանագրի 1-ին հոդվածի 4-րդ պարբերություն/,

- Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից գործող՝ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի /Եվրասիական տնտեսական ընկերակցության միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)/ որոշումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (Մաքսային միության հանձնաժողովի) որոշումները՝ հաշվի առնելով Պայմանագրի 3-րդ հավելվածով սահմանված դրույթները /Պայմանագրի 2-րդ հոդված/,

- ապահովել, որպեսզի այն ապրանքները, որոնց նկատմամբ ԵԱՏՄ միասնական մաքսային սակագնի /ՄՄՄ/ մաքսատուրքերի դրույթա-

չափերի համեմատ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի առավել ցածր դրույքաչափեր, օգտագործվեն միայն Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններում եւ միջոցներ ձեռնարկել Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ նման ապրանքների արտահանումը չթույլատրելու համար առանց ԵԱՏՄ ՄՄՍ դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության վճարման /Պայմանագրի 3-րդ հավելվածի 40-րդ կետի 2-րդ պարբերություն/,

- ապահովել հատուկ պաշտպանական, հակազնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն որոշումների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջական կիրառումը, որոնք ընդունվել են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ նշված Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անցկացվող քննությունների արդյունքներով /Պայմանագրի 3-րդ հավելվածի 47-րդ կետի 4-րդ պարբերություն/,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության տարածքում՝ որպես միասնական տնտեսական տարածքի բաղկացուցիչ մասում շուկայական սկզբունքների եւ ներդաշնակեցված կամ միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործեն տնտեսության կարգավորման նման (համադրելի) եւ միատեսակ մեխանիզմներ եւ ձեւավորվի միասնական ենթակառուցվածք /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 2-րդ հոդվածի 5-րդ պարբերություն/,

- «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսված ոլորտներում իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը ենթադրում է միասնականացված իրավական կարգավորում, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության /Միության/ մարմինների իրենց լիազորությունների շրջանակներում կայացված որոշումների հիման վրա /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 2-րդ հոդվածի 6-րդ պարբերություն/,

- «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով եւ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում եւ ծավալներով իրականացնել համակարգված քաղաքականություն, այն է՝ մյուս անդամ պետությունների հետ իրականացնել համագործակցություն՝ Միության մարմինների շրջանակներում հավանության արժանացած ընդհանուր մոտեցումների հիման վրա /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 2-րդ հոդվածի 12-րդ պարբերություն, 5-րդ հոդվածի 2-րդ կետ/,

- «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով եւ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում եւ ծավալներով իրականացնել համաձայնեցված քաղաքականություն, այն է՝ տարբեր ոլորտներում իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը ենթադրում է իրավական կարգավորման ներդաշնակեցում, այդ թվում՝ Միության մարմինների որոշումների հիման վրա /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 2-րդ հոդվածի 13-րդ պարբերություն, 5-րդ հոդվածի 2-րդ կետ/,

- բարենպաստ պայմաններ ստեղծել Միության կողմից իր գործառույթներն իրականացնելու համար եւ ձեռնպահ մնալ այնպիսի միջոցներից, որոնք կարող են վտանգել Միության նպատակների իրագործումը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 3-րդ հոդվածի 7-րդ պարբերություն/,

- ապահովել, որպեսզի ՀՀ տարածքում Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետությունների հետ հարաբերություններում գործի ապրանքների ներքին շուկա, ՀՀ տարածքում կիրառվի Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը եւ երրորդ կողմերի հետ ապրանքների արտաքին առևտրի կարգավորման այլ միասնական միջոցներ, երրորդ կողմերի հետ հարաբերություններում կիրառվի ապրանքների առևտրի միասնական ռեժիմ, իրականացվի միասնական մաքսային կարգավորում, երաշխավորվի ապրանքների ազատ տեղափոխումն անդամ պետությունների տարածքներով՝ առանց մաքսային հայտարարագրման եւ պետական հսկողության (տրանսպորտային, սանիտարական, անասնաբուժասանիտարական, կարանտինային բուսասանիտարական) կիրառման՝ բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսված դեպքերի /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետ/,

- ներքին շուկայի գործունեության շրջանակներում մյուս անդամ պետությունների հետ ապրանքների փոխադարձ առևտրում չկիրառել ներմուծման եւ արտահանման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ հավաքագրումներ), ոչ սակագնային կարգավորման միջոցներ, հատուկ պաշտպանական, հակագնացման եւ փոխհատուցման միջոցներ՝ բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նախատեսված դեպքերի /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 28-րդ հոդվածի 3-րդ կետ/,

- Միության շրջանակներում մյուս անդամ պետությունների հետ ստեղծել պատշաճ դեղագործական գործելակերպի չափանիշներին համապատասխանող դեղամիջոցների ընդհանուր շուկա՝ հիմնված «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում ամրագրված սկզբունք-

ների վրա /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 30-րդ հոդվածի 1-ին կետ/,

- Միության շրջանակներում մյուս անդամ պետությունների հետ ստեղծել բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) ընդհանուր շուկա՝ հիմնված «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում ամրագրված սկզբունքների վրա /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 31-րդ հոդվածի 1-ին կետ/,

- Միության շրջանակներում իրականացնել միասնական մաքսային կարգավորում՝ Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքին եւ Միության իրավունքը կազմող մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, ինչպես նաեւ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի դրույթներին համապատասխան /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 32-րդ հոդվածի 1-ին կետ/,

- Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների փոխգործակցությունը համակարգելու, Մաքսային միության նպատակների եւ խնդիրների իրականացումն ապահովելու, Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների իրավասությանը վերապահված հարցերի նկատմամբ մաքսային օրենսդրության կիրառումն ու մաքսային կարգավորումը միասնականացնելու նպատակով Կողմերի հետ համատեղ հիմնադրել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիա («Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի մասին» 2011 թվականի հունիսի 22-ի պայմանագիր),

- Միության հետ համատեղ մասնակցել Միության արտաքին առևտրային քաղաքականության իրականացմանն այն ոլորտներում, որտեղ Միության մարմիններն ընդունում են անդամ պետությունների կողմից պարտադիր կատարման ենթակա որոշումներ, երրորդ կողմի հետ միջազգային պայմանագրեր կնքելու, միջազգային կազմակերպություններում մասնակցելու կամ արտաքին առևտրային քաղաքականության միջոցներ եւ մեխանիզմներ ինքնուրույն կերպով կիրառելու միջոցով /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 33-րդ հոդվածի 3-րդ կետ/,

- Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների ծագման այն ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածք ներմուծվում են առանձնաշնորհումների տրամադրմամբ, կիրառել ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ Եվրասիական տնտեսական միության միաս-

նական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի 75 տոկոսի չափով /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 36-րդ հոդվածի 2-րդ կետ/,

- Միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող առավել թույլ զարգացած երկրների ծագման այն ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածք ներմուծվում են առանձնաշնորհումների տրամադրմամբ, կիրառել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի զրոյական դրույքաչափեր /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 36-րդ հոդվածի 3-րդ կետ/,

- Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառել Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու միասնական կանոնները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 37-րդ հոդվածի 1-ին կետ/,

- այն դեպքում, երբ երրորդ կողմի հետ Միության եւ (կամ) երրորդ կողմերի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրով նախատեսվում է պատասխան միջոցներ կիրառելու հնարավորություն, ապա կիրառել Միության տարածքում պատասխան միջոցներ սահմանելու մասին Հանձնաժողովի որոշումը, այդ թվում՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը բարձրացնելու, քանակական սահմանափակումներ սահմանելու, առանձնաշնորհումների տրամադրումը ժամանակավորապես կասեցնելու կամ Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներում այլ միջոցներ ընդունելու մասին որոշումները, որոնք ազդեցություն ունեն համապատասխան պետության հետ արտաքին առևտրի վրա /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 40-րդ հոդվածի 1-ին կետ, Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ պայմանագրի 2-րդ հոդված/,

- երրորդ կողմերի հետ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության ձեռք բերած իրավունքը Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի հետ համեմատ որպես պատասխան միջոց ներմուծման մաքսատուրքերի ավելի բարձր դրույքաչափեր միակողմանիորեն կիրառելու, ինչպես նաև սակագնային առանձնաշնորհումների տրամադրումը միակողմանիորեն կասեցնելու վերաբերյալ, իրացնել պայմանով, որ նման պատասխան միջոցների վարչարարության մեխանիզմները չեն խախտի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի դրույթները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 40-րդ հոդվածի 2-րդ կետ/,

- ՀՀ տարածքում կիրառել Հանձնաժողովի կողմից հաստատվող եւ

Միության առևտրային քաղաքականության գործիքները համարվող՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 42-րդ հոդվածի 1-ին կետ/,

- միայն ՀՀ տարածքի սահմաններում ապահովել այն ապրանքների օգտագործումը, որոնց նկատմամբ կիրառվել են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի համեմատ ավելի ցածր ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր, եւ ձեռնարկել միջոցներ՝ թույլ չտալու այլ անդամ պետություններ նման ապրանքների արտահանումը առանց Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների եւ ապրանքները ներմուծելիս վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության չափով ներմուծման մաքսատուրքերի վճարման /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 42-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ պարբերություն/,

- ՀՀ տարածք ներմուծվող՝ երրորդ երկրների ծագման գյուղատնտեսական ապրանքների առանձին տեսակների նկատմամբ կիրառել Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնային չափաքանակները, որոնք սահմանվում են, եթե նույնանման ապրանքներ արտադրվում (արդյունահանվում, աճեցվում) են Միության մաքսային տարածքում /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 44-րդ հոդվածի 1-ին կետ, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 6-րդ հավելվածի 5-րդ կետ, Պայմանագրի 2-րդ հոդված/,

- իրականացնել համաձայնեցված մակրոտնտեսական եւ արժույթային քաղաքականություն, տնտեսական քաղաքականությունը ձեւավորել տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշների քանակական արժեքների շրջանակներում, երբ պետական կառավարման հատվածի համախմբված բյուջեի տարեկան դեֆիցիտը չի գերազանցում համախառն ներքին արդյունքի 3 տոկոսը. պետական կառավարման հատվածի պարտքը չի գերազանցում համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը. գնաճի մակարդակը (սպառողական գների ինդեքսը) տարեկան արտահայտությամբ (դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) ավելի քան 5 տոկոսային կետով չի գերազանցում գնաճի մակարդակը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 62, 63 եւ 64-րդ հոդվածներ/,

- երաշխավորել ծառայությունների առևտրին, հիմնադրմանը, գործունեությանը եւ ներդրումների իրականացմանն առնչվող ՀՀ բոլոր նոր-

մատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումը, իսկ հնարավորության դեպքում՝ նաև «Համացանց» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ համացանցի համապատասխան կայքէջում այնպես, որ ցանկացած անձ, որի իրավունքներին եւ (կամ) պարտավորություններին այդպիսի նորմատիվ իրավական ակտերը կարող են առնչվել, ունենա դրանց ծանոթանալու հնարավորություն, երաշխավորել նշված նորմատիվ իրավական ակտերի իրավական որոշակիությունը եւ այդ անձանց հիմնավորված ակնկալիքները, համենայնդեպս, մինչև դրանք ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դնելու) ամսաթիվը, ինչպես նաև ապահովել նշված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախնական հրապարակումը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 69-րդ հոդվածի 1-3-րդ կետեր/,

- անդամ պետությունների հետ չկնքել այնպիսի երկկողմ միջազգային պայմանագրեր, որոնք հակասում են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի՝ բնական մենաշնորհին վերաբերող 19-րդ բաժնին /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 78-րդ հոդվածի 8-րդ կետ/,

- անդամ պետությունների հետ Միության շրջանակներում կնքել ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձեւավորման մասին միջազգային պայմանագիր, որի հիմքում ընկած են Միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձեւավորման Բարձրագույն խորհրդի կողմից հաստատված հայեցակարգի եւ ծրագրի դրույթները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 81-րդ հոդվածի 2-3-րդ կետեր/,

- առկա տեխնիկական հնարավորության շրջանակներում ապահովել էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների անարգել հասանելիությունն անդամ պետություններին՝ էլեկտրական էներգիայի (հզորության) ներքին պահանջներն ապահովելու համար նշված ծառայություններն առաջնահերթորեն օգտագործելու պայմանով՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի թիվ 21 հավելվածի միասնական սկզբունքներին եւ կանոններին համապատասխան /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 82-րդ հոդվածի 1-ին կետ/,

- անդամ պետությունների հետ Միության շրջանակներում կնքել գազի ընդհանուր շուկայի ձեւավորման մասին միջազգային պայմանագիր, որի հիմքում ընկած են Միության՝ գազի ընդհանուր շուկայի ձեւավորման Բարձրագույն խորհրդի կողմից հաստատված հայեցակարգի եւ ծրագրի դրույթները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 83-րդ հոդվածի 2-3-րդ կետեր/,

- անդամ պետությունների հետ Միության շրջանակներում կնքել

նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների ձեւավորման մասին միջազգային պայմանագիր, որի հիմքում ընկած են Միության՝ նավթի եւ նավթամթերքի ընդհանուր շուկաների ձեւավորման Բարձրագույն խորհրդի կողմից հաստատված հայեցակարգի եւ ծրագրի դրույթները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 84-րդ հոդվածի 2-3-րդ կետեր/,

- համագործակցել մյուս անդամ պետությունների հետ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության եւ պաշտպանության ոլորտում եւ ՀՀ տարածքում ապահովել դրանց նկատմամբ իրավունքների պահպանությունն ու պաշտպանությունը՝ Միության իրավունքը կազմող միջազգային իրավունքի նորմերին, միջազգային պայմանագրերին ու ակտերին եւ ՀՀ օրենսդրությանը համապատասխան /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 89-րդ հոդվածի 1-ին կետ/,

- մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության եւ պաշտպանության ոլորտում գործունեությունն իրականացնել «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 90-րդ հոդվածի 3-րդ կետում թվարկված հիմնարար միջազգային պայմանագրերին համապատասխան եւ ստանձնել այդ պայմանագրերին միանալու պարտավորություն, եթե Հայաստանի Հանրապետությունը նշված միջազգային պայմանագրերի մասնակից չէ /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 90-րդ հոդվածի 3-րդ կետ/,

- իր համար պարտադիր ճանաչել 2011 թվականի մայիսի 19-ի՝ «Բազմակողմ առեւտրային համակարգի շրջանակներում Մաքսային միության գործունեության մասին» պայմանագիրը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 99-րդ հոդվածի 4-րդ կետ եւ թիվ 31 հավելված/,

- մինչեւ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքն ուժի մեջ մտնելը մաքսային կարգավորումն իրականացնել Միության իրավունքի մաս կազմող «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրին եւ ՀՀ այլ միջազգային պայմանագրերին համապատասխան /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 101-րդ հոդվածի 1-ին կետ/, ապահովել որպեսզի հիշյալ պայմանագրով ընդունված մաքսային օրենսգրքի դրույթները գերակայեն ՀՀ մաքսային օրենսդրության այլ դրույթների նկատմամբ /«Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի («Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի ապրիլի 16-ի արձանագրության խմբագրությամբ) 1-ին

հոդված/,

- մյուս անդամ պետությունների հետ իրականացնել այն պայմանագրերի միասնականացումը, որոնց հիման վրա երրորդ կողմի հետ առևտրում տրամադրվում են առանձնաշնորհումները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 102-րդ հոդվածի 1-ին կետ/,

- մինչև 2025 թվականը մյուս անդամ պետությունների հետ իրականացնել ֆինանսական շուկայի ոլորտում ՀՀ օրենսդրության ներդաշնակեցում Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին եւ «Ֆինանսական ծառայությունների վերաբերյալ» արձանագրությանը համապատասխան, ֆինանսական շուկաների ոլորտում օրենսդրության ներդաշնակեցումն ավարտելուց հետո մյուս անդամ պետությունների հետ որոշում ընդունել ֆինանսական շուկայի կարգավորման գծով վերազգային մարմնի լիազորությունների եւ գործառնությունների վերաբերյալ, եւ նշված վերազգային մարմինն ստեղծել 2025 թվականին /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 103-րդ հոդված/,

- ՀՀ միջազգային պայմանագրերը կնքել այն հաշվով, որ դրանք չհակասեն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի նպատակներին եւ սկզբունքներին, մյուս անդամ պետությունների հետ երկկողմ միջազգային պայմանագրերը, որոնցով նախատեսվում է ինտեգրման առավել խոր մակարդակ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերի դրույթների համեմատությամբ, կամ որոնցով հոգուտ ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց ապահովվում են լրացուցիչ առավելություններ, կնքել այն պայմանով, որ դրանցով չշոշափվի այդ եւ այլ անդամ պետությունների կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով եւ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց իրավունքների եւ պարտավորությունների կատարումը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 114-րդ հոդված/,

- մյուս անդամ պետություններին ներմուծման մաքսատուրքերի բաշխված գումարները չփոխանցելու դեպքում այդ մյուս անդամ պետություններին վճարել տոկոսներ կետանցի համար գոյացած պարտքի ամբողջ գումարի դիմաց՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0,1 տոկոս դրույքաչափով ներառյալ այն օրը, երբ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարը չի փոխանցվել մյուս անդամ պետությանը (անդամ պետություններին) /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածի 21-րդ կետ/,

- երրորդ երկրներից ՀՀ մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների դեպքում սակագնային արտոնությունները տրամադրել նաեւ Հանձնաժողովի որոշումներով սահմանված դեպքերում /«Եվրա-

սիական տնտեսական միության մասին» պայմանագրի 6-րդ հավելվածի 4-րդ կետ/,

- ապրանքների արտահանումն ու ներմուծումն իրականացնել առանց արգելքների ու քանակական սահմանափակումների կիրառման՝ բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 7-րդ հավելվածի 12-րդ կետով նախատեսված դեպքերի /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 7-րդ հավելվածի 11-րդ կետ/,

- անդամ պետությունների քաղաքացիների համար սպառողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության հավասար պայմանների ապահովման նպատակով մյուս անդամ պետությունների հետ սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացնել համաձայնեցված քաղաքականություն՝ հաշվի առնելով սպառողների իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությունը եւ միջազգային իրավունքի այդ ոլորտի նորմերը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 13-րդ հավելվածի 3-րդ կետ/,

- պարտադիր կատարման ընդունել սահմանափակումների, բացառությունների, լրացուցիչ պահանջների եւ պայմանների՝ Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող՝ առանձին ազգային ցանկերը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 2-րդ կետի 4-րդ պարբերություն, Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ պայմանագրի 2-րդ հոդված/,

- բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 11-14-րդ կետերով նախատեսված դեպքերի՝ չեղյալ հայտարարել գործող սահմանափակումները եւ չսահմանել նոր սահմանափակումներ՝ ծառայությունների առետրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների հետ կապված փոխանցումների ու վճարումների առումով, հատկապես՝ եկամուտների, անդամ պետությունների կողմից որպես ներդրումներ ճանաչված փոխառությունների եւ վարկերի մարման համար վճարվող միջոցների, առետրային կազմակերպության մասնակի կամ լրիվ լուծարման կամ ներդրումների վաճառքի կապակցությամբ ներդրողի ստացած միջոցների, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 77-րդ կետի համաձայն որպես վնասի հատուցում եւ որպես «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 79-81-րդ կետերով նախատեսված փոխհատուցում՝ ներդրողի ստացած միջոցների, աշխատավարձի եւ այլ վարձատրության նկատմամբ, որոնք ստանում են մյուս անդամ պետությունների այն ներդրողներն ու քաղաքացիները, որոնց թույլատրված է աշխատել ՀՀ տարածքում ներդրումներն իրակա-

նացնելու կապակցությամբ /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 8-րդ կետ/,

- երրորդ պետության հետ տնտեսական ինտեգրման մասին միջազգային համաձայնագրեր կնքել այն հաշվով, որ դրանք համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին. ընդգրկեն ծառայությունների զգալի թվով ոլորտներ, ինչպես նաև անհիմն կերպով չբացառեն ծառայությունների տրամադրման եղանակներից, հիմնադրմանը եւ գործունեությանն առնչվող հարցերից ոչ մեկը, ուղղված լինեն գոյություն ունեցող խտրական միջոցների վերացմանը եւ նորերի ներդրումն արգելելուն, ուղղված լինեն ծառայությունների առևտրի, հիմնադրման ու գործունեության ազատականացմանը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 45 եւ 46-րդ կետեր/,

- կիրառել Բարձրագույն խորհրդի կողմից հաստատվող ծառայությունների, առևտրի, հիմնադրման եւ գործունեության ընթացակարգերում չհիմնավորված խոչընդոտներն արգելելուն վերաբերող կանոնները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 61-րդ կետ, Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ պայմանագրի 2-րդ հոդված/,

- ՀՀ տարածքում ապահովել արդար եւ իրավահավասար ռեժիմ՝ մյուս անդամ պետությունների ներդրողների կողմից իրականացվող ներդրումների եւ գործունեության առնչությամբ, այնպես, որ նշված ռեժիմը լինի այնպիսին, որը պակաս բարենպաստ չէ ՀՀ (ազգային) ներդրողների կողմից իրականացվող ներդրումներին եւ այդպիսի ներդրումներին առնչվող գործունեության մասով ՀՀ կողմից ապահովվող ռեժիմից /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 68 եւ 69-րդ կետեր/,

- նույն (սմանատիպ) հանգամանքներում ցանկացած այլ անդամ պետության ներդրողների համար ապահովել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ ցանկացած երրորդ պետության ներդրողների, նրանց ներդրումների եւ այդպիսի ներդրումներին առնչվող գործունեության համար ապահովվող ռեժիմից /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 70-րդ կետ/,

- ՀՀ տարածքից մյուս անդամ պետության տարածք ՀՀ հարկատուի կողմից ապրանքներ արտահանելու դեպքում կիրառել ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի եւ (կամ) ակցիզների վճարից ազատում /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 18-րդ հավելվածի 3-րդ կետ/,

- ՀՀ տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների (լիզինգի առարկաների) արտահանման դեպքում, լիզինգի պայմանագրի

համաձայն, ըստ որի՝ դրանց սեփականության իրավունքը փոխանցվում է լիզինգն ստացողին՝ համաձայն ապրանքային վարկի (ապրանքային փոխառության, իրերով փոխառության) մասին պայմանագրի, համաձայն ապրանքների պատրաստման մասին պայմանագրի, կիրառել ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ եւ (կամ) ակցիզների վճարից ազատում (եթե նման գործարքը, ՀՀ օրենսդրության համաձայն, ենթակա է ակցիզային հարկով հարկման /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 18-րդ հավելվածի 11-րդ կետի 2-րդ պարբերություն/,

- կատարել Հանձնաժողովի՝ գների պետական կարգավորումը չեղյալ հայտարարելու անհրաժեշտության վերաբերյալ եւ գների պետական կարգավորման ներմուծումը չեղյալ հայտարարելու անհրաժեշտության առկայության կամ բացակայության վերաբերյալ որոշումները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 19-րդ հավելվածի 87-րդ կետի 1-ին եւ 5-րդ պարբերություններ, Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ պայմանագրի 2-րդ հոդված/,

- ապահովել ՀՀ գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների հասանելիությունը, այլ անդամ պետության գազափոխադրման համակարգը հասանելի դարձնել անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար այնպիսի հավասար պայմաններով՝ ներառյալ սակագները, որոնցից օգտվում են նաեւ ՀՀ գազափոխադրման համակարգի սեփականատեր չհանդիսացող գազարտադրողները /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 22-րդ հավելվածի 3-րդ կետի 1-ին պարբերություն եւ 7-րդ կետի 2-րդ պարբերություն/,

- Հայաստանի Հանրապետության եւ անդամ պետությունների միջեւ կնքված միջազգային պայմանագրերի համաձայն իր ունեցած տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովել հետեւյալ պայմանները. արդյունահանված նավթի եւ դրանից արտադրված նավթամթերքի երկարաժամկետ փոխադրումն իրականացնելու երաշխավորված հնարավորություն անդամ պետությունների տարածքներում գործող փոխադրման համակարգով, այդ թվում՝ մագիստրալային նավթամուղների եւ նավթամթերքի խողովակաշարերի համակարգերով, անդամ պետությունների տարածքներում գրանցված տնտեսավարող սուբյեկտների համար ՀՀ տարածքում տեղակայված նավթի եւ նավթամթերքի փոխադրման համակարգի հասանելիություն՝ նույն պայմաններով, ինչով, որ դրանք հասանելի են ՀՀ տնտեսավարող սուբյեկտների համար, որի տարածքով իրականացվում է նավթի եւ նավթամթերքի

փոխադրումը, անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների համար նավթի եւ նավթամթերքի փոխադրման սակագները սահմանել այն սակագները չգերազանցող մակարդակով, որոնք սահմանվել են ՀՀ տնտեսավարող սուբյեկտների համար, որի տարածքով իրականացվում է նավթի եւ նավթամթերքի փոխադրումը /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 23-րդ հավելվածի 6-րդ կետ եւ 7-րդ կետի 2-րդ պարբերություն/,

- բացառումներ սահմանելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ընդունած ակտը չեղարկելու անհրաժեշտության մասին Հանձնաժողովի որոշումն ընդունելու դեպքում 2 ամսվա ընթացքում ապահովել ակտում համապատասխան փոփոխությունների կատարումը (այն ուժը կորցրած ճանաչելը) /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հավելվածի 33-րդ կետի 1-ին եւ 2-րդ պարբերություններ/,

- չկիրառել առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ, գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միասնական կանոնները կիրառել Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի /ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ/ այն ապրանքների նկատմամբ, որոնք թվարկված են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 29-րդ հավելվածի 11-րդ կետում, առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ կիրառելու դեպքում մյուս անդամ պետություններին վճարել փոխհատուցում՝ առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն գործող միջոցների ծավալին կամ առևտրի վրա թույլատրված ծավալից ավելի խաթարող ազդեցություն գործող միջոցներին հավասար չափով /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 29-րդ հավելվածի 6, 11 եւ 40-րդ կետեր/,

- ՀՀ տարածքում անդամ պետության աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրամադրել անվճար շտապ բժշկական օգնության իրավունք (անհետաձգելի եւ արտակարգ)՝ նույն կարգով եւ նույն պայմաններով, ինչպիսիք տրամադրված են աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիներին, երաշխավորել, որ շտապ բժշկական օգնությունը (անհետաձգելի եւ արտակարգ) անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին ՀՀ պետական ու համայնքային համակարգերի առողջապահական կազմակերպությունների կողմից ցուցաբերվի անվճար անկախ բժշկական ապահովագրության վկայականի առկայությունից, բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի)՝ անդամ պետությունների աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամներին ցուցաբերված շտապ բժշկական օգնության ծախսերի փոխհատուցումն իրականացնել ՀՀ պետական

բյուջեի հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 30-րդ հավելվածի 4-րդ կետ/,

- հետետողականորեն պահպանել Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Միության դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների լիազորությունների միջազգային բնույթը եւ ազդեցությունը չգործադրել նրանց վրա իրենց ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, երաշխավորել Միության մարմինների գույքի եւ ակտիվների անձեռնմխելիությունը վարչական կամ դատական ցանկացած միջամտությունից, երաշխավորել, որպեսզի Միության մարմինների շինությունները, ինչպես նաեւ դրանց արխիվները եւ փաստաթղթերը, այդ թվում՝ ծառայողական նամակագրությունը, անկախ դրանց գտնվելու վայրից, չենթարկվեն խուզարկության, ռեկվիզիցիայի, բռնագրավման կամ միջամտության ցանկացած այլ ձեւի, որը խոչընդոտում է այդ մարմինների բնականոն գործունեությունը, Միության մարմինների պաշտոնական օգտագործման համար նախատեսված պարագաները եւ մյուս գույքն ազատել մաքսատուրքերից, հարկերից եւ մաքսավճարներից, պաշտոնատար անձանց չենթարկել քրեական, քաղաքացիական եւ վարչական պատասխանատվության պաշտոնատար անձի դիրքում իրենց կողմից ասվածի կամ գրվածի եւ իրենց կողմից կատարված բոլոր գործողությունների համար, նրանց ազատել Միության մարմինների կողմից վճարվող աշխատավարձի եւ այլ վարձատրությունների հարկումից, նրանց ազատել պետական ծառայության պարտականություններից /«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 32-րդ հավելվածի 3, 4, 5, 12 եւ 19-րդ կետեր/,

- միջոցներ ձեռնարկել օրենսդրությունում այնպիսի փոփոխություններ կատարելու համար, որոնցով քրեական եւ վարչական պատասխանատվություն է նախատեսվում Մաքսային միության մաքսային օրենսդրության եւ Կողմերի օրենսդրության խախտումների համար, ինչպես նաեւ միջոցներ՝ այդպիսի գործողությունների հակաիրավական բնույթի միասնական սահմանումը նախատեսելու համար /«Մաքսային միության եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության խախտման համար քրեական եւ վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրի 3-րդ հոդված/:

4. ՀՀ Սահմանադրության 1-ին եւ 9-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան պետություն է եւ միջազգային հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ, իր արտաքին քաղաքականությունն իրականացնում է միջազգային իրավունքի սկզբունքներին

ու նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է. «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»:

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ սահմանադրական դատարանը «մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը»:

Սահմանադրական այս հիմնարար պահանջները հաշվի առնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը քննության առարկա գործով էական է համարում պարզել.

ա/ Հայաստանի Հանրապետության կողմից սույն Պայմանագրով ստանձնվող պարտավորությունների արժեքանական մոտեցումների համարժեքությունը ՀՀ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված հիմնարար սկզբունքներին,

բ/ միջազգային համագործակցության ձևերի ու մեխանիզմների համապատասխանությունը մասնակից պետությունների ինքնիշխանության, իրավահավասարության եւ գործակցության փոխշահավետության սկզբունքներին,

գ/ հավատարմությունն իրավունքի գերակայության երաշխավորմանը եւ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,

դ/ ստանձնվող պարտավորությունների ներդաշնակությունը, մասնավորապես, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի եւ Առեւտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում սահմանված նորմերին ու սկզբունքներին,

ե/ Միության մարմինների կողմից որոշումների կայացման կարգը եւ դրանց պարտադիր լինելու բնույթը,

զ/ Պայմանագրից դուրս գալու ընթացակարգերի համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միջազգային արդի զարգացումները, գլոբալացման գործընթացները, միջպետական ինտեգրման միտումները հանգեցրել են նրան, որ երկրները գնում են առավել խոր փոխշահավետ գործակցության՝ ի սպաս իրենց ժողովուրդ-

ների եւ քաղաքացիների բարօրության, համատեղ լուծելու տնտեսական, բնապահպանական, սոցիալական, մարդկանց անվտանգության ապահովման եւ համարժեք այլ խնդիրներ: 21-րդ դարի աշխարհակարգին բնորոշ են հատկապես տնտեսական ոլորտում անդրազգային կորպորացիաների գերիշխանությունը, գլոբալ աղետների դեմ պայքարի համաշխարհայնացումը, մարդու իրավունքների ոլորտում միասնական չափորոշիչների սահմանումը, արժեհամակարգային ինտեգրման խորացումը: Այս գործընթացները պահանջում են նաեւ գործակցության նոր ձևեր, որոնցից է միջազգային եւ տարածաշրջանային համագործակցության տարբեր ձևաչափերի ակտիվ զարգացումը:

Միջազգային տնտեսական զարգացումների ընդհանուր միտումն այն է, որ նոր որակով ներկա տնտեսական համագործակցության գլխավոր բնութագրիչը փոխհամաձայնեցված կամ միասնական քաղաքականության միջոցով ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումն է: Նույնիսկ զարգացած երկրները ներառված են այս գործընթացներում, եւ նոր հազարամյակում այն այլընտրանք չունի: Գլխավոր խնդիրն այն է, թե որքանով է ապահովվում նման ինտեգրման փոխառնակալությունը եւ ներդաշնակությունը երկրի սահմանադրական կարգի հիմունքներին: Ընդ որում, պետության մասնակցությունը միջազգային կազմավորումներին համարվում է իրավաչափ, եթե դա իրականացվում է միջազգային պայմանագրերին համապատասխան եւ չի հանգեցնում մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակման եւ չի հակասում իր սահմանադրական կարգի հիմունքներին: Նման մոտեցումը բխում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից եւ ունի ունիվերսալ բնույթ: Դրա մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության բազմաթիվ հոդվածներով միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին է վերապահվում տարաբնույթ իրավակարգավորումների որոշիչ դերը /մասնավորապես՝ հոդվ. 3, մաս 2, հոդվ. 6, մաս 4, հոդվ. 9, հոդվ. 11, մաս 2, հոդվ. 18, մաս 4, հոդվ. 43, մաս 2, հոդվ. 44/: Նման հոդվածների լիազորող բնույթի վերաբերյալ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, մասնավորապես, 2002թ. փետրվարի 22-ի ՍԴՈ-350 որոշման մեջ:

Հիշյալ հանգամանքը հաշվի առնելով՝ քննության առարկա գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն էական է համարում առաջին հերթին պարզել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունների եւ ՀՀ Սահմանադրության սահմանադրական կարգի հիմնարար նորմերի փոխառնակալությունները:

6. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է. «Հայաստանի

Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:

Սահմանադրաիրավական տեսանկյունից երկրի ինքնիշխանության հիմնական բնութագրիչներն են.

նախ՝ պետական ինքնիշխանությունը, որը ենթադրում է, որ.

ա/ պետական իշխանությունն ունի գերակայություն ու անկախություն երկրի ներսում եւ միջազգային հարաբերություններում,

բ/ միայն ինքնիշխան պետությունն ունի միջազգային իրավասուբյեկտի կարգավիճակ,

գ/ երկրի ներսում ինքնիշխան պետությունն ինքն է սահմանում եւ պահպանում իր երկրի իրավակարգը՝ անհրաժեշտության դեպքում գործադրելով պետական հարկադրանքի միջոցներ,

դ/ պետական ինքնիշխանությունը տարածվում է երկրի ամբողջ տարածքի վրա, բացառում է երկիշխանությունը, միակ լեզվախոս իշխանությունն է իրականացնում օրենսդիր, գործադիր եւ դատական գործառնությունները:

Միաժամանակ, պետական ինքնիշխանությունը չի ենթադրում իշխանության բացարձակ անսահմանափակություն: Իրավական պետությունում այն առաջին հերթին սահմանափակված է մարդու հիմնարար իրավունքներով ու ազատություններով, որոնք գործում են անմիջականորեն, ունեն ինչպես ներպետական, այնպես էլ վերապետական /միջազգային/ իրավական պաշտպանվածություն: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Երկրորդ ժողովրդական ինքնիշխանությունը, որի էությունը ժողովրդի իշխանության միակ կրողն ու աղբյուրը լինելը ճանաչելն է: ՀՀ Սահմանադրության 2-րդ անփոփոխելի հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»:

Երրորդ ազգային ինքնիշխանությունը, ինչն ազգի իրավունքն է ինքնուրույն եւ ազատորեն որոշել իր մշակութային, սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կեցությունը: Ազգային ինքնիշխանությունը ենթադրում է նաեւ ազգի քաղաքական ինքնորոշման իրավունքի ճանաչումը, որն իր սահմանադրաիրավական ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության նախաբանում:

Հայաստանի Հանրապետությունում պետական ինքնիշխանության երաշխավորման եւ իրացման կարեւոր իրողություններից է այն, որ սահմանադրորեն երկրի օրենսդիր մարմնին է վերապահված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի վավերացման,

կասեցման կամ չեղյալ հայտարարելու իրավասությունը /հոդվ. 81, կետ 2/:
Ընդ որում, նույն հոդվածով սահմանվում է, որ.

Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են այն միջազգային պայմանագրերը՝

ա) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախատեսում են պետական սահմանի փոփոխություն,

բ) որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին եւ պարտականություններին,

գ) որոնք ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Հայաստանի Հանրապետության համար,

դ) որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր,

ե) որոնցով նախատեսված է վավերացում,

զ) օրենքով սահմանված այլ դեպքերում:

ՀՀ գործող Սահմանադրությունը չի նախատեսում նման խնդիրների լուծում պարտադիր իրավական հետեւանքներ ունեցող հանրաքվեի կամ օրենքի ընդունման միջոցով: Ավելին, Սահմանադրության 62-րդ հոդվածով սահմանված կարգով Սահմանադրության 81-րդ հոդվածին վերաբերող հարցերով, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու դեպքում Ազգային ժողովն ընդունում է որոշում: Իր հերթին, ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածով եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված է, որ Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: ՀՀ Սահմանադրությամբ միջազգային պայմանագրերի առնչությամբ Ազգային ժողովի որոշումների ընդունման այլ կարգ սահմանված չէ:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով հանդերձ, ՀՀ Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետության համար ճանաչում է միջազգային իրավունքի գերակայությունը հետեւյալ պարագաներում.

ա/ «Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան» /հոդվ. 3, մաս 2/,

բ/ հոդված 9-ում շեշտվում է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան: Պայմանը հարաբերությունների բարիդրացիական եւ փոխշահավետ լինելն է,

գ/ ՀՀ Սահմանադրությունը միջազգային մարմինների իրավագործութ-

յունը ճանաչում է 18-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով՝ ճանաչելով յուրաքանչյուր անձի իրավունքը ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին,

դ/ Սահմանադրությունը /հոդված 43/ միջազգային պայմանագրերին է վերապահում նաեւ իրավունքների սահմանափակման շրջանակների սահմանման որոշիչ դերը:

Նշյալ հանգամանքները հաշվի առնելով է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ կետով օրենսդրական քաղաքականության իրականացման շրջանակներում պահանջվում է օրենքի նախագծի վերաբերյալ, ի թիվս այլնի, պաշտոնական եզրակացությունում նշել ոչ միայն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին, այլև միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխանության վերաբերյալ փորձաքննության արդյունքները:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ իրավական, ժողովրդավարական պետության կայացման միջազգայնորեն ճանաչված արժեհամակարգային հիմնարար սկզբունքներն են դառնում ազգային իրավական համակարգի հենքը: Միաժամանակ, դրանք բացարձակ չեն կարող լինել եւ պետք է ունենան տվյալ ազգի ու պետության հիմնարար շահերից բխող ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներ, որպիսիք են.

ա/ իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքներին հավատարիմ մնալը,

բ/ իրավունքի գերակայության երաշխավորումը,

գ/ ժողովրդի ինքնիշխանության ճանաչումն ու երաշխավորումը,

դ/ միջազգային ու տարածաշրջանային ինտեգրման գործընթացներին պետության ինքնակամ մասնակցության եւ դրանից իր ցանկությամբ ու իր ժողովրդի շահերից ելնելով հրաժարվելու իրավունքի երաշխավորվածությունը:

Միջազգային իրավունքի կարելու բաղադրիչներից են նաեւ.

ա/ իրավակարգավորումների շուրջ փոխշահավետ պայմանավորվածությունները,

բ/ դրանց իրացման ու վերահսկման կառուցակարգերի ստեղծումը,

գ/ առաջացած տարաձայնությունների հաղթահարման իրավական ընթացակարգերի փոխճանաչումը:

Որքան էլ միջազգային ինտեգրման գործընթացներն անշրջելի են ու վճռորոշ յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման համար, այդու-

ամենայնիվ, դրանք պահանջում են նաև կազմակերպակառուցվածքային համարժեք իրավաչափ լուծումներ: Ինչպես նշվեց, համաշխարհային տնտեսությունը տնտեսական հարաբերությունների ու դրանց իրավակարգավորման ողջ համակարգով դուրս է եկել ցանկացած երկրի պետական սահմաններից եւ վերպետական բնույթ է ստացել: Աշխարհում աճող տնտեսական փոխկապվածությունը մղում է առավել ընդհանուր, համատեղ եւ արդյունավետ ջանքերի այնպիսի հիմնական համաշխարհային խնդիրների լուծման համար, ինչպիսիք են սննդի, էներգետիկ, հումքային, արժույթային եւ ֆինանսական խնդիրները: Դրանով իսկ ընդգծվում է նոր բնույթի եւ փոխշահավետ միջազգային տնտեսական խոր ինտեգրման անհրաժեշտությունը, որը բոլոր երկրների կայուն զարգացման երաշխիքն է դառնում: Ավելին, նոր հազարամյակում մեզակոնոմիկան դարձել է օբյեկտիվ իրականություն եւ պետություններին գործակցության իր պահանջներն է առաջադրում, առանց որի հաշվառման դժվար է հաջողություն ակնկալել:

Վերպետական կառույցները ձեւավորվում են վերպետական հարթակի օբյեկտիվ իրավահարաբերություններից բխող խնդիրների փոխհամաձայնեցված լուծման համար: Դա արդեն վերպետական գործակցության բոլորովին այլ որակ է: Յուրաքանչյուր երկրի ինքնակամ մասնակցությամբ ձեւավորված վերպետական մարմնի որոշումներում առկա է ազգային մասնակցության կամքի արտահայտությունն այն մանդատով, որը մասնակցին իր իսկ ազգային շահերից ելնելով, վերապահվել է վավերացված միջազգային պայմանագրի ուժով: Ազգային կառույցներն իրենց գործառնություններն իրականացնում են ներպետական իրավական համակարգի անբաժանելի մաս հանդիսացող միջազգային պայմանագրերի իրավակարգավորումները հաշվի առնելով:

ՀՀ Սահմանադրության նախաբանում հավաստելով իր հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրական կարգի հիմունքներով արտաքին քաղաքականության իրականացման հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործում գերակայություն վերապահելով միջազգային իրավունքին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որեւէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Սակայն դրա համար առկա են նաև սահմանադրական հստակ պահանջներ, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության թե՛ արժեքանությունից եւ թե՛ մի շարք կոնկրետ դրույթներից:

Դրանք են.

1/ պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանության երաշխա-

վորումը,

2/ միջազգային հարաբերությունների իրավահավասարությունն ու փոխշահավետությունը,

3/ մարդու իրավունքների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք համարժեք են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,

4/ Հայաստանի համար վերալեռական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որեւէ վերալեռական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում: Իսկ այդ պահանջների պահպանման պարագայում Հայաստանի Հանրապետության կողմից այս կամ այն տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության հետ գործակցությունը սահմանադրականության խնդիր չի կարող առաջացնել: Սա ամբողջությամբ վերաբերում է նաև քննության առարկա Պայմանագրին ու դրա շրջանակներում ստանձնվող միջազգային պարտավորություններին:

8. ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները, սույն գործով արձանագրում է, որ, մասնավորապես, ՀՀ Սահմանադրությանը համահունչ են քննության առարկա Պայմանագրի հիմքում դրված արժեքանական նշանակության այն հիմնարար սկզբունքները, որոնց համաձայն Եվրասիական տնտեսական միության շրջանակներում պետությունների փոխհարաբերությունների առանցքն են կազմում.

- միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների՝ ներառյալ անդամ պետությունների ինքնիշխան հավասարության հարգումը,

- անդամ երկրների քաղաքական կարգի առանձնահատկությունների հարգումը,

- փոխշահավետ համագործակցության ապահովումը, իրավահավասարությունը, կողմերի ազգային շահերը հաշվի առնելը,

- շուկայական տնտեսության սկզբունքների պահպանումը եւ բարեխիղճ մրցակցությունը /«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 3-րդ հոդված/:

Սահմանադրականության առումով խնդիրներ չեն հարուցում նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում ամրագրված՝ Միության նպատակները /հոդվ. 4/, համաձայն որոնց նպատակ է

դրվում.

- պայմաններ ստեղծել անդամ երկրների տնտեսությունների կայուն զարգացման համար՝ նրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերից ելնելով,

- Միության շրջանակներում ձգտել ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի միասնական շուկայի ձեւավորմանը,

- համաշխարհային գլոբալ տնտեսության պայմաններում ապահովել ազգային տնտեսությունների համակողմանի արդիականացումը, համագործակցությունը եւ մրցունակության բարձրացումը:

Այդ նպատակների իրականացմանն են կոչված տվյալ պայմանագրով նախատեսված մարմինների ձեւավորումը, որոնցում Կողմերն ունեն մասնակցային իրավահավասար դերակատարություն, իսկ առանցքային հարցերը լուծվում են փոխհամաձայնությամբ՝ պահպանելով յուրաքանչ-յուրի վետոյի իրավունքը:

9. Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու անհրաժեշտության ու նպատակահարմարության հարցը համարելով ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում լուծվելիք խնդիր, ՀՀ սահմանադրական դատարանը քննության առարկա Պայմանագրի սահմանադրականության տեսանկյունից կարելոքում է նաեւ առանցքային նշանակության մի շարք այլ հանգամանքներ:

Նախ համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի՝ ԵԱՏՄ շրջանակներում ձեւավորվող մարմինների գործունեության հիմքում նույնպես դրվում են.

- պետությունների ինքնիշխան զարգացման սկզբունքով ղեկավարվելը,
 - մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների գերակայության սկզբունքով անվերապահորեն առաջնորդվելը,

- կողմերի ազգային շահերի հարգումը,

- փոխշահավետ եւ իրավահավասար տնտեսական համագործակցությունը հաշվի առնելով Առեւտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում սահմանված նորմերը, սկզբունքներն ու կանոնները,

- ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին հավատարմությունը:

Երկրորդ՝ Միության բարձրագույն մարմիններում՝ Բարձրագույն խորհրդում եւ Միջկառավարական խորհրդում եւ Հանձնաժողովի խորհրդում նախագահությունն իրականացվում է ռոտացիոն սկզբունքով /հոդվ. 8/, իսկ որոշումներն ընդունվում են միայն փոխհամաձայնությամբ /կոնսենսուսով/ /հոդվ. 13, 17, 18/: Բոլոր այլ մարմինների որոշումները բողոքարկելի են Միության բարձրագույն մարմիններում: Ընդ որում,

Միության Բարձրագույն խորհուրդը սահմանում է նաև «զգայուն» հարցերի ցանկը, որոնց վերաբերյալ Միության հանձնաժողովի կոլեգիայի որոշումները նույնպես ընդունվում են կոնսենսուսով /հոդվ. 18/: Բացի դրանից, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի եւ Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները ենթակա են անդամ պետությունների կողմից՝ նրանց ազգային օրենսդրությամբ նախատեսվող կարգով, կատարման /հոդվ. 6/: Միության մարմիններում Կողմերի հավասար ներկայացվածության սկզբունքը վերաբերում է ոչ միայն բարձրագույն մարմիններին, այլև ընդհուպ Հանձնաժողովի ղեկարտամենտների պաշտոնատար անձանց /հոդվ. 9, կետ 2/, ինչպես նաև Միության դատարանին /Դատարանի կանոնադրություն, գլխ. 2, կետ 7/:

Երրորդ ապրանքների ներքին շուկայի գործունեության կարգում նախատեսվում են հստակ բացառություններ, որոնք անհրաժեշտ են անդամ պետությունում մարդու կյանքի եւ առողջության պահպանման, հասարակական բարոյականության եւ իրավակարգի պահպանման, շրջակա միջավայրի պահպանման, կենդանիների եւ բույսերի, մշակութային արժեքների պահպանության, միջազգային պարտավորությունների կատարման, երկրի պաշտպանության եւ անդամ պետության անվտանգության ապահովման համար /հոդվ. 29/: Միաժամանակ, նախատեսվում է տնտեսական քաղաքականության իրականացում՝ ուղղված անդամ պետությունների ազգային արժույթների նկատմամբ վստահությունը բարձրացնելուն՝ ինչպես յուրաքանչյուր անդամ պետության ներքին արժույթային շուկայում, այնպես էլ միջազգային արժույթային շուկաներում (հոդվ. 64):

Չորրորդ Պայմանագրի 1-ին հավելվածով ներկայացված՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձեւավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի հիմքում նույնպես դրվում է Կողմերի միջազգային պարտավորությունների հարգման, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով ու սկզբունքներով ղեկավարվելու պահանջը: Եվրասիական տնտեսական ինտեգրումն իր ողջ ծավալով կառուցված է միջազգային պայմանագրերի վրա, իսկ Կողմերի պարտավորությունները խարսխված են կամավորության ու փոխշահավետության վրա:

Հինգերորդ Պայմանագրի 2-րդ հավելվածով Հայաստանի Հանրապետության միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձեւավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ հաշվի են առնվում Հայաստանի Հանրապետության սահ-

մանադրաիրավական կարգավորումներին բնորոշ մի շարք առանձնահատկություններ:

Վեցերորդ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ կազմում են տվյալ պայմանագրի անբաժանելի մասը /հոդվ. 115/:

Յոթերորդ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրից դուրս գալու կարգը՝ համաձայն այդ պայմանագրի 118-րդ հոդվածի, սահմանված է միջազգային պայմանագրերի համար նախատեսված ընթացակարգերին /մասնավորապես՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիային/ համապատասխան: Ընդ որում, եթե Եվրասիական տնտեսական միությանը միանալու հարցը լուծվում է Բելառուսի, Ղազախստանի եւ Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված 2014թ. հոկտեմբերի 10-ի Պայմանագրի 1-ին հոդվածի հիման վրա, ապա Եվրասիական տնտեսական միության կազմում իր անդամակցության դադարման գործընթացը Հայաստանը կարող է նախաձեռնել ցանկացած պահի՝ համաձայն արդեն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014թ. մայիսի 29-ի պայմանագրի 118-րդ հոդվածի 1-ին կետի: Դրան համապատասխան ՀՀ սահմանադրական դատարանը որպես իրավական հիմք է ընդունում այն, որ պետությունների ինքնիշխանությունը հարգելու սկզբունքի հիման վրա Պայմանագրի գործողությունը տվյալ պետության նկատմամբ դադարում է ավանդապահի կողմից համապատասխան գրավոր ծանուցում ստանալու օրվանից սկսած 12 ամիսը լրանալուն պես:

10. Վերոշարադրյալ առանձին պարտավորությունների կատարումն ապահովելու առումով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ ՀՀ Ազգային ժողովը «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով արդեն իսկ կանոնակարգել է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային մարմինների որոշումների կատարման ապահովման իրավական պայմանները: Մասնավորապես, հիշյալ օրենքի 55-րդ հոդվածով սահմանվում է, որ.

«1. Միջազգային կազմակերպության հիմնադրման (ստեղծման) մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կատարվում է սույն գլխի նորմերով սահմանված ընդհանուր կարգով:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի համաձայն ստեղծված միջազգային կազմակերպության ղեկավար եւ մյուս մարմինների (այսուհետ՝ մարմին) որոշումները, բանաձեւերը, արձանագրությունները (այսուհետ՝ որոշում) Հայաստանի Հանրապետության կողմից կատարվում են տվյալ միջազգային կազմակերպության հիմնադրման

եւ նրա գործունեությունը կանոնակարգող այլ միջազգային պայմանագրերին (այսուհետ՝ հիմնադիր փաստաթղթեր) համապատասխան:

Միջազգային կազմակերպության մարմնի որոշումը միջազգային պայմանագիր չի համարվում եւ Հայաստանի Հանրապետության կողմից կատարվում է այնքանով, որքանով տվյալ միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով դա օժտված է համապատասխան իրավաբանական ուժով:

3. Եթե միջազգային կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով սահմանված է, որ դրա մարմնի ընդունած որոշումները պարտադիր են կազմակերպության մասնակից պետությունների համար, կամ վերջիններս պարտավորություն են ստանձնել կատարելու այդ որոշումները, ապա պատասխանատու գերատեսչությունը ապահովում է դրանց կատարումը, անհրաժեշտության դեպքում՝

1) ընդունելով համապատասխան նորմատիվ գերատեսչական կամ այլ իրավական ակտ.

2) մշակելով Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի (կարգադրության), կառավարության կամ վարչապետի որոշման նախագիծ եւ սահմանված կարգով ներկայացնելով կառավարության քննարկմանը:

Եթե միջազգային կազմակերպության մարմնի՝ նորմատիվ իրավական ակտի ընդունում պարունակող որոշման հիման վրա կատարված ուսումնասիրությունից հետեւում է, որ համապատասխան հարցերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգավորված են, ապա պատասխանատու գերատեսչությունը պատճառաբանված տեղեկանք է ներկայացնում կառավարություն՝ նորմատիվ իրավական ակտի ընդունման անհրաժեշտության բացակայության մասին:

4. Եթե միջազգային կազմակերպության որոշումը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության հետ համադրումից հետեւում է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է ընդունի նոր օրենք կամ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարի գործող օրենքում, ապա իրավասու գերատեսչությունը պարտավոր է սահմանված կարգով ձեռնամուխ լինել համապատասխան օրենքի նախագծի մշակմանը եւ կառավարության քննարկմանը ներկայացնելու ընթացակարգերի իրականացմանը:

Համապատասխան ընթացակարգերը պետք է իրականացվեն միջազգային կազմակերպության մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում, իսկ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով վարչապետի կամ կառավարության որոշմամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված ժամկետում:

Մինչեւ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքում

անհրաժեշտ փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելը չեն կիրառվում միջազգային կազմակերպության մարմնի որոշման այն դրույթները, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքին:

5. Եթե միջազգային կազմակերպության մարմնի որոշումը՝ ըստ հիմնադիր փաստաթղթերի, խորհրդատվական (երաշխավորական) բնույթի է, ապա պատասխանատու գերատեսչությունը որոշում է դրա կատարման նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետության կողմից:

Եթե պատասխանատու գերատեսչությունը գտնում է, որ նման որոշումը նպատակահարմար է կատարի Հայաստանի Հանրապետությունը, ապա իրականացնում է սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված համապատասխան ընթացակարգերը՝ ըստ անհրաժեշտության, նախապես ստանալով այդ հարցով արտաքին գործերի նախարարության կարծիքը:

6. Միջազգային կազմակերպության մարմնի գործունեության կազմակերպման եւ վարման հետ կապված հարցերով (նստաշրջանների կամ նիստերի կազմակերպում, անցկացում եւ որոշումների ընդունում) այդ մարմնի ընդունած որոշումները Հայաստանի Հանրապետության կողմից կատարվում են, եթե դրանք առնչվում են համապատասխան մարմնին որեւէ նորմատիվ կամ այլ իրավական ակտ, փաստաթուղթ, տեղեկատվություն տրամադրելուն, որի հիման վրա էլ տվյալ մարմինն իր կողմից քննարկվող հարցի վերաբերյալ ըստ էության որոշում է կայացնելու»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ նշված օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 22-ին եւ վերոնշյալ նորմերը սահմանադրական դատարանում վեճի առարկա չեն եղել: Այդ նորմերը գործել են նաեւ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը 1992 թվականի մարտի 2-ից ՄԱԿ-ի անդամ է, 2001 թվականի հունվարի 25-ից՝ Եվրոպայի խորհրդի անդամ, 2003 թվականի փետրվարի 5-ից՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ՝ իր ստանձնած միջազգային պարտավորություններով հանդերձ:

Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը կարելոքում է նաեւ, որ ելնելով, մասնավորապես, ՄԱԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի կանոնադրությունների վավերացման, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի վավերացման եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագործության ճանաչման, ինչպես նաեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու իրավական նախադրյալների ապահովման փորձառությունից, ՀՀ Ազգային ժողովը Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության իրավական երաշխիքների ամրապնդման տեսանկյունից քննության առարկա

պետք է դարձնի մի շարք օրենսդրական ակտերում համարժեք փոփոխություններ կատարելու հարցը, որոնց թիվը, համաձայն ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված տեղեկանքի, անցնում է երկու տասնյակից:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 նոյեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1175



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՄԱՔՍԱՑԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 96-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմող Ս. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Հ. Սարգսյանի եւ գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի եւ 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի՝ 2014 թվականի հունիսի 30-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ մաքսային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի հուլիսի 6-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի օգոստոսի 9-ին, ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 1-ից: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված եւ 2013 թվականի հունվարի 6-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-224-Ն ՀՀ օրենքով ՀՀ մաքսային օրենսգրքի վիճարկվող խմբագրությամբ 95-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած է ճանաչվել, իսկ 96-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել են լրացումներ:

ՀՀ սահմանադրական դատարանը քննության է ընդունել ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի եւ 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դիմողի նկատմամբ կիրառված դրույթների սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործը:

Մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի՝ սույն գործով վիճարկվող դրույթը սահմանում էր. «Ապրանքներ տեղափոխող անձի գրավոր դիմումի հիման վրա, հինգ օրվա ընթացքում, մաքսային մարմինները պարտավոր են գրավոր տեղեկացնել մաքսային արժեքի չափի եւ դրա որոշման եղանակի մասին»:

ՀՀ մաքսային օրենսգրքի վիճարկվող 96-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս, հայտարարագրի ներկայացման օրը կազմում եւ հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանած ձեռով մերժման եզրակացություն, որտեղ հիմնավորվում է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափը կամ որոշման եղանակը չընդունելու պատճառները, եւ նշվում է այն վերադաս մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, ում կարող է բողոքարկման համար դիմել հայտարարատուն»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. քաղաքացի Սերգեյ Գրիգորյանը (այսուհետ

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԾ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(75)2015
122

դիմող) 19.05.2012թ. Ճապոնիայում ձեռք է բերել 2004թ. արտադրության ավտոմեքենա (այսուհետ գույք): Ըստ դիմողի գործարքը փաստաթղթավորվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով նախատեսված պահանջներին համապատասխան հաշիվ-ապրանքագրի տեսքով: Այնուհետև, դիմողի կողմից գույքի տեղափոխման եւ ՀՀ մաքսային սահման հասցնելու ընթացքում գույքի վրա կատարված բոլոր ծախսերը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են մաքսային մարմիններին:

20.07.2012թ. գույքի մաքսագերծումն իրականացնելու նպատակով դիմողը ներկայացել է մաքսային ձեռնարկումների բաժին, որտեղ փաստաթղթերը ներկայացնելուց հետո, ըստ դիմողի տեղեկացել է, որ գույքի մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդի կիրառման պրակտիկան մաքսային մարմիններում բացառվում է:

Նույն օրը դիմողը դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին ՀՀ մաքսային օրենսգրքի 91-րդ հոդվածով նախատեսված կարգով, ներկայացնելով գույքի փաստաթղթերը եւ կատարելով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով կատարված գույքի մաքսային արժեքի հաշվարկը, եւ խնդրել է կիրառել օրենքով սահմանված հաշվարկը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 25.07. 2012թ. թիվ 23001/8-1 գրությամբ մերժել է դիմողի դիմումը՝ որպես մերժման պատճառաբանություն նշելով, որ «ներկայացված փաստաթղթերում բացակայում է Վրաստանի Փոթի նավահանգստում կատարված ավտոմեքենայի բեռնաթափման եւ մինչեւ ՀՀ մաքսային սահման Ձեր կողմից ավտոմեքենայի տեղափոխման համար կատարված հիմնավոր ծախսերը»:

Դիմողը նշված գրությունը բողոքարկել է ՀՀ վարչական դատարան՝ որպես վարչական ակտ, դատարանին խնդրելով անվավեր ճանաչել հիշյալ վարչական ակտը:

15.03.2013թ. վճռով ՀՀ վարչական դատարանը հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ դիմողի կողմից մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերում բացակայել են գույքի բեռնման եւ բեռնաթափման, ինչպես նաեւ ձեռք բերված վառելանյութի ծախսերը հավաստող փաստաթղթերը: Վարչական դատարանի եզրահանգումը հիմնվել է նաեւ այն հանգամանքի վրա, որ դիմողի կողմից մաքսային մարմիններին չէր ներկայացվել հայտարարագիր, հետեւաբար մաքսային մարմինների կողմից չէր կարող մերժված լինել նման հայտարարագիրը:

Դիմողը վերը նշված վճիռը բողոքարկել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որը 24.09.2013թ. որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի

անվավեր է ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 25.07.2012թ. թիվ 23001/8-1 գրությունը եւ վերջինիս պարտավորեցրել է գույքի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 26.12.2013թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանելով վարչական վերաքննիչ դատարանի 24.09.2013թ. որոշումը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 25.07.2012թ. թիվ 23001/8-1 գրությունն անվավեր ճանաչելու եւ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին գույքի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը կիրառելուն պարտավորեցնելու մասով եւ կարճելով վարչական գործի վարույթը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 25.07.2012թ. թիվ 23001/8-1 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ ուժի մեջ թողնելով ՀՀ վարչական դատարանի որոշումը:

3. Դիմողը գտնում է, որ սույն գործով իր նկատմամբ կիրառված նորմերն ակնհայտորեն չեն բավարարել իրավական որոշակիության պահանջները, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 8 եւ 31-րդ հոդվածներով սահմանված՝ իր սեփականության իրավունքը, որի իրացումը շարունակաբար խոչընդոտվում է գույքն օրենքով սահմանված կարգով մաքսագերծելու անհնարինության պատճառով:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված պատասխանը չի կարող դիտվել որպես վարչական ակտ, չի բխել ոչ օրենքի տեքստի նշանակությունից, ոչ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված իմաստից:

Այն, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումի պատասխանը հանդիսացել է վարչական ակտ, ըստ դիմողի՝ փաստվում է նախ նրանով, որ միայն այդպիսի վարչական ակտերով է հնարավոր ստանալ ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի եղանակով գույքի մաքսագերծման թույլտվություն (սույն հարցին իր որոշման մեջ անդրադարձել է նաեւ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը): Բացի դրանից, ըստ դիմողի՝ «հենց ՊԵԿ 20/07/2012թ.-ի գրությունն ինքնին փաստում է առ այն, որ իրավաչափորեն պրակտիկա է եղել նման դիմումներով մաքսագերծման

մեթոդի ընտրությունը կատարելը, եւ, որ ՊԵԿ ուղղված դիմումի պատասխանը, միաժամանակ, եղել է նաեւ ցուցում հենց մաքսատան պետին...»:

Ինչ վերաբերում է մաքսագերծման մեթոդի ընտրության հարցում 86-րդ հոդվածին, 128-րդ հոդվածի առաջին մասին, 134-րդ հոդվածին, 96-րդ հոդվածի 2-րդ մասին, դիմողի կարծիքով՝ այդ նորմերով նախատեսված մաքսագերծման համար ներկայացվող հայտարարագրի ներկայացումը հանդիսանում է 95-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումի պատասխանին հաջորդող փուլը, այլ ոչ գործարքի գնի մեթոդի ընտրության համար անհրաժեշտ պայման: Ըստ դիմողի՝ ավելին, ոչ միայն վարչական պրակտիկայում, այլ նաեւ հենց մաքսային օրենսգրքի ամբողջ տեքստից չի բխում, որ մաքսագերծման մեթոդի ընտրության հարցում հայտարարագրի ներկայացումը պարտադիր պայման է: Դա հնարավոր չէ պատկերացնել նաեւ գործնականում, քանի որ առանց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված դրական պատասխանի հնարավոր չէ գույքը մաքսագերծել մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված մեթոդով:

Դիմողը գտնում է, որ նման անորոշության մեկ այլ ապացույց են հանդիսանում նաեւ այս հարցի վերաբերյալ դատարանների իրարամերժ դիրքորոշումները: Ըստ դիմողի՝ Ազգային ժողովի 05.12.2012թ. «ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-224-Ն օրենքի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվել է նրանով, որ իրավական որոշակիություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով հարկավոր է դադարեցնել 95-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը, որով եւ օրենսդրի կողմից փաստվել է, որ դրա գործողությունը ստեղծում է իրավական անորոշություն:

Դիմողը նաեւ ուշադրություն է հրավիրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության հիմնական սկզբունքների ու չափորոշիչների վրա:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քննարկվող նորմերով սահմանված կարգավորումների համատեղ ամրագրումը մաքսային օրենսգրքով եւ կիրառումը մաքսային իրավա-հարաբերություններում չի հակասում իրավական որոշակիության սկզբունքին եւ չի խախտում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 82, 128, 134 եւ 96-րդ հոդվածների վերլուծության արդյունքում պատասխանողը գտնում է, որ օրենսգրքը հստակ սահմանել է ապրանքի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելու որոշակի ընթացակարգ, այն է՝ հայտարարագիր ներկայացնելու եւ

այն մաքսային մարմնի կողմից ընդունելու ձևեր: Այդ դեպքում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրում է ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը, որից հետո մաքսային մարմինների կողմից որոշվում է գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքն ընդունելու հարցը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում պատասխանողը եզրակացնում է, որ մաքսային մարմինների կողմից տրված գրավոր եզրակացությունը որեւէ կերպ չի կարող հանդիսանալ վարչական ակտ, այդ թվում՝ նաեւ միջամտող վարչական ակտ: Նշված տեղեկությունն ունի բացառապես խորհրդատվական նշանակություն, դրանով անձի իրավունքները որեւէ կերպ չեն սահմանափակվում, նրա համար որեւէ պարտականություն չի առաջանում: Նշված տեղեկատվությունն անձի կողմից կարող է օգտագործվել բացառապես օրենսգրքի 73-րդ հոդվածում նշված նպատակներով:

5. Սահմանադրական դատարանն անդրադառնալով օրենսգրքի՝ դիմողի կողմից սույն գործով վիճարկվող 95-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին, հարկ է համարում արձանագրել, որ օրենսգրքի՝ դիմողի մասնակցությամբ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ տեքստի 86 եւ 87-րդ հոդվածների, 88-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, 95-րդ հոդվածի 5-րդ մասի, 96-րդ հոդվածի 1-ին մասի, 128-134-րդ հոդվածների վերլուծությունից բխում է, որ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխողը պարտավոր էր հայտարարագրել մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը, եւ առկա չէր որեւէ խոչընդոտ, որպեսզի վերջինս մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հաշվարկեր գործարքի գնի մեթոդով կամ ինքնուրույնաբար ընտրել մաքսային արժեքի որոշման եղանակը՝ առանց ՀՀ մաքսային օրենսգրքի նախորդ խմբագրությամբ տեքստի 95-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան մաքսային արժեքի չափի եւ դրա որոշման եղանակի մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ մաքսային մարմիններին դիմում ներկայացնելու:

Այլ ինդիք է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների հնարավոր անհամաձայնությունը, որպիսի իրավահարաբերությունը կարգավորված էր եւ ներկա պահին կարգավորվում է ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի դրույթներով:

Ավելին, ավտոմեքենան երբեւէ հայտարարագրված չլինելու եւ դիմողի՝ 20.07.2012 թվականի դիմումը ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարա-

բերության ծագման պահին գործող 95-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված լինելու հանգամանքն ընդունել է նաև դիմողը, ինչը հաստատված է դիմողի գործով ընդունված վերջնական դատական ակտով, այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 26.12.2013 թվականի թիվ ՎԴ/5445/05/12 վարչական գործով կայացրած որոշմամբ:

Վերոգրյալը համադրելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի, 32-րդ հոդվածի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՌ-21 աշխատակարգային որոշման մեջ անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանն ակնհայտ անհիմն է համարում օրենսգրքի նախորդ խմբագրությամբ տեքստի՝ դիմողի կողմից վիճարկվող 95-րդ հոդվածի 1-ին մասի հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները:

Միաժամանակ, վերլուծելով միջազգային իրավական ակտերով, մասնավորապես, «Առևտրի եւ սակագների մասին» 1994թ. Գլխավոր համաձայնագրով (VII գլուխ), ՄԱԿ-ի 1973 թվականի «Մաքսային ընթացակարգերի պարզեցման եւ ներդաշնակեցման մասին» կոնվենցիայով եւ այլ փաստաթղթերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համատեքստում վիճարկվող նորմերի հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված նորմերի սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունը սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքների ու տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները բացառություն ընդհանուր կանոնից:

Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, մաքսային իրավակարգավորումների նկատմամբ լեզվատիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից:

Վերոգրյալի հիման վրա եւ միջազգային իրավական ակտերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համատեքստում սահմանադրական դատարանը գտնում է, որ մաքսային արժեքի որոշման ընդհանուր կանոնին համապատասխան՝ գործարքի գնի մեթոդի կիրառման ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել այն տրամաբանությամբ, որ այդ գործարքի իրականացման ժամանակ վճարային փաստաթղթերով ներկայացված տեղեկությունները հավաստի են ու արժանահավատ, եթե մաքսային մարմինը չի ապացուցել դրանց

անարժանահավատ կամ ոչ հավաստի լինելը:

6. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում կարելուորում է նաև վեճի առարկա հողվածների եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ մաքսային օրենսգրքի այլ հողվածների համադրված վերլուծության անհրաժեշտությունը հաշվի առնելով նաև դրանց հաճախակի փոփոխման հանգամանքը: Ի դեպ, ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում առավել հաճախակի փոփոխվող օրենքներից են հատկապես մաքսային եւ հարկային իրավահարաբերությունները կարգավորող օրենքները: Այսպես, օրինակ, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը 06.07.1998 թվականից մինչև 05.12.2013 թվականը փոփոխվել կամ լրացվել է 43 անգամ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը 19.06.1998 թվականից մինչև 21.06.2014 թվականը՝ 152 անգամ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը 08.09.1997 թվականից մինչև 21.06.2014 թվականը՝ 70 անգամ եւ այլն: Սույն գործի շրջանակներում վիճարկման առարկա դարձած ՀՀ մաքսային օրենսգրքը 26.12.2000 թվականից մինչև 21.06.2014 թվականը փոփոխվել եւ լրացվել է 40 տարբեր օրենքներով:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրությունն ստատիկ երեւույթ չէ, այն կարող է եւ պետք է ենթարկվի դինամիկ փոփոխության՝ մշտապես կատարելագործվելով տնտեսական զարգացմանը, տեղի ունեցող միջազգային ինտեգրման գործընթացներին, հասարակական հարաբերությունների վերափոխմանն ու մի շարք այլ գործոններին համահունչ: Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանը կարելուորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսեւորում եւ հայեցողության ընդլայնում: Մասնավորապես, սահմանադրական դատարանը կարելուորում է սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների փոփոխության, լրացման համատեքստում օրենսդրական նորմերի հստակության ու որոշակիության ապահովումը հայտարարատուի կողմից մաքսային արժեքի հայտարարագրման համար ներկայացվող հայտարարագրի, մաքսային մարմիններից խորհրդատվական բնույթի տեղեկատվության ստացման, մաքսային մարմինների կայացրած ակտերի բողոքարկելիության դեպքերի, հիմքերի եւ կարգի կանոնակարգման հարցում:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն արձա-

նագրում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի հոդված 96-ի առնչությամբ դիմողի կողմից բարձրացված հարցադրումների տեսանկյունից նշված հոդվածի նախկին եւ առկա իրավակարգավորումներն էականորեն չեն տարբերվում: Միաժամանակ, առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ում եւ հոդված 68-ի 9-րդ մասում համապատասխանաբար ամրագրված՝ գործի հանգամանքների ի պաշտոնե պարզման եւ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականության գնահատման վերաբերյալ դրույթներով՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ օրենսգրքի գործող խմբագրությամբ 96-րդ հոդվածի 2-րդ, 2.1-րդ եւ 3-րդ մասերով կանոնակարգվող իրավահարաբերությունների ներքին փոխհարաբերակցության եւ ներդաշնակության հիմնահարցերին: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես իրավակիրառական պրակտիկայում տեղ գտած այնպիսի իրավիճակի հաղթահարման անհրաժեշտությամբ, երբ ապրանքի մաքսային արժեքի որոշման՝ օրենքով նախատեսված հիմնական կանոնը փաստացի դառնում է բացառություն, իսկ բացառությունը՝ հիմնական կանոն:

Այսպես, օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ տարածքային (տարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային) մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս, սույն օրենսգրքով սահմանված ժամկետում կազմում եւ հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանած ձեռով մերժման եզրակացություն, որտեղ հիմնավորվում է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափը կամ որոշման եղանակը չընդունելու պատճառները, եւ նշվում է այն վերադաս մաքսային մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, ում կարող է բողոքարկման համար դիմել հայտարարատուն: Մերժման եզրակացության հետ միասին տարածքային մաքսային մարմինները հայտարարատուին ներկայացնում են մաքսային արժեքի չափը եւ որոշման եղանակը՝ հիմնավորելով նաեւ սույն օրենսգրքի 94 հոդվածով նախատեսված հերթականությամբ մաքսային արժեքի որոշման մեթոդներով ապրանքների մաքսային արժեքը որոշելու անհնարինությունը»:

«ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» 05.12.2012 թվականի ՀՕ-224-Ն ՀՀ օրենքով օրենսգրքի 96-րդ հոդվածը լրացվեց 2.1 մասով, որով սահմանվեց «Տարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման

վերաբերյալ մինչև վերջնական որոշում ընդունելը, բայց ոչ ուշ, քան սույն օրենսգրքի 87 հոդվածով սահմանված փաստաթղթերը հայտարարատուի կողմից ներկայացվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարատուին գրավոր ներկայացնում են գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները եւ առաջարկում են հայտարարատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր եւ (կամ) տեղեկություններ, որոնց քննության արդյունքում, նշյալ փաստաթղթերը եւ (կամ) տեղեկությունները ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում են որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ կամ ընդունում են հայտարարատուի կողմից ներկայացված մաքսային արժեքը»:

Օրենսգրքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ անհամաձայնության դեպքում հայտարարատուն, մերժման եզրակացությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմին կամ դատարան: Վերադաս մաքսային մարմինը պարտավոր է 30-օրյա ժամկետում կայացնել համապատասխան որոշում եւ տեղյակ պահել հայտարարատուին: Բողոքարկումը չի ազատում հայտարարատուին սահմանված ժամկետներում բողոքարկման առարկայի հետ կապված պարտավորությունների կատարումից»:

Անդրադառնալով նշված դրույթներում առկա իրավակարգավորումներին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննարկվող հոդվածի 2-րդ, 2.1-րդ եւ 3-րդ մասերի համադրված վերլուծությունից պարզ չի դառնում հայտարարատուին վերադաս մաքսային մարմնի սահմանած ձեռով մերժման եզրակացության տրամադրման, եւ մինչև վերջնական որոշում ընդունելը հայտարարատուին գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքների վերաբերյալ գրավոր տեղեկացման հերթականության եւ հոդվածի համապատասխան մասերում գործածվող «մերժման եզրակացություն» եւ «վերջնական որոշում» հասկացությունների փոխհարաբերակցության հարցը: Նման վիճակը կարող է վարչական մարմինների հայեցողության սահմանների ոչ իրավաչափ ընդլայնման եւ մարդու իրավունքների խախտման վտանգ ստեղծել:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննարկվող հոդվածի 2.1-րդ մասում առկա կանոնակարգումը, այն է՝ մինչև վերջնական որոշում ընդունելը գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքների վերաբերյալ հայտարարատուին տեղեկացնելը եւ վերջինիս լրացուցիչ փաս-

տաթղթեր եւ (կամ) տեղեկություններ գրավոր ներկայացնելու առաջարկը պետք է նախորդեն հողվածի 2-րդ մասում սահմանված մերժման եզրակացության կայացմանը:

Ինչ վերաբերում է օրենսգրքի քննարկվող հոդվածում «վերջնական որոշում», «որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ» եւ «մերժման եզրակացություն» հասկացությունների գործող օրենսդրական կանոնակարգումներին, ապա դրանցից պարզ չի դառնում, թե տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ձեռնարկ եւ բովանդակությամբ միեւնույն, թե տարբեր ակտերին: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի եւ չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության:

Նշված կարգավորումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախքան 2012 թվականի ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելը 96-րդ հոդվածով սահմանված էր միայն «մերժման եզրակացություն» հասկացությունը, իսկ 2.1-րդ մասով նշյալ հասկացությունը չի հիշատակվում, այլ գործածվում են «վերջնական որոշում» եւ «որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ» հասկացությունները: Վերոնշյալ կարգավորումների համաձայն՝ նշված երկու ակտերն ընդունվում են տարածքային մաքսային մարմինների կողմից: Միաժամանակ 96-րդ հոդվածի 3-րդ մասը չի նախատեսում նույն հոդվածի 2.1-րդ մասով սահմանված տարածքային մարմինների կողմից ընդունված որոշումների բողոքարկման հնարավորություն նախատեսելով միայն մերժման եզրակացության բողոքարկումը: Օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ, 2.1-րդ եւ 3-րդ մասերում սահմանված ոչ հստակ կարգավորումները կարող են հանգեցնել հայտարարատուների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացման արգելափակմանը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը չպետք է որեւիցե կերպ ոտնահարվի օրենսդրական տեխնիկայի նման թերությունների եւ բացթողումների պատճառով: Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ վերադատության կամ դատական կարգով պետք է բողոքարկելի լինեն եւ «մերժման եզրակացությունը» (նման դատական բողոքարկման հնարավորություն նախատեսված է օրենսգրքի քննարկվող հոդվածի 3-րդ մասում), եւ «վերջնական որոշումը» կամ «մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ որոշումը», որոնք «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 53-ի համաձայն՝ դիտվում են որպես

վարչական ակտեր: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով եւ 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքները:

Սահմանադրական դատարանը միաժամանակ փաստում է, որ, առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով, մաքսային մարմինը, հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ կապված անհամաձայնության դեպքում, պարտավոր է օրենսգրքով սահմանված ժամկետներում դրա վերաբերյալ կայացնել պատճառաբանված եզրակացություն եւ/կամ որոշում, եւ անկախ հայտարարատուի գրավոր կամ բանավոր պահանջից՝ պետք է հայտարարատուին տրամադրի նշյալ եզրակացությունը եւ/կամ որոշումը՝ վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար: Իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրաիրավական առումով իրավաչափ նման մոտեցմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 32, 60, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Քաղաքացի Սերգեյ Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի եւ 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի մասով կարճել:

2. ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1176



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի՝ Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Պ. Սաֆարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի՝ 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների՝

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(75)2015
133

միջեւ 2014 թվականի նոյեմբերի 19-ին ստորագրված՝ «Զարգացման քաղաքականության երկրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի նոյեմբերի 28-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկառու) եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ Վարկատու) միջեւ ստորագրվել է 2014 թվականի նոյեմբերի 19-ին, որի նպատակն է 75.000.000 (յոթանասունհինգ միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկային միջոցներով (այսուհետ՝ Վարկ) ֆինանսական աջակցություն ցուցաբերել Համաձայնագրի առդիր 1-ի I բաժնում նախատեսված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կատարմանը, մասնավորապես՝ տեսչական մարմինների համակարգի, մաքսային գործընթացների եւ օդային փոխադրումների, ինչպես նաեւ վարկերի հասանելիության, քաղաքացիական ծառայության, էլեկտրոնային կառավարման, հարկային եկամուտների հավաքագրման գործընթացների բարեփոխումների, հանքային ոլորտում բնապահպանական կայունության եւ հանրային ենթակառուցվածքների կայունության բարելավման ու սոցիալական աջակցության ընդլայնման բնագավառներում:

Համաձայնագրի առդիր 1-ի II բաժնի «Ա» կետի համաձայն՝ Վարկառուն կարող է օգտագործել Վարկի միջոցները նաեւ լրացուցիչ այն ցուցումների դրույթներին համապատասխան, որը Բանկը կարող է ծանուցման միջոցով նախատեսել Վարկառուի համար:

Ըստ Համաձայնագրի II հոդվածի՝ Վարկառուի կողմից վճարման ենթակա սկզբնական միջնորդավճարի չափն է Վարկի գումարի 0.25%-ը, իսկ վճարման ենթակա պարտավորության վճարինը՝ Վարկի չօգտագործված մնացորդի տարեկան մեկ տոկոսի մեկ քառորդը (0.25%):

Վարկի հիմնական գումարի մարման ժամկետը 25 տարի է, որից 14.5 տարին՝ արտոնյալ տոկոսադրույթով:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է կազմում նաեւ 2-րդ առդիրը («Մարման ժամանակացույց»):

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ հավանություն է տվել Համաձայնագրին:

3. Բացի Համաձայնագրով նախատեսված ժամանակացույցին համապատասխան Վարկի մարման եւ դրանով պայմանավորված պարտադիր վճարների կատարման հետ կապված կոնկրետ պարտավորություններից, Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է նաեւ հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- առանց ուշացման Բանկին տրամադրել Համաձայնագրի II հոդվածի դրույթներին վերաբերող այն տեղեկատվությունը, որը ժամանակ առ ժամանակ Բանկը կարող է ողջամտորեն պահանջել,

- Բանկի հետ փոխանակել մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի եւ Ծրագրի իրականացման մասին Վարկառուի տեսակետը,

- Բանկի ուսումնասիրմանն ու գնահատմանը ներկայացնել Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվություն՝ այնպիսի մանրամասնությամբ, որ Բանկը ողջամտորեն կպահանջի,

- Բանկին տեղեկացնել ցանկացած իրավիճակի մասին, որն էապես կհակասի Ծրագրի նպատակներին կամ Ծրագրի շրջանակում ձեռնարկված որեւէ գործողության իրականացմանը,

- ապահովել, որ Վարկի միջոցների ավանդադրումից անմիջապես հետո Վարկառուի բյուջետային կառավարման համակարգում հաշվառվի համարժեք գումար՝ Բանկի համար ընդունելի կարգով,

- չօգտագործել Վարկի միջոցները բացառված ծախսեր ֆինանսավորելու նպատակով (Համաձայնագրի առդիր 1-ի Բաժին II, «Ե» կետ),

4. Համաձայնագրում նախատեսված են կողմերի իրավունքների ու պարտականությունների կատարումն ապահովող այլ դրույթներ, որոնք բխում են նաեւ 2012թ. մարտի 12-ի՝ «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի վարկերի ընդհանուր պայմաններում» կատարված փոփոխություններից, ինչպես նաեւ Համաձայնագիրը գործողության մեջ դնելու ընթացակարգեր:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սահմանադրաիրավական խնդիրներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ 2014 թվականի նոյեմբերի 19-ին ստորագրված՝ «Զարգացման քաղաքականության երկրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1177

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ
ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ՝ ՂԱՐԱԲԱՂԻ
ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԵՒ
ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Հարգարժան պարոն Սահակյան,

Ջերմորեն շնորհավորում եմ Արցախի ողջ ժողովրդին՝ Ղարաբաղի պետական անկախության մասին հանրաքվեի եւ ԼՂՀ Սահմանադրության օրվա առիթով:

Սահմանադրությունը ոչ միայն պետականության վկայագիրն է, այլև կենսագոյի հիմնարար արժեքների շուրջ հասարակական համաձայնության վկայությունը: Իսկ այդ արժեքներն Արցախում դարավոր ու ամուր արմատներ ունեն եւ երաշխիքն են պետականության կայացման հետագա հաջողությունների:

Արցախի մեծագույն առավելությունն այն է, որ երկրում Սահմանադրության հետ մեկտեղ առկա է նաեւ սահմանադրականության անհրաժեշտ միջավայր, սահմանադրական մշակույթի եւ սահմանադրական բարոյականության ցանկալի մակարդակ, ինչը պետք է սրբությամբ պահպանել:

Արցախի հերոս ժողովուրդն արժանի է ունենալ այնպիսի սահմանադրական կարգ, որի առանցքը մարդն է ու նրա արժանապատվությունը՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեք:

Նորանոր հաջողություններ եմ մաղթում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը պետականության և երկրում կայուն խաղաղության հաստատման գործում:

Գ. Հարությունյան

10 դեկտեմբերի 2014 թ.

ՌՈՒՍԱԿԱՆ ԲՈՒՀԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՀՀ ՄԴ-ՈՒՄ



Դեկտեմբերի 11-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր Ռուսաստանի ժողովրդական տնտեսության եւ պետական ծառայության ակադեմիայի Հյուսիս-արեւմտյան կառավարման ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Վլադիմիր Շամախովի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության Հայաստան կատարած այցի գլխավոր նպատակը ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ երկարատեւ համագործակցության մեմորանդումի ստորագրումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը, հանդիսանալով ՌԴ Հյուսիս-արեւմտյան կառավարման ինստիտուտի պատվավոր դոկտոր եւ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հիմնադիրներից մեկը, հյուրերի հետ մանրամասն քննարկեց հետագա համագործակցության

մի շարք ծրագրեր:

Հյուրերի խնդրանքով պարոն Հարությունյանը նրանց ծանոթացրեց նաեւ ՀՀ ՄԴ գործունեությանը:


ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՀ ՄԴ-ՈՒՄ



Դեկտեմբերի 11-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի արտակարգ եւ լիազոր նորանշանակ դեսպան **Թիան Էրլունին**:

Հիշողություններով սկսված գրույցը շարունակվեց երկկողմ հարաբերությունների էլ ավելի

խորացման, արդյունավետ համագործակցությունը շարունակական դարձնելու, իրավական ոլորտում նոր նախաձեռնություններ իրականացնելու շուրջ: Փաստվեց այդ ուղղությամբ կատարված մեծ աշխատանքը նախկին դեսպանի կողմից, ով հրաժեշտի այցին արժանացավ ՀՀ ՄԴ ոսկե հուշամեդալի:



Երկուստեք կարեւորեցին համագործակցության հետագա ամրապնդման անհրաժեշտությունը, պայմանավորվեցին սահմանադրական զարգացումների արդի հիմնախնդիրների շուրջ համատեղ քննարկումների կազմակերպման մասին:

Հանդիպումն իր բնույթով բարեկամական էր, քանի որ, երբ 1992 թվականին պարոն Գ. Հարությունյանը Հայաստանի Հանրապետության կողմից առաջին պաշտոնական այցը կատարեց Չինաստան, հայ պատվիրակության հետ աշխատել է նաեւ նորանշանակ դեսպանը:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՉԱՆՑԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Հարգարժան պարոն նախարար.



Հայոց բանակի կազմավորման 23-ամյակի առիթով իմ ողջույնն եմ բերում մեր զինվորներին ու սպաներին, Հայոց բանակի վետերաններին, ազատամարտիկներին:

Բանակի կայացումն ի կատար ածվեց պատերազմի դաշտում, կենաց ու մահու կռիվների մեջ: Իր հիմքում ունենալով ազգային ոգու

հենքը եւ երկիրը պաշտպանելու երկրապահական ազնիվ մղումն ու ոգևորությունը Հայոց բանակը կայացավ որպես պետականության մնայուն եւ հուսալի կառույց, որպես ազգային լինելիության խորհուրդ եւ պաշտպան, որպես ազգային ինքնության վերահաստատման եւ անկախ պետականության կայացման հենասյուն:

Հպարտ եմ, որ լինելով ՀՀ փոխնախագահ-վարչապետ՝ 1992 թվականի հունվարի 28-ին ստորագրել եմ կառավարության այն որոշումը, որը համարվում է Հայոց բանակի ստեղծման իրավական հիմքը: Դա նորանկախ երկրի համար դժվարագույն շրջան էր: Սակայն համակարգային վերափոխումների աննախադեպ գործընթացում առաջնահերթություններին մեկը, անշուշտ, Հայոց բանակի ստեղծումը պիտի լիներ:

Հայ ժողովուրդը հավաքական կերպով ընկալեց դարերի մեր երազանք՝ Հայոց ազգային բանակ ունենալու անհրաժեշտությունը: Հայրենիքի զգացողությամբ ապրող յուրաքանչյուր հայ, վստահ եմ, այս հոգաձությամբ է մոտենում Հայոց բանակի կայացման փաստին, այս հոգաձությամբ է վերաբերվում բանակի զորացմանն իրենց անմնացորդ նվիրումը բերողներին՝ խորին ակնաձանքով պահելով մեզանից անժամանակ հեռացածների խնկելի հիշատակը:

Փառք ու պատիվ մեր բանակին, հարատև խաղաղություն Հայոց աշխարհին:

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27 հունվարի 2015թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵԴԵՎԿՎԻՐ ♦ 1(75)2015



ԱՄՆ ԴԵՍՊԱՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Մարտի 2-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում ԱՄՆ նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան **Ռիչարդ Միլսին**:

Դեսպանն ափսոսանք հայտնեց, որ այս ճանաչողական հանդիպումն ուշանում էր Սահմանադրական դատարանի նախագահի զբաղվածության պատճառով:

Պարոն Հարությունյանը նորանշանակ դեսպանին ծանոթացրեց ՄԴ ստեղծման պատմությանն ու գործունեության առանձնահատկություններին, ապա, հյուրի խնդրանքով, հանգամանալից ներկայացրեց Հայաստանում սահմանադրական բարեփոխումների գործընթացն ու հետագա անելիքները:



Երկուստեք կարեւորվեց ԱՄՆ դեսպանատուն-ՀՀ ՄԴ կապերի ամրապնդումը, եւ հետագա համագործակցության պայմանավորվածություն ձեռք բերվեց:

ՀՅՈՒՐ ԷԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ



Երեւանի Կ. Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները ուղեկցությամբ դպրոցի փոխտնօրեն Օ. Ժամկոչյանի եւ պատմության ուսուցչուհի Ա. Ստեփանյանի, հյուրընկալվեցին ՀՀ սահմանադրական դատարանում:

Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Ա. Հակոբյանը նիստերի սրահում նրանց ծանոթացրեց Սահմանադրական դատարանի

րանի ստեղծման պատմությանը, կառուցվածքին, գործառույթներին եւ նիստերի վարման կարգին:

Հընթացս տրվեցին հարցեր, որոնք սպառնիչ պատասխաններ ստացան:

Հյուրերին տրվեցին սահմանադրական դատարանի կողմից հրատարակվող Տեղեկագրի, քառալեզու Տարեգրքի, եւ "Конституционное Правосудие" ամսագրի օրինակներ:



ՀՀ ՍԴ ԼԱԽԱԳԱՀԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Մարտի 18-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) բյուրոյի անդամ Գագիկ Հարությունյանը մեկնեց Վենետիկ: Պարոն Հարությունյանը մասնակցեց Վենետիկի հանձնաժողովի լիազույժար նիստին եւ Սահմանադրական դատարանների համաշխարհային կոնգրեսի բյուրոյի նիստերին:

Աշխատանքային հանդիպումների շրջանակներում Վենետիկի հանձնաժողովի փորձագետների հետ համաձայնեցրեց Երեւանում կայանալիք հանդիպման ժամանակացույցը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հետ կապված հարցերի վերաբերյալ:

Մարտի 21-ին Գ. Հարությունյանը, որպես Սահմանադրական դատարանների համաշխարհային կոնգրեսի բյուրոյի նախագահ, նախագահեց Սահմանադրական իրավունքի համաշխարհային կոնգրեսի բյուրոյի նիստը, որտեղ քննարկվեցին 10-ից ավելի հարցեր, եւ, մասնավորապես, որոշվեցին 4-րդ Կոնգրեսի հրավիրման վայրն ու թեմատիկան, ինչպես նաեւ կանոնադրական փոփոխություններին առնչվող հարցեր:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Մարտի 21-ին Վենետիկում կայացավ Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի բյուրոյի նիստը, որը նախագահում էր Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 1(75)2015

վերահսկողության մարմինների խորհրդաժողովի նախագահ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը: Բյուրոյի նիստի օրակարգում ընդգրկված էին Համաշխարհային կոնֆերանսի հետագա գործունեությանն առնչվող մի շարք հարցեր, այդ թվում ֆինանսական հաշվետվության քննարկման, կազմակերպության աշխատանքային մեթոդների հստակեցման, մասնակիցների միջև ավելի սերտ համագործակցություն հաստատելու, ինչպես նաև կոնգրեսների միջև ընկած ժամանակահատվածում վերջինիս աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու հնարավոր եղանակներին ու միջոցներին առնչվող հարցեր:



Բյուրոյի նիստում միաձայն որոշվեց Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի հաջորդ Կոնգրեսն անցկացնել 2017 թվականին Լիտվայի Հանրապետության մայրաքաղաք Վիլնյուսում: Համաշխարհային կոնֆերանսին անդամակցող սահմանադրական արդարադատության տարածաշրջանային եւ լեզվական խմբերն իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ներկայացրեցին Բյուրոյին: Բյուրոն որոշունելի համարեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի նախաձեռնությունը՝ Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների խորհրդաժողովի՝ «Սահմանադրական արդարադատություն» բանբերի տարեկան մեկ համարը նվիրել Սահմանադրական արդարադատության համաշխարհային կոնֆերանսի գործունեության լուսաբանմանը եւ դրա մասնակիցների ներկայացրած նյութերի հրատարակմանը անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով:

ՀՀ ՄԴ մամուլի ծառայություն

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 24.03.2015թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՄԴ տեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(75) 2015
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(75) 2015
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(75) 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան
դեկտեմբերի 2014թ.

2

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Ավետիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց՝ «Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման բանկի միջեւ 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Առետրի խթանման եւ որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 27.11.2014թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով Համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց .

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2014թ. օգոստոսի 6-ին:
2. Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԾ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 1(75)2015

Հանրապետությանը տրամադրել 50.000.000 ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ:

3. Համաձայնագրի նպատակն է ՀՀ արտահանման խթանումը, ներդրումների ներգրավումը եւ ձեռնարկություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունների ամրապնդումը:

4. Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հիսուն միլիոն (50.000.000) ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ Համաձայնագրի Բաժին 2.07-ի դրույթների համաձայն, Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագրի («Ծրագիր») ֆինանսավորմանն աջակցելու նպատակով: Փակման ամսաթիվը 2020թ. հունիսի 30-ն է:

5. Համաձայնագիրն ունի չորս առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Ծրագրի կատարում», Առդիր 3. «Մարման ժամանակացույց», Առդիր 4. «Հատկացումների հետ կապված ցուցանիշները», Հավելված եւ 2 Լրացուցիչ նամակներ:

6. Ծրագիրը կազմված է հետևյալ մասերից՝ Մաս Ա. «Առևտրի խթանման եւ որակի համակարգերի արդյունավետության բարելավում», Մաս Բ. «Ներդրումների եւ արտահանման խթանում», Մաս Գ. «Ազգային որակի ենթակառուցվածքի արդիականացում», Մաս Դ. «Ծրագրի կառավարում, մոնիտորինգ եւ գնահատում»:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

գ վճարել վճարման ենթակա սկզբնական վճարը Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդի (0.25%) չափով (Հոդված II. 2.03),

գ կիսամյակային մուծումներով յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին, յուրաքանչյուր Տոկոսագումարի ժամանակահատվածի համար վճարել տոկոսը, որի դրույքը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված հաշվարկային դրույթին գումարած Փոփոխական սպրեդը պայմանով, որ վարկի մայր գումարն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխարկելու դեպքում փոխարկման ժամանակաշրջանում ՀՀ կողմից վճարման ենթակա տոկոսները կհաշվարկվեն Ընդհանուր պայմանների Հոդված IV-ի դրույթների համաձայն. չնայած վերոհիշյալին, եթե վարկի առհանված մնացորդի որեւէ գումար չի վճարվում սահմանված ժամկետում, եւ նման չվճարումը շարունակվում է 30 օր ժամանակահատվածով, ապա վճարման ենթակա տոկոսները հաշվարկվել Ընդհանուր պայմանների 3.02-րդ բաժնի ե) կետին համապատասխան (Հոդված II, կետեր 2.04 եւ 2.05),

գ կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին՝ սկսած 2024 թվականի օգոստոսի 15-ից մինչեւ 2038 թվականի օգոստոսի 15-ը ներառյալ մարել Վարկի հիմնական գումարը 3.33%-ի չափով, իսկ 2039 թվականի փետրվարի 15-ին՝ 3.43%-ի չափով (Հոդված II, բաժին 2.06, Առդիր 3, կետ 1),

գ մայր գումարի վճարման ամսաթվի դրությամբ Վարկի միջոցների ամբողջությամբ չառհանման դեպքում մարել մայր գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ առհանված Վարկի գումարը՝ համաձայն Համաձայնագրի 3-րդ առդիրի 1-ին կետով նախատեսված կարգով, ինչպես նաեւ վճարման առաջին ամսաթվից հետո առհանված գումարը մարել առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին Բանկի կողմից որոշված չափով՝ բազմապատկելով մասհանված յուրաքանչյուր գումարը կոտորակային թվով, որի համարիչում Մայր գումարի վճարման ամսաթվի համար Համաձայնագրի 3-րդ ժամանակացույցի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված մասնակի մարման սկզբնական մասնաբաժինն է (Մասնակի մարման սկզբնական մասնաբաժին), իսկ հայտարարում՝ այդ ամսաթվի դրությամբ կամ դրան հաջորդող Մայր գումարի վճարման ամսաթվերին մարման ենթակա բոլոր սկզբնական մասնակի մարման մասնաբաժինների հանրագումարը. անհրաժեշտության դեպքում նշված գումարները ճշգրտել՝ նվազեցնելով Համաձայնագրի 3-րդ առդիրի 4-րդ կետում նշվող այն գումարները, որոնց վրա տարածվում է արժույթի փոխարկումը (Առդիր 3, կետ 2),

գ փաստել Ծրագրի նպատակի իրագործման՝ ՀՀ հանձնառության մասին եւ այս նպատակով, Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթների համաձայն, Ծրագիրն իրականացնել՝ Ծրագրի Ա, Գ եւ Դ մասերը Էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) միջոցով՝ միաժամանակ համակարգելով Ծրագրի Գ մասի իրականացումը Չափագիտության ազգային ինստիտուտի (ՉԱԻ), Հավատարմագրման ազգային մարմնի (ՀԱՄ) եւ Ստանդարտացման ազգային ինստիտուտի (ՍԱԻ) հետ, Ծրագրի Բ.1 եւ Բ.2 մասերը՝ «Հայաստանի ներդրումների, արտահանման խթանման եւ արդյունաբերության զարգացման գործակալության» (ՆԱԽԳ) միջոցով, եւ Ծրագրի Բ.3 մասը՝ ՆԱԽԳ-ի եւ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) միջոցով (հոդված III., 3.01),

գ չսահմանափակելով Համաձայնագրի 3.01 Բաժնի դրույթները, եւ եթե Հայաստանի Հանրապետությունը եւ Բանկը ձեռք չեն բերում այլ համաձայնություն՝ ապահովել Ծրագրի իրականացումը Համաձայնագրի 2-րդ Առդիրի դրույթների համաձայն (հոդված III., 3.02),

գ Ծրագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո ստեղծել Էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ գործող Ծրագրի ղեկավար

հանձնաժողով (ԾՂՀ), որը կգործի մինչև Ծրագրի ավարտը եւ կվերահսկի Ծրագրի իրականացումը (Առդիր 2, Բաժին I, մաս «Ա», կետ 1),

զ ձեւավորել Ծրագրի կառավարման գրասենյակ (ԾԿԳ) ԷՆ-ի կազմում, որը պատասխանատու կլինի Ծրագրի ընդհանուր համակարգման, դիտանցման ու գնահատման, ապահովության երաշխիքների համապատասխանության, Ծրագրի իրականացման մասին Բանկին եւ ԾՂՀ-ին հաշվետվությունների ներկայացման համար, ինչպես նաեւ ապահովել, որպեսզի Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում իր պարտականությունների կատարման համար ԾԿԳ-ն ապահովված լինի համապատասխան կարողություններով եւ միջոցներով (Առդիր 2, Բաժին I, մաս «Ա», կետ 1),

զ ապահովել Ծրագրի իրականացումը՝ Կոռուպցիայի դեմ պայքարի ուղեցույցների դրույթներին համապատասխան (Առդիր 2, Բաժին I, մաս «Բ»),

զ Ընդհանուր պայմանների 5.09-րդ բաժնի դրույթներին համապատասխան վարել ֆինանսական կառավարման համակարգ, չսահմանափակելով վերոհիշյալը՝ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող քառասունհինգ օրվա ընթացքում կազմել եւ Բանկին ներկայացնել Ծրագրի՝ աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ տվյալ կիսամյակի համար Բանկի համար ընդունելի ձեւաչափով եւ բովանդակությամբ (Առդիր 2, Բաժին II, մաս «Բ», կետեր 1 եւ 2),

զ Ծրագրի համար պահանջվող եւ Վարկի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել Գնումների ուղեցույցների I բաժնում սահմանվող պահանջների եւ Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, մաս «Ա», կետ 1),

զ Ծրագրի համար պահանջվող եւ Վարկի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա խորհրդատվական բոլոր ծառայությունները ձեռք բերել Գնումների ուղեցույցների I եւ IV բաժիններում սահմանվող պահանջների եւ Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, մաս «Ա», կետ 2):

8. Հաշվի առնելով, որ այս Ծրագրի նպատակն է հզորացնել ՀՀ արտահանման խթանման, ներդրումների ներգրավման եւ ձեռնարկություններին տրամադրվող՝ որակի կառավարման ծառայությունների կարողությունները, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման բանկի միջեւ 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ «Առևտրի խթանման եւ որակի ենթակառուցվածքի ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ.

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1178

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 24-ԻՆ՝
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 27-ԻՆ
ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՐԵՎԱՆԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան
դեկտեմբերի 2014թ.

2

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի՝ Ա.
Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ.
Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական
ներկայացուցիչ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-
րդ հոդվածի 2-րդ կետի՝ 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների՝

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014
թվականի հունիսի 24-ին՝ Երևանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին
Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Երևանի ջրամատակարարման
բարելավում» ֆինանսական պայմանագրում ամրագրված
պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014
թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան
մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը,
Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ գրավոր
բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս
փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական
դատարանը Պ Ա Ր Ջ Ե Ց .

1. Ֆինանսական պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2014 թվականի հունիսի 24-ին եւ նույն թվականի հունիսի 27-ին՝ համապատասխանաբար Երեւանում եւ Լյուքսեմբուրգում, որի նպատակն է Պայմանագրով նախատեսված ծրագրին համապատասխան Երեւանի ջրամատակարարման բարելավման համար Եվրոպական ներդրումային բանկի կողմից (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) տրամադրել 5.167.195.69 եվրո (7.000.000 ԱՄՆ դոլար) գումարի չափով վարկ՝ առավելագույնը թվով 5 տրանշներով (մասնաբաժիններով): Բացի դրանից, հիշյալ ծրագրի կատարմանն է ուղղվելու նաեւ Եվրոպական հանձնաժողովի կողմից տրամադրվելիք 5.500.000 եվրո գումարի չափով ներդրումային դրամաշնորհը: Վարկի տոկոսադրույքը կարող է լինել հաստատագրված կամ լողացող, որը որոշվում է Պայմանագրի 3-րդ հոդվածում սահմանված կարգով:

Պայմանագրով ֆինանսավորվող ծրագրի կատարման ժամանակահատվածը 2015 թվականի մարտի 1-ից մինչեւ 2018 թվականի մարտի 1-ն է:

2. Պայմանագիրը բաղկացած է թվով 5 հավելվածներից, որոնցում մանրամասնված են իրականացվելիք ծրագրի տեխնիկական նկարագրությունը, վարկի դիմաց վճարվելիք տոկոսադրույքների հաշվարկման հետ կապված ընթացակարգերը, ինչպես նաեւ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ այլ իրավադրույթներ:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- գրավոր տեղեկացնել Բանկին վարկային հաշվին հատկացման կատարման մասին ոչ ուշ, քան ժամանակացույցով հատկացման սահմանված ամսաթվից 15 օր առաջ, ինչպես նաեւ հաստատել, որ Բանկի վարկային հաշիվը Հայաստանի Հանրապետության սեփական բանկի հաշիվն է (1-ին հոդված, 1.02.Դ),

- եթե Հայաստանի Հանրապետության գրավոր հարցման դեպքում Բանկը հետաձգում է ընդունված տրանշի ցանկացած հատկացումը մասամբ կամ ամբողջությամբ, մինչեւ Հայաստանի Հանրապետության կողմից նշված ամսաթիվը, վճարել հետաձգման փոխհատուցում, որը հաշվարկվում է հետաձգված հատկացման գումարի հիման վրա (1-ին հոդված, 1.05.Ա),

- վճարել Բանկին կանխավճարի փոխհատուցում այն դեպքում, երբ Բանկը չեղյալ է հայտարարում ֆիքսված տոկոսադրույքով տրանշը (1-ին հոդված, 1.06. Գ., բ) կետ, i) ենթակետ),

- կատարել փոխհատուցում Բանկին 10.03-րդ հոդվածով սահմանված

կարգով, այն դեպքում, երբ Բանկը չեղյալ է հայտարարում ընդունված տրանշը պարտավորության չկատարման դեպքի առաջացման պատճառով (1-ին հոդված, 1.06. Գ., բ) կետ, ii) ենթակետ),

- Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 15 օրվա ընթացքում վճարել գնահատման վճար (50.000 եվրո) կամ երաշխավորել դրա վճարումը Բանկին, որը կատարվում է ծրագրի հետ կապված Բանկի կողմից իրականացված գնահատման դիմաց (1-ին հոդված, 1.08),

- ԱՄՆ դոլարով վճարել յուրաքանչյուր տրանշի համար տոկոսներ, հետվճարումներ եւ այլ գանձումներ (2-րդ հոդված, 2.02),

- տոկոսի վճարումը կատարել մասերով ֆիքսված տոկոսադրույքով յուրաքանչյուր տրանշի չմարված հաշվեկշռի մասով՝ ֆիքսված տոկոսադրույքով, կիսամյակային կտրվածքով (3-րդ հոդված, 3.01.Ա),

- տոկոսի վճարումը կատարել մասերով եւ այն ժամանակահատվածում, որը սահմանված է պայմանագրի 3-րդ հոդվածի 3.01.Բ. բաժնում,

- յուրաքանչյուր տրանշ հետ վճարել մասնաբաժիններով եւ հատկացման առաջարկում սահմանված ամսաթվերին (4-րդ հոդված, 4.01.Ա),

- Բանկին վճարել կանխավճարի փոխհատուցումը կանխավճարի ամսաթվին, ֆիքսված տոկոսադրույքով տրանշի առնչությամբ, որը նախապես վճարվում է այն դեպքում, երբ Վարկառուն նախօրոք վճարում է ֆիքսված տոկոսադրույքով տրանշը (4-րդ հոդված, 4.02.Բ., 1) կետ),

- կանխավճարի հետ միաժամանակ վճարել նաեւ կանխավճարի գումարի կուտակված տոկոսները եւ, առկայության դեպքում, փոխհատուցման տույժի գումարը (4-րդ հոդված, 4.02.Գ),

- տրանշի համար համապատասխան վճարման ամսաթվից տարբերվող որեւէ այլ ամսաթվին կանխավճար կատարելու դեպքում փոխհատուցել Բանկին վերջինիս կողմից սահմանված գումարի այնպիսի չափով, որը պահանջվում է փոխհատուցել իրեն այն միջոցների ստացման համար, որոնք ստացվել են վճարման ամսաթվին ոչ համապատասխան (4-րդ հոդված, 4.04),

- վարկի շրջանակներում փոխառած բոլոր գումարներն օգտագործել ծրագրի իրականացման նպատակով (6-րդ հոդված, 6.01),

- ծրագիրն իրականացնել տեխնիկական նկարագրության համաձայն, որը Բանկի հաստատմամբ կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխությունների ենթարկվել եւ երաշխավորել ծրագրի ավարտը նշված վերջնաժամկետում (6-րդ հոդված, 6.02),

- երաշխավորել, որ ծրագրի իրականացման նպատակով եւ դրա հետ կապված սարքավորումները ձեռք են բերված, ծառայությունների մատուցումն ապահովված է, եւ աշխատանքները պատվիրված են

միջազգային բաց մրցույթների կամ այլ ընդունելի գնումների ընթացակարգերի միջոցով (6-րդ հոդված, 6.04),

- ապահովել Պայմանագրի 6-րդ հոդվածի 6.05 բաժնում ամրագրված շարունակական պարտավորությունների կատարումը (6-րդ հոդված, 6.05),

- հավաստիացնել եւ երաշխավորել Բանկին, որ կպահպանվեն Պայմանագրի 6-րդ հոդվածի 6.07 բաժնում նշված պայմանները,

- ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք Բանկը ողջամտորեն պահանջում է ծրագրի առնչությամբ ենթադրյալ կամ կասկածելի ցանկացած արգելված վարքագիծ հետաքննելու կամ վերացնելու համար (6-րդ հոդված, 6.09, ա) կետ, ii) ենթակետ),

- ապահովել, որ ծրագրի ծախսերն ամբողջությամբ ծածկելու համար (ներառյալ պարտքի սպասարկման ծախսերը, սակայն բացառելով ակտիվների արժեզրկումը) ցանկացած սակագնային բարձրացում հաստատվի ՀՀ համապատասխան մարմինների կողմից այն պայմանով, որ սակագները մնան մատչելիության սահմաններում (6-րդ հոդված, 6.12),

- վարել համապատասխան հաշվեմատյաններ ու գրանցամատյաններ, որոնցում ամբողջությամբ եւ ճշգրտորեն կարտացոլվեն բոլոր ֆինանսական գործարքները, այդ թվում ծրագրի հետ կապված ծախսերը (6-րդ հոդված, 6.14., բ) կետ),

- վճարել բոլոր հարկերը, տուրքերը, վճարները եւ ցանկացած բնույթի այլ պարտադիր վճարները, ներառյալ պետական տուրքը եւ գրանցման վճարները, որոնք ծագում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի կատարումից կամ իրականացումից (9-րդ հոդված, 9.01),

- հատուցել եւ Բանկին զերծ պահել որեւէ կորստից, որը հետեւանք է Հայաստանի Հանրապետության կողմից կատարված որեւէ վճարման կամ մասնակի մարման, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի հստակ սահմանված ձեւից տարբերվող ձեւով՝ չսահմանափակելով Պայմանագրի կամ կիրառելի իրավունքի ներքո Բանկի որեւէ իրավունք (9-րդ հոդված, 9.03, բ) կետ),

- Բանկի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու դեպքում՝ անմիջապես հետ վճարել Վարկը՝ ամբողջությամբ կամ մասամբ՝ Պայմանագրի ներքո կուտակված տոկոսների կամ այլ չվճարված գումարների հետ միասին՝ համաձայն Պայմանագրի 10-րդ հոդվածի 10.01 բաժնում ամրագրված դրույթների (10-րդ հոդված, 10.01),

- ֆիքսված տոկոսադրույքով տրանշի մասով՝ Պայմանագրի 10.01-րդ հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը կանխավճարի փոխհատուցման հետ միասին ցանկացած հիմնական գումարի մասով, որը ենթակա է նախապես վճարման (10-րդ հոդված, 10.03.Ա),

- լողացող տոկոսադրույքով տրանշի մասով՝ Պայմանագրի 10.01-րդ հոդվածի ներքո ցանկացած պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը՝ ընթացիկ արժեքի 0.15%-ին համարժեք գումարի հետ միասին, որը տարեկան կտրվածքով հաշվարկվում է կուտակվում է վճարման ենթակա գումարի վրա, որը պետք է նախապես վճարվի այնպես, ինչպես այն տոկոսը, որը կհաշվարկվեր եւ կկուտակվեր, եթե այդ գումարը մնար չմարված տրանշի մարման ժամանակացույցին համապատասխան, մինչեւ մարման ամսաթիվը (10-րդ հոդված, 10.03.Բ),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը Պայմանագրի ներքո իր իրավունքներից կամ պարտավորություններից որեւէ մեկը չհանձնի կամ չփոխանցի՝ առանց Բանկի կողմից նախապես ստացված գրավոր համաձայնության (12-րդ հոդված, 12.03):

4. Պայմանագրում նախատեսված են նաեւ կողմերի իրավունքների ու պարտականությունների պատշաճ կատարումն ապահովող այլ դրույթներ, ինչպես նաեւ Պայմանագիրը գործողության մեջ դնելու ընթացակարգեր:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ սոցիալական բնագավառում դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երեւանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Երեւանի ջրամատակարարման բարելավում» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ.

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1179

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան
2 դեկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երևանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2014 թվականի նոյեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը,

Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետագոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք» ֆինանսական պայմանագիրը (այսուհետ նաեւ՝ Պայմանագիր) Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ ստորագրվել է 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երեւանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին՝ Լյուքսեմբուրգում:

2. Պայմանագրով Եվրոպական ներդրումային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 25.500.000 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար) եվրո գումարի չափով վարկ (Վարկ)՝ Պայմանագրով նախատեսված ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորելու նպատակով:

Ծրագրի նպատակն է ապահովել իմելու ջրի կայուն եւ շարունակական մատակարարումը եւ բարելավել կոյուղաջրերի սանիտարահիգիենիկ հեռացումը համակարգի հիմնական կետերում, ինչպես նաեւ ապահովել կոյուղաջրերի մաքրման էկոլոգիապես առողջ եւ կայուն գործընթաց «Նոր ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում:

Ծրագիրը ներառում է.

- Վանաձորում եւ Գյումրիում ջրամատակարարման եւ կոյուղու օբյեկտների շարունակական վերանորոգումը, ինչպես նաեւ Լոռու եւ Շիրակի մարզերի գյուղական շրջաններում այդ օբյեկտների բարեկարգումը.

- Արմավիրի մարզում ջրամատակարարման եւ կոյուղու օբյեկտների շարունակական վերականգնումը, ինչպես նաեւ համատեղ մաքրման կայանի կառուցումն Արմավիրի (Մեծամոր, Նորապատ) քաղաքների համար,

- ջրամատակարարման եւ կոյուղաջրերի հավաքման համակարգեր Գեղարքունիքի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի մոտ 40 փոքր քաղաքներում եւ գյուղերում՝ «Հայջրմուղկոյուղի» ընկերության սպասարկման տարածքներում.

- փոքրածավալ միջոցառումներ փորձնական ծրագրի ձեւաչափով մոտ 560 գյուղում, որոնք նախկինում չէին սպասարկվում հինգ ջրային ընկերություններից որեւէ մեկի կողմից: Այն հիմնված է լինելու «Հայաստանում 560 ցրված համայնքների (գյուղերի) մատակարարման նպատակով ինտեգրված՝ տեխնիկական, սոցիալական, ինստիտուցիոնալ եւ առեւտրային մեխանիզմների կառուցման վերաբերյալ հայեցակարգային ուսումնասիրության» արդյունքների վրա, որոնք ակնկալվում են 2014 թվականին: Ազդակիր համայնքները կկցվեն

համապատասխան ջրային կոմունալ ծառայությանն իրենց տարածաշրջանում:

Ծրագիրն իրականացվելու է 2014-2018 թվականների ընթացքում:

3. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) վճարել յուրաքանչյուր տրանշի տոկոսները, հետվճարումները եւ այլ գանձումները եվրոյով.

բ) Վարկի շրջանակներում իր փոխառած բոլոր գումարներն օգտագործել Ծրագրի իրականացման նպատակով.

գ) երաշխավորել, որ Ծրագրի իրականացման նպատակով եւ դրա հետ կապված սարքավորումները ձեռք են բերված, ծառայությունների մատուցումն ապահովված է եւ աշխատանքները պատվիրված են միջազգային բաց մրցույթների կամ այլ ընդունելի գնումների ընթացակարգերի միջոցով՝ Պայմանագրով սահմանված կարգով.

դ) վճարել ողջ հիմնական գումարը, տոկոսը, փոխհատուցման գումարը եւ Պայմանագրի ներքո վճարման ենթակա մյուս գումարներն առանց որեւէ ազգային կամ տեղական հարկման նվազեցման.

ե) կրել բոլոր գանձումների եւ այլ ծախսերի վճարման պարտավորությունը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ տարադրամի փոխանակման գանձումները, որոնք առաջանում են Պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի նախապատրաստման, փոփոխման, կատարման, իրականացման եւ դադարեցման կամ Պայմանագրից կամ այլ համապատասխան փաստաթղթից հրաժարման, ինչպես նաեւ Վարկի համար որեւէ երաշխիքի փոփոխման, ստեղծման, կառավարման, իրականացման եւ իրացման առնչությամբ:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2014 թվականի նոյեմբերի 27-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Պայմանագրին:

5. Սույն գործի շրջանակներում ուսումնասիրելով իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն սահմանադրական դատարանում Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության՝ «Համայնքային ենթակառուցվածքներ II, Հայաստանի ջրամատակարարման եւ ջրահեռացման ենթակառուցվածք» ներդրումային ծրագրի 1-ին փուլն արդեն իսկ ավարտվել է, իսկ 2-րդ փուլի իրականացումն ընթացքում է, եւ դրա ավարտը նախատեսված է 2015 թվականին: Ծրագրի 3-րդ փուլով նախատեսված միջոցառումների իրականացման համար տրամադրվող 73.0 մլն եվրոյից 17.5 մլն եվրոն դրամաշնորհային միջոցներ են: Ծրագրի 3-րդ փուլում KfW բանկի (30.0

մլն եվրո վարկ, 2.5 մլն եվրո դրամաշնորհ) հետ իր մասնակցությունն է ունենալու նաև Եվրոպական ներդրումային բանկը (25.5 մլն եվրո վարկ): Ֆինանսավորում է նախատեսվել նաև Եվրոպական հարեւանության ներդրումային ծրագրի (15.0 մլն եվրո դրամաշնորհ) ֆոնդերից:

Համաձայն վերոհիշյալ բացատրության՝ Ծրագրով հատկացված միջոցների օգտագործման մասով աուդիտի իրականացում նախատեսված չէ: Սակայն Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների վերահսկումն իրականացվում է մրցույթով ընտրված գերմանական GITEC Consult GmbH կազմակերպության կողմից: «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» եւ «Նոր ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների լիազորություններն ստանձնած մասնավոր կառավարչի՝ գերմանական «Էմ Վի Վի դեկոն Ջի Էմ բի Էյջ (MVV-decon GmbH)», «Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի (MVV Energie AG)» եւ հայկական «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունների կոնսորցիումի, որը 2009թ. ստանձնել է ընկերությունների կառավարումը, իսկ 2014թ. հունվարից կոնսորցիումի կազմում ընդգրկվել է նաև «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորություններն ստանձնած ֆրանսիական «ՍԱՌԻՌ Ս.Ա.Ս. (SAUR S.A.S.)» կազմակերպությունը, որի գործառնությունների մեջ է մտնում նաև ներդրումային ծրագրերի իրականացման վերահսկումը: Պայմանագրային կառավարչի գործողության տարեկան արդյունքները ենթարկվում են աուդիտի՝ տեխնիկական մասով՝ FICHTNER, իսկ ֆինանսական մասով՝ Grant Thornton կազմակերպությունների կողմից:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2014 թվականի հունիսի 24-ին՝ Երեւանում եւ 2014 թվականի հունիսի 27-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Ջրային ոլորտի համայնքային ենթակառուցվածք» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ .

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1180

2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ «ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ» N8388-AM ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 դեկտեմբերի 2014 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Գալստյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Լրացուցիչ ֆինանսավորում Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի համար» N8388-AM վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ե գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2014 թվականի նոյեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային քանկի միջեւ «Լրացուցիչ ֆինանսավորում Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի համար» N8388-AM վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին: Ըստ Համաձայնագրի Վերակառուցման եւ զարգացման միջազգային քանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետության բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ ցանցերի հուսալիության բարձրացման ու թողունակության մեծացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով Համաձայնագրում սահմանված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) տրամադրում է 40.000.000 ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ 25 տարի ժամկետով, որից 10-ը՝ արտոնյալ: Վարկի փակման ժամկետը 2018 թվականի դեկտեմբերի 31-ն է:

2. Համաձայնագրի բաղկացուցիչ մաս են կազմում Հավելվածը եւ թվով երեք առդիրները, որոնցում տրված են Ծրագրի նկարագրությունը, Ծրագրի իրականացման կարգը, վարկի մարման ժամանակացույցը եւ սահմանումները: Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված է Ծրագրի նպատակը, այն է՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրահաղորդման ցանցերի հուսալիության ու կարողության բարելավումը եւ կառուցվածքը, որը ներառում է «Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդումը եւ «Տեխնիկական աջակցություն» մասերը: Համաձայնագրի 2-րդ առդիրում նշված են Ծրագրի իրականացման միջոցներն ու պայմանները, իսկ 3-րդ առդիրում Վարկի մարման ժամանակացույցը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վճարել սկզբնական վճար Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով, այն է՝ 100.000 ԱՄՆ դոլար,
- տոկոսադրույքի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարել տոկոսագումար, որը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված Ուղղորդիչ տոկոսադրույքին, որին գումարվում է Փոփոխական տարբերությունը (variable spread)՝ պայմանով, որ Վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա որեւէ մասի փոխարկման դեպքում Վարկառուի կողմից Փոխարկման ժամանակահատվածում այդպիսի գումարի վճարման ենթակա տոկոսագումարը կորոշվի Բանկի կողմից 2010 թվականի հուլիսի 31-ին ընդունված «Վերակառուցման եւ զարգացման միջազգային քանկի վարկերի տրամադրման ընդհանուր պայմանները» (այսուհետ՝ Ընդհանուր պայմաններ) Հոդված IV-ի դրույթների համաձայն,
- կիսամյակային մուծումներով, սկսած 2024 թվականի օգոստոսի 15-

ից մինչև 2038 թվականի օգոստոսի 15-ը յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը 3.33%, իսկ 2039 թվականի փետրվարի 15-ին՝ 3.43% մասնավճարով,

- իրականացնել Ծրագիրը «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ԲԷՑ) միջոցով՝ վերջինիս հետ կնքելով վարկային գումարի տրամադրման վերաբերյալ օժանդակ համաձայնագիր (այսուհետ՝ Օժանդակ համաձայնագիր) Բանկի կողմից հաստատված դրույթներին համապատասխան,

- Օժանդակ համաձայնագրով սահմանված Հայաստանի Հանրապետության իրավունքներն իրականացնել այնպես, որ պաշտպանվեն Հայաստանի Հանրապետության եւ Բանկի շահերը եւ կատարվեն Վարկի նպատակները, ինչպես նաեւ առանց Բանկի նախնական հաստատման՝ չփոխանցել, չփոփոխել, անվավեր չճանաչել կամ չհրաժարվել Օժանդակ համաձայնագրից կամ դրա որեւէ դրույթից,

- պահպանել եւ երաշխավորել, որ ԲԷՑ-ը պահպանի Ծրագրի կատարման ընթացակարգերի վերաբերյալ 2011 թվականի ապրիլի 18-ին ԲԷՑ-ի կողմից կազմված, հաստատված եւ թարմացված ձեռնարկը (այսուհետ՝ Գործառնական ձեռնարկ), կատարի դրա ներքո ստանձնած իր բոլոր պարտավորությունները եւ չփոխանցի, չփոփոխի, անվավեր չճանաչի կամ չհրաժարվի Գործառնական ձեռնարկից՝ առանց Բանկից նախնական համաձայնություն ստանալու,

- ապահովել Ծրագրի իրականացումը «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի վարկերի միջոցով ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքը եւ կոռուպցիան կանխելու եւ դրա դեմ պայքարելու ուղեցույցների» դրույթների համաձայն,

- Համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ ապահովել եւ նաեւ ԲԷՑ-ից պահանջել ապահովել Ծրագրի բոլոր միջոցառումների նկատմամբ ըստ հանգամանքների, Բնապահպանական կառավարման պլաններում (ԲԿՊ), Վերաբնակեցման քաղաքականության շրջանակում (ՎՔՇ) եւ Վերաբնակեցման գործողությունների ծրագրում (ՎԳԾ) սահմանված չափորոշիչների, քաղաքականության, ընթացակարգերի ու մեխանիզմների կիրարկումը,

- ապահովել կամ ԲԷՑ-ից պահանջել ապահովել Ծրագրի առաջընթացի վերահսկումն ու գնահատումը եւ պատրաստել Ծրագրի հաշվետվություններ Ընդհանուր պայմանների դրույթներին համապատասխան եւ Բանկի համար ընդունելի ցուցանիշների հիման վրա,

- վարել կամ պահանջել ԲԷՑ-ից վարել ֆինանսական կառավարման համակարգ Ընդհանուր պայմանների պահանջներին համապատասխան,

- պատրաստել կամ պահանջել ԲԷՑ-ից պատրաստել յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ օր անց, եւ Բանկին ներկայացնել Բանկի պահանջները բավարարող ձեւաչափով եւ բովանդակությամբ միջանկյալ, աուդիտ չանցած Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ընդգրկում են տվյալ եռամսյակը,

- ապահովել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ Ընդհանուր պայմանների դրույթների համաձայն,

- ապահովել, որպէսզի Ծրագրի համար պահանջվող եւ Վարկի հասույթներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերվեն Բանկի կողմից համապատասխանաբար 2010 եւ 2011 թվականներին հրապարակված «Ուղեցույցներ. Համաշխարհային բանկի փոխառուների կողմից Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի փոխառությունների եւ Միջազգային զարգացման ընկերակցության վարկերի եւ դրամաշնորհների շրջանակում կատարվող՝ ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների» (Գնումների ուղեցույցներ) դրույթներին համապատասխան,

- ապահովել, որպէսզի Ծրագրի համար պահանջվող եւ Վարկի հասույթներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերվեն 2011 թվականի հունվարով թվագրված՝ «Ուղեցույցներ. Համաշխարհային բանկի Վարկառուների կողմից ՎՋՄԲ վարկերի ու ՄՁԸ վարկերի եւ դրամաշնորհների շրջանակներում կատարվող՝ ապրանքների, աշխատանքների եւ ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ» ուղեցույցի պահանջներին եւ Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործը քննության նախապատրաստելու ընթացքում քննության առարկա վարկային համաձայնագրի վերաբերյալ ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից 2014 թվականի նոյեմբերի 19-ին ներկայացված բացատրության մեջ նշվել է, որ Ծրագրով նախատեսվում է փոխարինել «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» եւ «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների 30 եւ ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող ֆիզիկապէս եւ բարոյապէս մաշված սարքավորումները:

5. Սույն Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց.

1. 2014 թվականի օգոստոսի 6-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Լրացուցիչ ֆինանսավորում Հայաստանի էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագրի համար» N8388-AM վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ.

2 դեկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1181

